

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: info@artsakhlis.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



Ա.Գ. ՆԱՆԱԳՅՈՒՅՑԱՆ

գ. գ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՆԳԱՍՆԿԵՐԸ



Ստեփանակերտ 2014

ԼՂՀ ԿՈԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌՑԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

*Սիրանոյշ գերասիսի նսսագըլիքան
գազանե գեղրգիհ ՄԱՐԳԱՐԵԱՆ*

ԼԵՇՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺԱՆԳԱՍՆԿԵՐԸ

ԱՍԵՓԱՆԱԿԵՐԸ
ԱՐՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2015

ՀՏԴ 582.28

ԳՄԴ 28.591

Ն 300

Մենագրությունը իրատարակության է Երաշխավորել՝

- *Լեռնային Ղարաբաղի հանրապետության կրթության և գիտության նախարարությունը*
- *Արցախի պետական համալսարանի գիտական խորհուրդը*

Գրախոս՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լ.Լ. Օսիայան

Նանազյույյան Ս., Գ. Մարգարյան

Ն 300 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
ժանգանկերք/ Ս. Նանազյույյան, Գ. Մարգարյան;
Լեռնային Ղարաբաղի հանրապետության կրթության
և գիտության նախարարություն. -Ստեփանակերտ:
ԱրՊՀ, 2015.- 140 էջ:

Գրքում ներկայացված է ԼՂՀ-ում հայտնաբերված ժանգանկերի տեսակային կազմը և զարգացման առանձնահատկությունները: Ուսումնասիրված տարածքում նոյնականացվել են ժանգանկերի 130 տեսակներ, որոնցից 44-ը նկարագրվել են ԼՂՀ-ում առաջին անգամ, իսկ 18-ը մինչ այժմ չեն նշվել ՀՀ միկրիոտոսայի կազմում: Առաջին անգամ կազմվել է ԼՂՀ-ում հայտնաբերված ժանգանկերի կոնսուլտ, որը ներառում է նկարագրված տեսակների վերաբերյալ ամփոփ տեղեկություններ: Հավելվածում ներկայացվում են տնտեսագետ կարևոր նշանակություն ունեցող կամ ԼՂՀ տարածքում առավել հաճախ հանդիպող ժանգանկերով պիտօնաբառերի նկարներ:

Գիրքը նախատեսված է սնկաբանների, բուսաբանների, գյուղատնտեսության բնագավառում աշխատողների, ուսանողների, ինչպես նաև ժանգանկերի ուսումնասիրության և պայքարի միջոցների հարցերով զբաղվող մասնագետների համար:

ՀՏԴ 582.28

ԳՄԴ 28.591

ISBN 978-9939-1-0203-0 © Ս. Նանազյույյան, Գ. Մարգարյան, 2015

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բազիդիավոր սնկերի շարքում ժանգասնկերն (կարգ Uredinales) իրենց կենսաբանական առանձնահատկություններով յուրահատող խումբ են կազմում: Այս սնկերի ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է, քանի որ ժանգասնկերը լինելով օբյեկտ մակարույժներ, հեշտությամբ վարակում են բազմաթիվ վայրի և մշակովի բույսերի: Տնտեսապես մեծ նշանակություն ունեցող տերբույսերի ախտահարվածության արդյունքում նվազում է վարակված բույսերի բերքատվությունը, դեկորատիվ նշանակությունը, սննդային որակը, կերպային արժեքը և այլն:

Մշակովի բույսերի վրա զարգացող լայն տարածում ստացած “ժանգ” հիվանդությունը, որի հարուցիչները ժանգասնկերն են, սկսվել են բազմակողմանի ուսումնասիրվել 19-րդ դարի կեսերից աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում Հարավային Կովկասում և Հյայաստանում: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) որոշ շրջաններում հանդիպող ժանգասնկերի վերաբերյալ սակավաթիվ տեղեկություններ կարելի է գտնել Վ.Ի. Ույանիշչևի աշխատություններում: ԼՂՀ բուսական աշխարհը և բնակլիմայական պայմանները բարենպաստ են մակարույժ սնկերի՝ այդ թվում ժանգասնկերի զարգացման համար:

Ներկայացված աշխատանքի մեջ ամփոփված են ԼՂՀ-ում տարածված ժանգասնկերի վերաբերյալ տեղեկությունները:

Գիրքը կազմված է 5 գլխից և հավելվածներից: Առաջին գլխում տեղեկություններ են ներկայացվում օրգանական աշխարհում սնկերի թագավորության տեղի վերաբերյալ սկսած 20-րդ դարի սկզբից: Այնուհետև պարզաբանվում է ժանգասնկերի տեղը սնկերի թագավորությունում և տրվում ժանգասնկերի դասակարգումը: Համառոտ ներկայացվում է ժանգասնկերի ուսումնասիրության պատճությունն աշխարհի տարբեր երկրներում, ավելի ընդգրկուն նկարագրվում է ժանգասնկերի ուսումնասիրվածությունը ՀՀ-ում և ԼՂՀ-ում:

Երկրորդ գլխում հակիրձ նկարագրվում են ուսումնասիրվող տարածքի բնակլիմայական պայմանները՝ ռելիեֆը, կլիման և հողաբուսական ծածկը:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում ներկայացվում է ԼՂՀ ժանգասնկերի (130 տեսակ) կարգաբանական և էկոլոգիական վերլուծությունը: Երկրորդ ենթագլխում նկարագրվում են հիվանդության դրսևորման ձևերը և ժանգասնկերին բնորոշ առանձնահատկու-

թյունները, որտեղ ԼՂՀ-ում հայտնաբերված ժանգասնկերը խմբավորվել են ըստ տեր-բույսերի մասնագիտացման՝ միատերերի և տարատերերի, ինչպես նաև՝ ըստ զարգացման փուլերի: Երրորդ ենթագիշում ներկայացվում է ժանգասնկերի տարածվածությունն ըստ տեր-բույսերի ընտանիքների (37 ընտանիք, 217 ախտահարված բույս): Հայտնաբերված ժանգասնկերը խմբավորվել են նաև ըստ տեր-բույսերի կենսաձևերի, ինչպես նաև ըստ տնտեսական նշանակության: Ախտահարված տեր-բույսերի 217 տեսակներից 94-ն առանձնացվել են ելնելով դրանց տնտեսական նշանակությունից:

Չորրորդ գլուխ պարզաբանվել է ժանգասնկերի տարածվածությունն ըստ ԼՂՀ շրջանների, կատարվել է համեմատական վերլուծություն, բացահայտվել ԼՂՀ և << բիոտաներում հայտնաբերված ժանգասնկերի տեսակային կազմի համապատասխանության աստիճանն ու տարրերության գործակիցը:

Ներնային Ղարաբաղի Հանրապետությունում տարածված ժանգասնկերի կոնսպեկտում /5-րդ գլուխ/ ներկայացվում են ԼՂՀ-ում հայտնաբերված ժանգասնկերի 130 տեսակներն ըստ ընտանիքների, որտեղ ցեղերը և տեսակները դասավորված են այբենական կարգով, միաժամանակ տրվում են հոմանիշները և նշված սնկով ախտահարված բույսերի լատիններեն անվանումները, հավաքման վայրը և ժամանակահատվածը: Կոնսպեկտում ընդգրկված են ախտահարված բույսերի անվանումները, դրանց հայտնաբերման վայրերը իին ու նոր անվանումներով, ինչպես նաև այն սնկատեսակները, որոնք նշվել են մինչ մեր ուսումնասիրությունները: ԼՂՀ-ում առաջին անգամ հայտնաբերված տեսակների վերաբերյալ ներկայացվում է ամփոփ նկարագիր:

Ներնային Ղարաբաղի Հանրապետության ժանգասնկերի հայտնաբերման ուղղությամբ տարվող նպատակային ուսումնասիրություններն իրականացվել են 2005-2010թթ. Վեգետացիայի ողջ ընթացքում կազմակերպված արշավների ժամանակ: Ուսումնասիրվել են ԼՂՀ տարրեր շրջաններ (Ասկերան, Մարտակերտ, Մարտունի, Շուշի, Հադրութ, Քաշաթաղ) և Ստեփանակերտ քաղաքի մերձակայքը: Հետազոտման նյութ են հանդիսացել արշավների ընթացքում հավաքված ժանգասնկերով ախտահարված 315 բուսական նմուշները, որոնք պահպանվում են Երևանի պետական համալսարանի բուսաբանության ու սնկաբանության և Արցախի պետական համալսարանի թիմիայի և կենսաբանության ֆակուլտետի կենսաբանության ամբիոնների հերթարիումներում:

Գ?? ?? Ի. ?? Գ?????????
?????????????????????????????????

1.1. Ժամգասնկերի կարգաբանությունը

XX դարի վերջին տասնամյակներում սնկերի դասակարգման մեջ արմատապես փոխվել են ինչպես հետազոտման մեթոդները և մեթոդոլոգիան, այնպես էլ համակարգի կառուցվածքը (Сидорова, 2003):

Սնկերն իրենց բնորոշ մի շարք առանձնահատկություններով դժվարություններ են առաջացնում դասակարգման հարցում: Դա պայմանավորված է սնկերի համեմատաբար աղքատ ձևաբանությամբ, քիչ թվակազմով, շատ հաճախ նույնիսկ ֆիլոգենետիկորեն հեռու մերկայացուցիչների միջև զուգամետությունների համապատասխանությամբ: Ֆիլոգենետիկ կառուցվածքների մեկնաբանությունների դժվարությունը կապված է նաև հնէասնկաբանական նյութի սակավության հետ (Pirozynski, 1976):

Սնկերի դասակարգման համակարգի ստեղծման և կատարելագործման ընթացքում օգտագործվել են տարրեր մեթոդոլոգիական սկզբունքներ, որոնք գերակայել են տարրեր ժամանակաշրջաններում: Դրանցից են համեմատական մորֆոլոգիական, օնտոգենետիկական և ուլտրակառուցվածքային մեթոդները: Վերջիններս ուղենչային էին մինչև 20-րդ դարի վերջը (Luttrell, 1951, 1955; Barr, 1980; Մորաց Ալլաս, 1989; Dick, 1997; Cavalier-Smith, 1998):

Անցյալ դարի վերջին սնկերի դասակարգման մեջ կիրառվում էին նաև մոլեկուլային մեթոդները: Մոլեկուլային դասակարգման մեթոդներն, անկասկած, ունեն առավելություններ. նախ՝ դրանք օբյեկտիվ են, թույլ են տալիս կուտակել նյութեր տարրեր տեսակների մակրոմոլեկուլների սեքվենավորման վերաբերյալ և ստեղծել տվյալների բազա (Eriksson, 1995; Taylor et al., 1995): Անհրաժեշտ է նշել մոլեկուլային մակարդակում զուգամետության հազվադեպությունը, ինչը շատ կարևոր է սնկերի դասակարգման համար (Антоноս, 2000):

Վերջին տարիների ընթացքում տվյալների կուտակման արդյունք բոլոր մակարդակներում սնկերի ավանդական տաքսոնների աստիճանական ծևափոխումն է՝ նրանց պոլիֆիլիայի և պարաֆիլիայի բացահայտման հետևանքով:

Օրգանական աշխարհի համակարգում սնկերի տեղի նաև նաև պատկերացում կազմելու համար այդուսակի տեսքով ներկայացվում է համակարգի զարգացման ընթացքը (աղ.1):

Ինչպես երևում է այդուսակ 1-ից, 1990-ական թվականների սկզբից վերջնականացել պատկերացում է ձևավորվել սնկերի պոլիֆիլիայի նաև: Բոլոր մակրոհամակարգերում սնկերն առանձնացվում են որպես ինքնուրույն թագավորություն: Տարբեր հեղինակների մոտ դրանք տարբերվում են միայն ծավալով: Հեղինակների մեծամասնության արդի պատկերացումներով (Cavallier-Smith, 1987, 1998; Barr, 1992; Hawksworth et al., 1995; Kendrick, 2001) սնկերի թագավորությունը (Mycota, Fungi, Mycetalia) համապատասխանում է մի շարք համակարգերում բերված Eumycota բաժնին և ընդգրկում է ողջ Chytridiomycota-ն թացանությամբ մտրակագործելով:

Այդուսակ 1 Սնկերի համակարգերի ռետրոսպեկտիվան

Kreisel, 1969	Shaffer, 1975	Olive, 1975
Myxomycota	Eumyceteae	Protista
Oomycetes	Chytridiomycota	Mycetozoa
Hypochytriomycetes	Chytridiomycetes	
Chytridiomycetes (թացաված են սնկերի համակարգից որպես սնկամաման օրգանիզմներ)	Zygomycota	Fungi
Eumycota	Zygomycetes	Pantomemomycota
Zygomycetes	Dicaryomycota	Oomycetes
Endomycetes	Ascomycetes	Hypochytridiomycetes
Ascomycetes	Basidiomycetes (14	Eumycota
Basidiomycetes	կարգերով առանց ենթակարգերի բաժանման)	Opistomastigomycotina
Endomycetes imperfecti		Chytridiomycetes
Ascomycetes imperfecti		Amastigomycotina
Basidiomycetes imperfecti		Zygomycetes
		Ascomycetes
		Basidiomycetes
		Deuteromycetes

Աղ. 1, շարունակություն

V. Arx, 1981	Hawksworth et al., 1983	Cavalier-Smith, 1987
Mycota Myomycota Acrasiomycetes Plasmodiophoromycetes Labyrinthulomycetes Oomycota Oomycetes Hypochytriomycetes Chytridiomycota Chytridiomycetes Eumycota Zygomycetes Endomycetes Ustomycetes Ascomycetes Basidiomycetes Deuteromycetes	Myomycota Ceratiomyomycetes Dictyosteliomycetes Acrasiomycetes Myomycetes Plasmodiophoromycetes Labyrinthulomycetes Eumycota Mastigomycotina Chytridiomycetes Hypochytriomycetes Oomycetes Zygomycotina Zygomycetes Trichomycetes Ascomycotina (առանց դասերի բաժանման) Basidiomycotina Hymenomycetes Gasteromycetes Urediniomycetes Ustilaginomycetes Deuteromycotina Coelomycetes Hyphomycetes	Protozoa Միբոնմիցեսներ (4խումբ) Chromista Heterokonta Pseudofungi Fungi Archamycota Chytriamycotina Spizomycetes Rumpomycetes Allomycetes Zygomycotina Trichomycetes Zygomycetes Ascomycota Euascomycotina Laboulbeniomycotina Endomycota Basidiomycota Uredomycotina Uredomycetes Ortomycotina Septomycetes Ustomycetes Gelimycetes Holobasidiomycetes
Kreisel, 1988	Barr, 1992	Mueller, Loffler, 1992
Myomycota Acrasiomycetes Ceratiomyomycetes Myomycetes Plasmodiophoromycetes Protosteliomycetes Labyrinthulomycota Labyrinthulomycetes Oomycota Hypochytriomycetes Oomycetes	Protozoa Myomycota Plasmodiophoromycota Chromista Heteroconta Pseudomycotina Oomycetes Hypochytriomycetes Labyrinthista Labytinthulea	Protoctista (սնկանման օրգանիզմներ) Myomycota Plasmodiophoromycota Labyrinthulomycota Oomycota Hypochytriomycota Chytridiomycota Fungi Zygomycota

Աղ. 1, շարունակություն

Chytridiomycota Chytridiomycetes Eumycota Ascomycetes Basidiomycetes Endomycetes Teliomycetes Trichomycetes Ustomycetes Zygomycetes (Deuteromycetes)	Eumycota Ascomycota Basidiomycota Chytridiomycota Zygomycota	Zygomycetes Trichomycetes Ascomycota Endomycetes Ascomycetes Basidiomycota Ustomycetes Basidiomycetes Deuteromycota
Hawksworth et al., 1995	Margulis, Schwartz, 1998	Kendrick, 2001
Protozoa Acrasiomycota Dictyosteliomycota Myxomycota Myxomycetes Protosteliomycetes Plasmodiophoromycota Chromista Hypochytridiomycota Labyrinthulomycota Oomycota Fungi Chytridiomycota Zygomycota Trichomycetes Zygomycetes Ascomycota (առանց դասերի բաժանման) Basidiomycota Basidiomycetes Teliomycetes Ustomycetes	Protoctista Ամերանմաներ Myxomycota Տարամտրակավորներ Plasmodiophoromycota Oomycota Hypochytridiomycota Անցեստրալ սնկեր Chytridiomycota Fungi Ascomycota Basidiomycota Zygomycota	Protozoa Myxostelida Dictyostelida Labyrinthulida Plasmodiophorida Chromista Hypochytridiomycota Oomycota Eumycota Chytridiomycota Zygomycota Dikaryomycota Ascomycotina Basidiomycotina

Դ. Հառկանորդի, Պ. Կիրկի և ուրիշների (Hawksworth, Kirk et al., 1995) համահեղինակությամբ հրատարակված բառարանում ներկայացված դասական տարրերակում սնկերի թագավորությունում ընդգոլված է 4 բաժին՝ Chytridiomycota, Zygomycota, Ascomycota և Basidiomycota:

Մնկերի մակրոհամակարգը, բացառությամբ S. Կավայե-Սմիթի (Cavalier-Smith, 1998) կողմից առաջադրված համակարգում ընդգրկված տարսնների, վերջին տարիներին չի ենթարկվել նշանակալի փոփոխությունների (աղ. 2):

Աղյուսակ 2

Մնկերը և սմկամման օրգանիզմները S. Կավայե-Սմիթի համակարգում (Cavalier-Smith, 1998)

MYCOTA
Eumycota
Archamycota
Dictyomycotina
Chyridiomycetes
Rumpomycetidae (կարգեր Chytridiales, Monoblepharidales)
Spizomycetidae (կարգեր Spizellomycetales, Neocallimastigales)
Enteromycetes (կարգեր Eccrinales, Amoebidiales)
Melanomycotina
Allomycotina
Allomycetes (կարգեր Blastocladiales, Coelomomycetales)
Zygomycotina
Eozymomycetia
Bolomycetes (կարգ Basidiobolales)
Glomomycetes (կարգեր Glomales, Endogonales)
Neozygomyctetia
Zygomycetes
Mucoromycetidae (կարգեր Mortierellales, Mucorales)
Meromycetidae (կարգեր Dimargaritales, Kikxellales, Cunninghamellales)
Zoomycetes
Entomycetidae (կարգեր Entomophthorales, Zoopagales)
Pedomycetidae (Ենթակարգ Trichomycetalia, կարգեր Harpellales, Asellariales, Ենթակարգ Pyxomycetalia, կարգեր Laboulbeniales, Pyxidiophorales)
Microsporidia
Neomycota
Ascomycota
Hemiascomycotina
Taphrinomycetes (կարգեր Taphrinales, Schizosaccharomycetales,

Աղ. 2, շարունակություն

Protomycetales, Pneumocystidales)
Geomycetes (կարգ Geosiphonales)
Endomycetes (կարգ Sacharomycetales)
Dipomycetidae
Saccharomycetidae (կարգ Saccharomycetales)
Euascomycotina
Discomyctes
Calycomycetidae
Lecomyctidae
Pecomycetidae
Pyrenomycetes
Verrucomycetidae
Ostiomyctidae
Loculomycetes
Dendromycetidae
Loculoascomycetidae (կարգեր Dothideales, Pleosporales)
Plectomycetes
Basidiomycota
Septomycotina
Septomycetes
Sporidiomycetidae (կարգեր Sporidiales, Erythrobasidiales)
Uredomycetidae (կարգեր Uredinales, Septobasidiales)
Orthomycotina
Hemibasidiomycetia
Ustomycetes (կարգեր Ustilaginales, Tilletiales)
Hymenomycetia
Gelimycetes
Tremellomycetidae (կարգ Tremellales)
Dacrymycetidae (կարգ Dacrymycetales)
Auromycetidae (կարգ Auriculariales)
Homobasidiomycetes
Clavomycetidae
Pileomycetidae

Բազիդիոմիկոտա բաժնում ներառված են աշխարհում հայտնի բոլոր սնկերի մեկ երրորդը:

Բազիդիոմիցետների մակրոհամակարգը վերջին տասնամյակ-ներում ենթարկվել է լուրջ փոփոխությունների (աղ. 3):

Աղյուսակ 3
Բազիդիոմիցետների դասակարգման մոտեցումները

Martin, 1961	Gaeumann, 1964	Talbot, 1971
Basidiomycetes	Basidiomycetes	Basidiomycotina
Homobasidiomycetidae Heterobasidiomycetidae	Holobasidiomycetidae Phragmobasidiomycetidae	Holobasidiomycetes Phragmobasidiomycetes Teliomycetes
Ainsworth, 1971	Kreisel, 1983	Hawksworth et al., 1983
Basidiomycotina	Basidiomycotina	Basidiomycotina
Hymenomycetes Gasteromycetes Teliomycetes	Teliomycetes Ustomycetes Basidiomycetes Heterobasidiomycetidae Hymenomycetidae Gasteromycetidae	Urediniomycetes Ustilaginomycetes Hymenomycetes Gasteromycetes
Wells, 1994	Swann, Taylor, 1995a,b	Hawksworth et al., 1995
Basidiomycota Teliomycotina Ustomycotina Basidiomycotina Heterobasidiomycetes Basidiomycetidae Tremellomycetidae Homobasidiomycetes	Basidiomycota Urediniomycetes Uredinales Septobasidiales Sporidiales Ustilaginomycetes Hymenomycetes Tremellomycetidae Tremellales Filobasidiales Hymenomycetidae Auriculariales Dacrymycetales (աֆինֆրոսայիններ, ազարիկայիններ, զսստրոմիցետներ)	Basidiomycota Teliomycetes Uredinales Septobasidiales Ustomycetes Platygloeales, Sporidiales Cryptobasidiales Exobasidiales Ustilaginales Graphiolales Cryptomycocolacales Basidiomycetes Holobasidiomycetidae (27 կարգերվ) Phragmobasidiomycetidae (5 կարգերվ)
Petersen, 2001		
Basidiomycota Teliomycotina Teliomycetes Uredinales Platygloeales Atractiellales Ustilaginomycotina Ustilaginomycetes Ustilaginales Tilletiales Basidiomycotina Heterobasidiomycetes (5 կարգերվ) Homobasidiomycetes (21 կարգերվ)	Septobasidiales Exobasidiales	

համակարգեր՝ Homobasidiomycetidae և Heterobasidiomycetidae (Martin, 1961) կամ Holobasidiomycetidae և Phragmobasidiomycetidae (Gaeumann, 1964) ենթադասերով: Բազիդիոմիցետների համակարգում 70-ական թվականների սկզբին առաջարկվել է նոր Teliomycetes դասը, որը միավորում է համաստի շրջանում գտնվող սպորներից զարգացող բազիդավոր սմվերին (Talbot, 1971):

Գ. Կրայգելը (Kreisel, 1983) Basidiomycotina ենթաբաժինը բաժանել է 3 դասի՝ Teliomycetes (ժանգասնկեր), Ustomycetes (մրիկասնկեր և մոտ խմբեր) և Basidiomycetes (այլ խմբեր): Նոյն թվականին լուս է տեսել Դ. Հաուկուրդի, Բ. Սաթոնի և Զ. Այսուորդի համահետինակությամբ աշխատությունը (Hawksworth et al., 1983), որում ներկայացված համակարգը շատ մոտ է Գ. Կրայգելի առաջարկածին, սակայն տարբերվում է դասերի անվանումներով (օրինակ, Urediniomycetes = Teliomycetes):

Հարկ է նշել, որ վերջին տարիներին ներկայացված բոլոր համակարգերը Գ. Կրայգելի առաջարկած համակարգի վերամշակումներ են (Swann, Taylor, 1993, 1995a,b; Wells, 1994; Hawksworth, Sutton, Ainsworth, 1995; Petersen, 2001; Сидорова, 2003 և ուրիշներ):

Ժանգասնկերը (կարգ Uredinales) Urediniomycetes դասում համարվում են մոնոֆիլիտիկ հատկանիշներով կարգ (Swann et al., 1998; Sjamsuridzal et al., 1999): Չնայած ընտանիքների միջև ազգական կապերը դեռևս ամրողությամբ պարզաբանված չեն, ընտանիքների ներսում ցեղերի բաժանումները նկատելի մեկուսացված են և համեմատաբար կայուն (Swann et al., 2001):

XX դարի սկզբում ցեղի մակարդակով ժանգասնկերի կարգի դասակարգման հարցում գերակշռող էին մորֆոլոգիական մոտեցումները և հիմնական ուշադրությունը դարձվում էր միայն տեղենորֆի կառուցվածքին: Այդ պատճառով դասակարգման սկզբնական մշակումներին արհեստական էին (Dietel, 1897, 1900; Sydow, Sydow, 1902 - 1924): Այդ շրջանում ժանգասնկերի դասակարգման համակարգում որոշ առաջնարար նտորեց Զ. Արթուրը (Arthur, 1904): Stiñhusaporiների հատկություններն արժենորելով՝ նա կարևորում էր սպերմագոննիումների դերը, որոնք համարվում են գենետիկորեն հաստատուն սպորատվության ձևեր: Ի դեպ, Զ. Արթուրը մինչև Զ. Կրեյշիի ուսումնասիրությունները (Craigie, 1927) ցույց տվեց ժանգասնկերի զարգացման կենսացիկլում սպերմագոննիումների յուրահատուկ դերը սեռական զարգացման գործընթացում, ինչը բազմից շեշտվել է նաև այլ հեղինակների կողմից (Hunter, 1927,

1936; Faull, 1929, 1938; Kamei, 1940; Thirumalachar, Cummins, 1949; Thirumalachar, 1950, 1960 և ուրիշներ): Արդյունքում՝ Զ. Արթուրի (Arthur, 1906) առաջարկած դասակարգման համակարգը հիմնված է եղել ոչ միայն տելիոսպորների, այլ նաև սպերմագրնիումների մորֆոլոգիայի վրա: Ինչ վերաբերում է ժանգասնկերի կարգի բաժանմանն ընտանիքների, ապա այստեղ ընտանիքների քանակի և դրանց սահմանների մասին միասնական կարծիք չկա (Ազբукինա, 2005):

Կարգաբանական հատկանիշները, որոնք կիրառվել են ժանգասնկերի դասակարգման ժամանակ, ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Uredinales կարգի սնկերի կարգաբանական հատկանիշներն ըստ Զ.Ս. Ազբուկինայի (Ազբукինա, 1999)

Հ.հ.	Հատկանիշ	Հեղինակ
1	Սպորատվության ձևը, զարգացման ցիկլերը և դրանց տերմինարանությունը՝ դիտարկված մորֆոլոգիայի և օնտոգենեզի տեսանկյունից	Cummins, 1959; Hiratsuka, 1965, 1973; Laundon, 1967 a, b, 1974; Savile, 1968; Ազբուկինա, 1970, 1974, 1999; Holm, 1973, 1984; Hennen, Buritica, 1980
2	Սպերմագրնիումների կառուց- վածքները: Առանձնացված է սպերմագրնիումների 12 մորֆոլոգիական տիպեր՝ միավորված 6 խմբերում	Hiratsuka, Cummins, 1963; Hiratsuka, Hiratsuka, 1980
3	Սպոր առաջացնող հիմքային բջիջների կառուցվածքը	Thirumalachar, Cummins, 1949
4	Տելիոսպորների մորֆոլոգիան և օնտոգենեզը: Ըստ տելիոսպորների կառուցվածքի՝ առանձնացված են 4 խմբեր	Hiratsuka, Sato, 1983; Hiratsuka, 1988
5	Եղիումների մորֆոլոգիան և օնտոգենեզը: Հաստատված են եղիումների 14 մորֆոլոգիական տիպեր	Hiratsuka, 1965, 1968; Sato, Sato, 1982, 1984, 1985

Ժանգասնկերի դասակարգման հարցում որոշ հեղինակներ (Cummins, 1959; Hiratsuka, 1965, 1973; Laundon, 1967 a, b, 1974; Savile, 1968; Ազբուկինա, 1970, 1974, 1999; Holm, 1973, 1984; Hennen, Buritica, 1980) կարգաբանական հատկանիշների թվում կարևորել են սպորատվության ձևերը, զարգացման ցիկլերը և դրանց տերմինության մորֆոլոգիայի ու օնտոգենեզի տեսան-

Կյունից: Յ. Հիրացուկան և Գ. Կամինսը (Hiratsuka, Cummins, 1963; Hiratsuka, Hiratsuka, 1980) առաջնային են համարել սպերմագոնիումների կառուցվածքը, Յ. Հիրացուկան և Բ. Սաթոն (Hiratsuka, Sato, 1983; Hiratsuka, 1988)՝ էցիումների, ինչպես նաև տելիուպորների մորֆոլոգիան և օնտոգենեզը, իսկ Մ. Թիրումալաչար և Գ. Կամինսը (Thirumalachar, Cummins, 1949)՝ սպոր ձևավորող հիմնային բջիջների կառուցվածքը:

Այսպիսով՝ կարգի ներսում տարսումների առանձնացման համար, հետագրուողները տարբեր նշանակություն են տալիս ժամագասների առանձին սպորատվությունների մորֆոլոգիական առանձնահատկություններին:

Զ. Արթորի (Arthur, 1906) կողմից առաջարկված համակարգում ներկայացվել է 75 եղ՝ ընդգրկված հետևյալ 3 ընտանիքներում. Coleosporiaceae, Uredinaceae և Aecidiaceae: Վ.Գ. Տրանալե (Transeau, 1939) կարծիքով Զ. Արթորի առաջարկած համակարգը բավականին հաջողված է, չնայած ունի մի շարք թերություններ: Օրինակ՝ ժամագասների ցեղերի բաժանման ժամանակ ֆիլոգենետիկորեն մոտ տեսակներն ընդգրկվել են տարբեր ցեղերում, ինչն անթույլատրելի է ըստ Պ. Դիտելի (Dietel, 1907):

Հետագայում Պ. Դիտելն (Dietel, 1928) առաջարկել է դասակարգման նոր համակարգ՝ ժամագասների կարգում առանձնացնելով 2 ընտանիք: Ներկայացված համակարգն ավելի մոտ է բնական դասակարգմանը և շատ հարցերում համապատասխանում է Զ. Արթորի առաջարկած համակարգին. համապատասխանությունը տրիբների ներսում ցեղերի միախառնումն էր: Այդ համակարգն ընդունվել է Եվրոպայի (Transeau, 1939; Kypreovici, 1975; Սլայնաշվե, 1978 և ուրիշներ), Ասիայի (Hiratsuka, 1955) և Ամերիկայի (Clements, Shear, 1931; Arthur et al., 1929; Arthur, 1934) հայտնի սնկաբանների կողմից:

Երկար տարիներ Պ. Դիտելի (Dietel, 1928) համակարգը մնացել էր անփոփոխ, չնայած որոշ փորձեր էին արվել այն փոխելու համար: Այսպես՝ Ե. Գոյմանը (Gaeumann, 1949) ժամագասների կարգը բաժանել է 6 ընտանիքների, Ե. Լեպպիկը՝ 7 (Leppik, 1972), Պ. Սկիլը՝ 5 (Savile, 1976), իսկ Չ.Ս. Ազբուկինան (Azbykina, 1974) Պ. Դիտելի համակարգի ընտանիքների սահմաններում առանձնացրել է 13 ենթաընտանիքներ՝ իիմնվելով սպերմագոնիումների և տելեոնորֆի մորֆոլոգիական տիպերի վրա:

Դասակարգման համակարգի առանձին օղակներ, որոնց սկզբունքները մասամբ հիմնված են եղել Գ. Կամինսի և Յ. Հիրա-

ցուկայի (Cummins, Hiratsuka, 1983, 1984) կողմից առաջադրված համակարգերի վրա՝ հետազայում ընդունվել է Ու. Բրաունի կողմից (Braun, 1982):

Ժանգասնկերի ցեղերի միջև կապերի ուսումնասիրության մեջ մեծ ներդրում ունեցան Յ. Հիրացուկան և Գ. Կամինսը (Hiratsuka, Cummins, 1963; Hiratsuka, Hiratsuka, 1980)` սպերմագոնիումներին կարգաբանական և ֆիլոգենետիկորեն հիմնավորված գնահատական տալով: Նրանց կողմից ուսումնասիրվել և առանձնացվել են սպերմագոնիումների 12 ձևաբանական տիպեր՝ միավորված 6 խնդերում, որոնք անբողջությանք համապատասխանում են Ե. Լեպահիկի (Leppik, 1972), Զ.Ս. Ազբուկինայի (Ազբուկին, 19726) և Դ. Սևիլի (Savile, 1976) կողմից առաջադրված դասակարգմանը ցեղերի միջև:

Պ. Դիտեյի համակարգում ընդգրկված 4 ընտանիքներն աստիճանաբար ենթարկվել են որոշ փոփոխությունների: Օրինակ՝ Կ. Ալեքսոպոլուսը (Alexopoulos, 1966) հիմնվելով բազիդիումի զարգացման տիպերի վրա (ներքին կամ արտաքին), ժանգասնկերի կարգը բաժանել է 3 ընտանիքներ՝ Melampsoraceae, Pucciniaceae և Coleosporiaceae: Այնուամենայնիվ, ինչպես նշել է Զ.Ս. Ազբուկինան (Ազբուկին, 1974), այդ բաժանումն արհեստական է, քանի որ ներքին բազիդիումը բնորոշ է ոչ միայն Coleosporium և Ochrospora ցեղերին, այլ առկա է նաև ժանգասնկերի այլ ցեղերի մոտ: Այդ երևույթը հավանաբար կարելի է բացատրել գուգամետությամբ:

XIX դարի վերջին տասնամյակից մինչև XX դարի վերջը ժանգասնկերի դասակարգման հիմնական մոտեցումները ներկայացված են այլուսակ 5-ում:

Ժանգասնկերի կարգի բաժանումը տաքսոնների կատարվել է սպորատվության տիպերի համեմատաբար աղքատ ձևաբանական հատկությունների հիման վրա: Ընդհանուր առմանք սնկերի զարգացման փուլի տաքսոնմիկ նշանակության կարևորման առաջնաթագավորությանը համապատասխան պահպանի՝ առաջին հերթին սպերմագոնիումների տիպի հետ: Դրա հետ մեկտեղ էվոլյուցիոն տեսակետից առաջընթացային է համարվում սպորատվության կառուցվածքը, որն ապահովում է սպորների արագ ազատում և տարածում: Այսպիսով՝ Uredinales կարգում առանձնացվել են հետևյալ կարգաբանական մակարդակները՝ ընտանիք, ենթաընտանիք, տրիբ, ցեղ, տեսակ (աղ. 6):

Աղյուսակ 5

**Ժամանակերի դասակարգման հիմնական մոտեցումները (XIX
դարի վերջից մինչև XX դարի վերջը)**

Dietel, 1897	Dietel, 1900	Syдов, Sydow, 1902-1924
Schizosporaceae Melampsoraceae Endophyllaceae Pucciniaceae	Cronartiaceae Melampsoraceae Coleosporiaceae Pucciniaceae	Melampsoraceae Coleosporiaceae Pucciniaceae Zaghouaniaceae
Dietel, 1928; Arthur, 1929, 1934	Gaeumann, 1949	Leppik, 1972
Melampsoraceae Pucciniaceae	Pucciniastaceae Cronartiaceae Chrysomyxaceae Melampsoraceae Coleosporiaceae Pucciniaceae	Pucciniastaceae Cronartiaceae Chrysomyxaceae Melampsoraceae Coleosporiaceae Pucciniaceae Raveneliaceae
Savile, 1976	Dietel, 1928	Ազբукина, 19726, 1974
Melampsoraceae Pucciniaceae Phragmidiaceae Raveneliaceae	Melampsoraceae Pucciniaceae	Melampsoraceae Milesinoideae Pucciniastroideae Cronartioideae Coleosporioideae Chrysomyxoideae Melampsoroideae Ochropsoroideae Phakopsoroideae Baeodromoideae Pucciniaceae Ravenelioideae Uropyxioideae Puccinioideae Phragmidioideae Gymnoconioideae

Աղյուսակ 6

**Uredinales կարգի դասակարգումն ըստ Զ.Մ. Ազբուկինայի
(Ազբուկին, 1974)**

Ընտանիք, ենթաընտանիք	Տրիպ	Ցեղ
Melampsoraceae Pucciniastroideae	Pucciniastreæ	Uredinopsis Milesina Hyalopsora Melampsoridium Melampsorella Pucciniastrum Thekopsora Calyptospora
Melampsoroideæ (=Uredinatae)	Melampsoreæ	Melampsora Chnoopsora Aplopsora
Phakopsoroideæ	Phakopsoreæ	Physopella
Cronartioideæ	Cronartieæ	Cronartium
Chrysomyxoideæ	Chrysomyxeæ	Chrysomyxa
Coleosporioideæ	Coleosporieæ	Coleosporium
Ochropsoroideæ	Ochropsoroideæ	Ochropsora
Pucciniaceæ Ravenelioideæ	Nothoravenelieæ	Nothoravenelia
	Pileolarieæ	Pileolaria
		Triphragmiopsis Nyssopsora
	Tranzschelieæ	Tranzschelia Leucoteliūm
Uropyxioideæ Phragmidioideæ	Uropyxideæ Phragmidieæ	Macruropyxis Kuehneola Phragmidium Xenodochus Triphragmium
Gymnoconioideæ	Gymnoconieæ	Gymnoconia
Puccnioideæ (=Dicaeomatae)	Gymnosporangieæ	Gymnosporangium
	Eriosporangieæ	Blastospora
	Puccinieæ	Uromyces Puccinia

		Miyagia
<i>Uredinales imperfecti</i>		
		Aecidium Uredo Caeoma

Ժամանակակից միկրոստեխնիկայի, ինչպես նաև մոլեկուլային գենետիկական վերլուծությունների տվյալների կիրառումը, հնարաբորություն տվեց բացահայտել սնկերի տարրեր խմբերի ազգական կապերը:

Ե. Սվանը և Տ. Թեյլորը (Swann, Taylor, 1995 a, b; Swann et al., 2001) ընդունել են *Urediniomycetes*-ը որպես ինքնուրույն դաս՝ առանձնացնելով այն *Hymenomycetes* և *Ustilaginomycetes* դասերից, բայց միաժամանակ *Ustilaginomycetes* և *Urediniomycetes* դասերն ընդգրկել են *Basidiomycota* բաժնում, որն առաջարկել էին Ռ. Բաուերը և Շ. Բեգերովը (Bauer, 1997; Begerow, Bauer, 1997):

Urediniomycetes դասում, բացի *Uredinales* կարգից, ընդգրկվել են և 2 կարգեր՝ *Septobasidiales* և *Microbotryales*, որը հիմնված է եղել մոլեկուլային գենետիկական ուսումնասիրությունների վերլուծությունների (Blanz, Cottchalk, 1984) և կենսաքիմիական տվյալների վրա (Prillinger, 1991):

Uredinales կարգի բաժանումն ընտանիքների կատարվել է հիմնվելով տելիոսպորների մորֆոլոգիայի և օնտոգենեզի, ինչպես նաև սպերնազոննիումների մորֆոլոգիական տիպերի վրա:

Այսպիսով, տարբեր հեղինակների կողմից առաջարկված սխեմաների վերլուծությունը ցույց է տալիս, որ մինչ այժմ բացակայում է վերջնական և ընդհանուր դասակարգման համակարգը:

1.2. Ժանգասնկերի տարածվածությունը

Ժանգասնկերը (կարգ *Uredinales*) բարձրակարգ բույսերի օբյեկտ մակաբույծներ են և լայնորեն տարածված են աշխարհագրական տարրեր լայնություններում: Դրանք մահացած սուրստրատի վրա չեն զարգանում, այլ զարգանում են տեր-բռնչերի կենդանի հյուսվածքներում, ինչը հասուն է մակաբույծներին (Լեկոմպեա, 2003): Աշխարհում հայտնաբերվել են ժանգասնկերի ավելի քան 7000 տեսակներ, որոնք ընդգրկված են 14 ընտանիքների 164 ցեղերում (Mordue, 1995; Kirk, 2001): Սնկերի այս խմբում տեսա-

կային կազմով ամենամեծը *Puccinia* ցեղն է, որում ընդգրկված են մոտ 2000 տեսակներ (Լեկոմցևա, 2003):

Դեռևս հին ժամանակներից մշակովի բույսերի վրա զարգացող ժանգ հիվանդությունն ուշադրության է արժանացել իր լայն տարածվածությամբ և վնասակարությամբ, բայց հարուցիչի բազմակողմանի ուսումնասիրությունները սկսվել են միայն 19-րդ դարի կեսերից:

Ժանգասնկերի ուսումնասիրության վերաբերյալ կուտակվել է հարուստ նյութ և այսօր արդեն կարգը կարելի է համարել լավ ուսումնասիրված:

Առաջին արժեքավոր աշխատությունները ժանգասնկերի ձևաբանության և կենսաբանության վերաբերյալ հրատարակվել են Ա. դե Բարիի (Bary, 1865), Մ.Ս. Կորոնինի (Воронин, 1871), Հ. Կլեբանի (Kleebahn, 1904) և Պ. Դիտելի (Dietel, 1918) կողմից: Նրանք բացահայտել են ժանգասնկերի 2 կարելոր հատկություններ՝ պոլիմորֆիզմը և տարատիրությունը: Հետագա բջջաբանական ուսումնասիրությունների շնորհիվ բացահայտվել և հիմնավորվել է կենսացիկլում փուլերի հաջորդականությունը: Այս խնդրի պարզաբանման են նվիրված Վ. Բլեկմանի (Blackmann, 1904), Ա. Կրիստմանի (Christman, 1905) արժեքավոր շատ աշխատանքներ Անգլիայում և Լ.Ի. Կուրսանովի (Курсанов, 1915) աշխատությունը Ոուսաստանում: Մի շարք սնկաբանների ուսումնասիրություններն ուղղված էին սպորտվության վրա արտաքին պայմանների ազդեցության բացահայտմանը, ինչպես նաև ժանգասնկերի ռասային կազմի և մասնագիտացման պարզաբանմանը: Դրանցից առաջիններն էին հարավային Ամերիկայում՝ Գ. Գասները (Gassner, 1915 ա, բ, ս, 1916), Ֆրանսիայում՝ Ռ. Մեյերը (Maire, 1911), Խորհրդային միությունում՝ Ա.Ա. Յաչևսկին (Ячевский, 1909), Վ.Գ. Տրանչելը (Траншель, 1923), Դ.Ն. Տետրևնիկովա-Բաբայն (Tetrevnichikova-Babajyan, 1930), Ն.Ա. Նաումովը (Наумов, 1935, 1939), Մ.Կ. Խոխրյակովը (Хохряков, 1951) և շատ ուրիշներ:

Ժանգասնկերի վերաբերյալ կան բազմաթիվ մենագրությունների ամփոփագրեր և տարածաշրջանային դիտարկումներ: Այդ աշխատությունների դերը նշանակալի է: Հարկ է նշել Ֆրանսիայում՝ Պ. Հարիուտին (Hariot, 1908), Անգլիայում՝ Կ. Պլուրլայտին (Plowright, 1889), Մ. Բիսբիին (Bisby, 1954), Ծվեյցարիայում՝ Է. Ֆիշերին (Fischer, 1904), Ֆինլանդիայում՝ Պ. Կարստենին (Karsten, 1879), Ամերիկայում՝ Զ. Արթուրին (Arthur, 1934), Ճապոնիայում՝ Ս.

Իտոյին (Ito, 1922, 1926), Ն. Հիրացուկային (Hiratsuka, 1930, 1931, 1937), Ուլմիհայում՝ S. Սավուլեսկուին (Savulescu, 1953), Ուլսաստանում՝ O. Տրեբուխ (Treboux, 1912), I.U. Արեֆիկին (Арефьев, 1917), Խորհրդային միությունում՝ Ն.Ա. Նաումովին՝ (Навомов, 1939), Վ.Գ. Տրանշելին (Траншель, 1939), Գ.Ա. Նևոդովսկին՝ (Неводовский, 1956), Ռ.Ն. Տետրենիկովա-Բաբայն (Тетреникова-Бабаян, 1952), Ս.Ա. Գուցեսկին (Гуцевич, 1952), Վ.Ֆ. Կուպրիկին և Վ.Գ. Տրանշելին (Купревич, Траншель, 1957), Վ.Ի. Ույանիշչկին (Ульянищев, 1959, 1960, 1962): Խորհրդային միության ժանգասնկերի ուսումնասիրության պատմության մասին մանրանասն տեղեկություններ են տվել Վ.Ֆ. Կուպրիկիքը և Վ.Գ. Տրանշելը (Կուրևիչ, Տրանշը, 1957):

Արեգավոր են նաև հեռավոր արևելքում տարածված ժանգասնկերի ուսումնասիրությանը նվիրված Զ.Ս. Ազբուկինայի հեղինակությամբ իրատարակված բազմաթիվ աշխատություններ (Ազբուկա, 1939, 1972 ա, 1974, 1980, 1999, 2005, 2006, 2011):

Աշխարհի շատ երկրներում դեռևս արդիական և առաջնային են ժանգասնկերի տարածվածության, տեսակային կազմի հայտնաբերման և բնորոշ առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ տարփող ուսումնասիրությունները (Անուե, 2002; Յոլկովա 2002, Լեկոմցևա և ար., 2004, 2008; Կարպենկո, Ռուսանովա, 2008; Գյուլբեյա 2011 և ուրիշներ):

1.3. Ժանգասնկերի ուսումնասիրվածությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության տարածքներում

Հարավային Կովկասում՝ այդ թվում Հայաստանում, բազմակողմանի հետազոտական աշխատանքներ են կատարվել ժանգասնկերի ուսումնասիրության ուղղությամբ:

Հայաստանի միկրօրոտայում ժանգասնկերի տարածվածության մասին առաջին տեղեկությունները ներկայացվել է Ա.Ա. Յաչևսկու կողմից (Ячевский, 1903-1911): Որոշ տեղեկություններ կան նաև Յու.Ն. Վորոնովի աշխատությունների մեջ (Воронов, 1915, 1922): Ա.Բ. Շեկովնիկովի կողմից Երևանի և Ստեփանավանի շրջակայքում հայտնաբերված և Կովկասում առավել տարածված որոշ ժանգասնկերի նկարագրությունը տրված է Ն.Ն. Վորոնիխինի աշխատության մեջ (Վորոնիխ, 1927):

1930թ. Երկանյա հետազոտությունների և նյութերի հավաքագրման արդյունքում Դ.Ն. Տետրևնիկովա-Բաբայանի և Ա.Ա. Բաբայանի համահեղինակությամբ հրատարակվել է առաջին հոդվածը, որը նվիրված է Հայաստանի միկոբիոտային: Այնտեղ ամփոփված են տեղեկություններ Հայաստանում հայտնաբերված մակաբույծ սմեկերի 200 տեսակների, այդ թվում՝ ժանգասնկերի 50 տեսակների մասին (Տետրևնիկովա-Բաբայան, Բաբայան, 1930):

Հայաստանի ժանգասնկերի վերաբերյալ որոշ տեղեկություններ է հաղորդել Վ.Գ. Տրանշելը (Տրանշել, 1936): Հեղինակը ստեղծել է հավաքածու, որում ներկայացված են նաև ժանգասնկերով ախտահարված բույսեր:

Դ.Ն. Տետրևնիկովա-Բաբայանի (Տետրևնիկովա-Բաբայան, 1940), Ե.Ս. Հարությունյանի (Արյուանք, 1950), Մ.Ա. Մինիթարյանի (Մխմարյան, 1952) աշխատությունները նվիրված են ծառատեսակներն ախտահարող ժանգասնկերի ուսումնասիրությանը: Վ.Օ. Գուլկանյանը (Գուլկանյան, 1938, 1942, 1943) և Մ.Ա. Մինիթարյանը (Մխմարյան, 1941) բացահայտել են հացահատիկայիններն ախտահարող ժանգասնկերը:

Ժանգասնկերի ուսումնասիրությունը բուռն զարգացում ստացավ 1945թ. Երևանի պետական հանալսարանի կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության ամբիոնի կողմից ձեռնարկված աշխատանքների շնորհիվ: Հայաստանում տարածված նշված սմեկերի ուսումնասիրության բնագավառում մեծ վաստակ ունեն Դ.Ն. Տետրևնիկովա-Բաբայանը և Ա.Ա. Բաբայանը: Երեքնուկի և այլ բույսերի վրա զարգացող ժանգասնկերի ուսումնասիրությանն է նվիրված Դ.Ն. Տետրևնիկովա-Բաբայանի աշխատությունը (Տետրևնիկովա-Բաբայան, 1950): Նույն թվականին նրա հեղինակությամբ հրատարակվել է Հայաստանի ժանգասնկերի մասին ամփոփ հոդված, իսկ 1951թ. հավաքագրված նյութերի հիման վրա տրվել է *Uredinales* կարգի խմբավորումն ըստ ընտանիքների և ցեղերի, ինչպես նաև առանձին ներկայացուցիչների մանրամասն նկարագրություններ: 1952թ. տպագրված Դ.Ն. Տետրևնիկովա-Բաբայանի մենագրության մեջ տրված է Հայաստանի միկոբիոտայի ժանգասնկերի ընդհանրացված նկարագիրը: Այդ գրքում ներկայացված է Հայաստանի գոեթե բոլոր շրջաններից հավաքված 160 տեսակ սմեկի նկարագրություն (Տետրևնիկովա-Բաբայան, 1952):

Դ.Ն. Տետրևնիկովա-Բաբայանի և Ա.Ա. Բաբայանի կողմից ուսումնասիրված նյութերը պահպանվում են ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի բուսաբանության ինստիտուտի և Երևանի

պետական համալսարանի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի հերթարիտումներում: Հավաքագրված նյութերը զգալիորեն համալրել են արդեն ունեցած ննուշները և նպաստել այդ բնագավառում ուսումնասիրությունների շրջանակների ընդլայնմանը:

Երևանի պետական համալսարանի բուսաբանության ամբիոնում 1960թ. մշակվել է «Հայաստանի միկոֆլորա» աշխատանքային ծրագիրը, որով նախատեսվում էր իրականացնել հանրապետության ողջ տարածքի սնկերի տեսակային կազմի հետազոտություններ: Ուշադրության կենտրոնում էին սնկերի առանձին կարգաբանական խմբերի խորացված ուսումնասիրությունները:

Ժանգասնկերի վերաբերյալ տեղեկություններ են ներկայացված Զ.Հ. Մելիք-Խաչատրյանի «Հյուսիս-արևմտյան Հայաստանի միկոֆլորա» (Մելուկ-Խաչատրյան, 1964), Ս.Ա. Սիմոնյանի «Հայկական ԽՍՀ բուսաբանական այգիներում աճող բույսերի մակաբույծ սնկերը» (Սիմոնյան, 1965) աշխատություններում: Նշանակալից են Ե.Ս. Հարությունյանի (Արյունյան, 1955), Զ.Հ. Մելիք-Խաչատրյանի (Մելուկ-Խաչատրյան, 1959), Լ.Լ. Օսիպյանի (Օսունյան, 1961), Ս.Ա. Սիմոնյանի (Սիմոնյան, 1959, 1960, 1962, 1965, 1969), Լ.Լ. Օսիպյանի և Ս.Գ. Թավլախյանի (Օսունյան, Տաշլախքչյան, 1962), Դ.Ն. Տետերևնիկովա-Բաբայն և Վ.Ա. Պողոսյանի (Տետերևնիկովա-Բաբայն, Պոգօսյան, 1965), Դ.Ն. Տետերևնիկովա-Բաբայն ու Ն.Ա. Կարապետյանի (Տետերևնիկովա-Բաբայն, Կարապետյան, 1967; Տետերևնիկովա-Բաբայն, 1970, 1977), Ք.Գ. Ավագյանի (Ավագյան, 1961, 1970) և ուրիշների հողվածներու մեջ ներկայացվածները:

Դ.Ն. Տետերևնիկովա-Բաբայանն ամփոփելով Հայաստանի միկորիտայի մասին հավաքագրված տեղեկությունները, հրատարակել է «Հայաստանի ԽՍՀ միկոֆլորա» աշխատության 4-րդ հատորը, որտեղ ներկայացված է 18 ցեղերում ընդգրկված 255 տեսակի ժանգասնկերի նկարագրություն (Տետերևնիկովա-Բաբայն, 1977): Նույն թվականին Ս.Ա. Սիմոնյանի և Դ.Ն. Տետերևնիկովա-Բաբայանի համահեղինակությամբ հրատարակվել է հողված, որում տեղեկություններ կան << տարածքում հայտնաբերված այլ ժանգասնկերի մասին (Սիմոնյան, Տետերևնիկովա-Բաբայն, 1977): Ս.Ա. Սիմոնյանի կողմից 1990 թ. հրատարակվել է Շիրակի մարզի ժանգասնկերի ցանկը, իսկ 1993թ. նոր նյութեր է ներկայացրել Արարատյան դաշտավայրի միկորիտայի վերաբերյալ (Սիմոնյան, 1990; Սիմոնյան և ար., 1993):

Որպես լրացում նշված աշխատությունների՝ Լ.Լ. Օսիայանն (Օսունի, 2009, 2013), ամփոփելով Երևանի պետական համալսարանի բուսաբանության և սնկաբանության ամբիոնում կուտակված նյութերը, հրատարակել է <<միկոբիոտուայի համար 17 նոր տեսակ ժանգասնկերի և 70 տեսակ նոր տեր-բույսերի ցանկ, որոնք չեն ներառվել «Հայաստանի ԽՍՀ միկոֆլորա» IV հատորի մեջ:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բնաշխարհում հանդիպող ժանգասնկերի մասին առաջին տեղեկությունները մեզ հայտնի են Վ.Ի. Ռյանիշչկի աշխատություններից (Մայրական 1959, 1960, 1962): Հեղինակն Աղրբեջանում տարածված ժանգասնկերի տեսակային կազմը բացահայտելու նպատակով ուսումնասիրել է նաև ԼՂՀ որոշ տարածքներ, քանի որ այդ տարիներին այս ընդգրկված էր Աղրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կազմում՝ որպես Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզ (ԼՂԻՄ):

1959թ. հրատարակված «Աղրբեջանի ԽՍՀ միկոֆլորա» աշխատության երկրորդ հատորում Վ.Ի. Ռյանիշչկը ներկայացրել է 179 տեսակի ժանգասնկերի նկարագրություն, որոնցից 26-ը հայտնաբերվել էր ԼՂՀ տարածքում (Մայրական 1959): ԼՂՀ գրեթե բոլոր շրջաններում հայտնաբերված 40 տեսակի տեր-բույսերի վրա մակաբուծող 26 տեսակի ժանգասնկերից 12-ը պատկանում են *Uromyces*, 4-ը՝ *Phragmidium*, 4-ը՝ *Gymnosporangium*, 3-ը՝ *Melampsora* և 1-ը՝ *Pucciniastrum* ցեղերին:

Չարունակելով հետազոտությունները հեղինակը 1960թ. հրատարակել է նույնանուն աշխատության երրորդ հատորի առաջին մասը, որտեղ ներկայացվել է 121 տեսակի ժանգասնկերի նկարագրություն, որոնցից 36-ը՝ նաև ԼՂՀ-ում (Մայրական 1960): Հայտնաբերված բոլոր ժանգասնկերը *Puccinia* ցեղի ներկայացուցիչներ են և մակաբուծում են 49 տեսակի բույսերի վրա:

Աղրբեջանի տարածքի ժանգասնկերի մասին մեզ հայտնի վերջին տեղեկություններն ամփոփվել են երրորդ հատորի երկրորդ մասում (Մայրական 1962): Այստեղ ընդգրկված է 148 տեսակի ժանգասնկերի նկարագրություն, որոնցից *Puccinia* ցեղին պատկանող 28 տեսակը հայտնաբերվել էր ԼՂՀ-ում:

Այդաիսով, Վ.Ի. Ռյանիշչկի եռահատոր աշխատության մեջ ներկայացված է 448 տեսակի ժանգասնկերի նկարագրություն, որոնցից 90-ը հայտնաբերվել էին նաև ԼՂՀ տարբեր շրջաններում: Ըստ Զ.Ս. Ազբուկինայի (Ազբուկա, 2005) աշխատության՝ Վ.Ի.

Ույանիշչելի կողմից հայտնաբերված ժանգասնկերից որոշ տեսակներ հոմանիշներ են:

ԼՂՀ տարբեր շրջաններում հայտնաբերվել են ժանգասնկերի 86 տեսակով ախտահարված տերքուսերի 119 տեսակներ, որոնց մեծամասնությունը մեր ուսումնասիրությունների ժամանակ կրկին հայտնաբերվել են ԼՂՀ տարածքում: Հարկ է նշել, որ դրանց տարածվածության, զարգացման առանձնահատկությունների և մասնագիտացման մասին առանձին վերլուծություն Վ.Ի. Ույանիշչելի կողմից չի ներկայացվել: Նրա կատարած հետազոտությունները հիմնականում իրականացվել են ԼՂՀ այն շրջաններում, որոնք այժմ համարվում են սահմանամերձ գոտի, կամ շատ մոտ են դրան, իսկ որոշ հատվածներում տեղակայված են ԼՂՀ գինվորական շտաբները:

Սկսած 2005 թվականից՝ մեր կողմից կատարվել են նպատակաուղղված ուսումնասիրություններ ԼՂՀ-ում տարածված ժանգասնկերի տեսակային կազմի բացահայտման ուղղությամբ: Ախտահարված բույսերի հայտնաբերմանն ու սնկերի տեսակային կազմի որոշմանը զուգընթաց՝ կատարվել է վերլուծություն ըստ ժանգասնկերի տարածվածության, զարգացման առանձնահատկությունների և մասնագիտացման, իրականացվել է ԼՂՀ-ի և ՀՀ միկոբիոտայի ժանգասնկերի տեսակային կազմի համեմատական վերլուծություն (Մարգարյան, 2007, 2009ա,բ, 2011, 2012; Նանազյուսյան, Մարգարյան, 2008, 2009):

Գ?? ?? II. ??????? ???? ???? ????????????? ??? ???? ???? ???? ????????????? ??? ???? ???? ???? Գ???

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան հատվածում՝ Անդրկովկասի հարավային մասում և գբաղեցնում է Փոքր Կովկասի հարավարևելյան հատվածը՝ ընդգրկելով Մշավասարի, Արցախի լեռնաշղթամերը և նրանցից արևելք գտնվող հարթավայրային հատվածը։ Հանրապետության տարածքն ընկած է հյուսիսային լայնությամբ $38^{\circ}23'50''$ և $40^{\circ}30'12''$ և արևելյան երկայնության $47^{\circ}16'00''$ և $45^{\circ}34'10''$ կոորդինատների միջև։ Ամենամեծ ձգվածությունը հյուսիսից հարավ կազմում է 136 կմ, լայնությունն արևմուտքից արևելք՝ 70 կմ։ Ամենանեղ մասի լայնությունը ուղիղ գծով կազմում է 20 կմ։ Ուղիղ գծով Կասպից ծովից հեռավորությունը՝ 160 կմ է, Սև ծովից՝ 420 կմ, Պարսից ծոցից՝ 970 կմ։ ԼՂՀ սահմանների ընդհանուր երկարությունը կազմում է 600 կմ։

Հյուսիսից և արևելքից սահմանակից է Աղրբեջանի Հանրապետությանը, արևմուտքից՝ Հայաստանի Հանրապետությանը, իսկ հարավից՝ Իրանի Իվանական Հանրապետությանը։

Ուսումնասիրվող տարածքի մակերեսը 4951 կմ² է, իսկ 0,9 հազ. կմ² - ը գտնվում է Աղրբեջանի վերահսկողության տակ։

ԼՂՀ-ն լեռնային երկիր է, տարածքի միջին բարձրությունը ծովի մակերևույթից (ծ.մ.բ.) 1175 մ է, ամենացածր կետը՝ 112 մ, գտնվում է Մարտունի քաղաքից 24 կմ արևելք՝ Սև ջուր գետակի և ԼՂՀ սահմանի հատման կետում, իսկ ամենաբարձրը՝ 3724,6 մ Մրավի լեռնաշղթայի Գոմշասար (Արիության լեռ) գագաթն է։ ԼՂՀ տարածքի 2,2%-ն ընկած է ծովի մակարդակից մինչև 200 մ բարձրության վրա, 47,5%-ը՝ մինչև 200-1000 մ, 42,6%-ը՝ մինչև 1000-2000 մ, իսկ 2000 մետրից բարձրը՝ 7,7%-ը։

Հանրապետության բարդ ռելիեֆով, տարածքի բացարձակ և հարաբերական բարձրությունների մեջ տատանումներով է պայմանավորված նրա բնական պայմանների՝ կլիմայի, ջրերի, հողերի, բուսական և կենդանական աշխարհի, բնական լանդշաֆտների խիստ բազմազանությունը և վերընթաց գոտիականությունը։

Ռելիեֆը. ԼՂՀ տարածքի լեռնագրական միավորները համար-վում են Հայկական լեռնաշխարհի Փոքր Կովկասի լեռնահամակարգի արտաքին շարի Գանձակի ու Արցախի Ֆիզիկաաշխար-

հագրական շրջանների բաղադրամասը: Գանձակի լեռների արևելյան մասում ընկած է Մռավի լեռնաշղթան: Այն սկսվում է Սևանի լեռնաշղթայի Հինալ գագաթից և լայնակի ուղղությամբ տարածվում դեպի արևելք՝ ավելի քան 70 կմ: Այն աստիճանաբար ցածրանալով՝ թալիշ բնակավայրի մերձակայքում ձուլվում է Ղարաբաղի դաշտավայրի հետ: Դրա կենտրոնական մասում է ամենաբարձր գագաթը՝ Արիության լեռը: Դրանից արևելք գտնվում է Ամուրի (Օմարի) լեռնագագաթը՝ ծովի մակերևույթից բարձրությունը (ծ.մ.թ.) 3261 մ: Մռավի հյուսիսային լանջերին, նույնանուն լեռնաբազուկի վրա, վեր է խոյանում Աղիարակ գագաթը (ծ.մ.թ. 3066 մ): Դեպի հյուսիս է ձգվում Պանտի բազուկը: Մռավի լեռնագագաթից հյուսիս-արևելյան ուղղությամբ ձգվում է Սևաբերդի լեռնաբազուկը՝ նույնանուն գագաթով:

Արցախի լեռնաշղթան ունի 125 կմ երկարություն և ձգվում է հյուսիս-արևմուտքից դեպի հարավ-արևելք: Լեռնաշղթայի սկիզբը համարվում է Թարթարի ձախակինյա և Թութխուն գետերի արևելյան մասը, որոնք միաձուլվելով առաջացնում են ջրբաժանային կատար և աստիճանաբար դեպի հարավ-արևելք ուղղությամբ տարածվելով միանում են Կարմրասարին: Այստեղից էլ մինչև Բադարայի լեռնանցքը տարածվում է լեռնաշղթայի ամենաբարձր մասը: Սա հայտնի է Կուսանաց լեռնաշղթա անվամբ: Բադարայի լեռնանցքից մինչև Թթու ջրի լեռնանցքը Արցախի լեռնաշղթայի բարձրությունն աստիճանաբար նվազում է, այնուհետև կրկին ավելանում և Մեծ Քիրս գագաթում ստանում է ծ.մ. 2724 մ բարձրություն: Այստեղից էլ դեպի հարավ-արևելք ուղղությամբ գտնվում են Դիզափայտ (ծ.մ.թ. 2478 մ) և Վարդաբար (ծ.մ.թ. 2389 մ) գագաթները: Դիզափայտ գագաթից ձգվում են Արեգունի, Առաջալի լեռնաշղթաները: Արցախի լեռնաշղթան հարավային մասում աստիճանաբար ձուլվում է Միլի և Արցախի հարթավայրերին: Լեռնաշղթայի հյուսիսային նասում դեպի արևելք ձգվում են Օխնաղբյուրի, Կաթողիկեսարի լեռնաբազուկներն իրենց լեռնաձյուղերով: Կուսանաց լեռներից սկզբնավորվում և դեպի արևելք է տարածվում Հավքախաղաց լեռնաշղթան՝ Կաչաղակաբերդ գագաթով (ծ.մ.թ. 1706 մ): Կուսանաց լեռներից է Ճյուղավորվում նաև Խոյ-Խուրի և Մռակածի լեռնաբազուկները: Արցախի լեռնաշղթայի Շմանեք գագաթից հարավ-արևելք ուղղությամբ մինչև Շուշիի սարավանդը տարածվում է Շուշիի լեռնաբազուկը: Այստեղ է գտնվում Բովուրխան գագաթը, Քյարտիկի, Կաղարծիի լեռնաշղթաները: Խաչմաշ բնակավայրից մինչև Ուրյան լեռը ձգվում է Ամարասի

շղթան: Վերջինիս հյուսիսային մասի ուղղությամբ ծգվում են Մոնթեի լեռները: Բովուրխանից դեպի հարավ գտնվում է Վարանդայի լեռնաշղթան, որը ջրբաժան է Վարանդա և Անարաս գետերի համար: Վարանդայի արևմտյան մասին գուգահեռ տարածված է Մրխաթուն շղթան: Դիզափայտ գագարից հյուսիս գուգահեռ ուղղությամբ գտնվում են Տումի ու Մոխունես լեռնաբազուկները, Մեծ Քիրսից Հագարուի հովիտն է իջնում Քարիննգի և Խօսքերդի լեռնաբազուկները: Թթու ջրի լեռնանցքից հարավ, ապա դեպի արևմուտք տարածվում է Բերդաձորի լեռնացյուղը, որի վրա հայտնի է Բերդաձոր գագարը (Ժ.մ.թ. 2085 մ): Մեծ Քիրսից դեպի հարավ ծգվում է Իշխանասարի լեռնաշղթան: Տիգրանակերտ ամրոցից դեպի հյուսիս տեղակայված է Ուրուրուցասար շղթան, որն ամբողջությամբ կազմված է մեզոգոյի շղթանի կրաքարերից:

Արցախի տարածքում լեռնագրության կարևոր առանձնահատկությունն այն է, որ այստեղ ռելիեֆի ծևերը և տեկտոնական տարրերն իրար համընկնում են: Այսինքն ռելիեֆը կառուցվածքային-էրոզիոն-տեղատարումային է: Լեռնաշղթաները բաժանող հովիտները ներկայացված են տեկտոնական գոգածալային և ճկվածքագրաբենային հզվածքային գոգավորությունների ծևով, որոնք հետագայում որոշ փոփոխություններ են կրել էրոզիոն ազդակների կողմից՝ ծևավորելով էրոզիոն հովիտները: Արցախի ռելիեֆի բնորոշ ծևերից են նաև այլուվալ, պրեսուվալ և դեյսուվալ նստվածքներով պատված միջեռնային գոգավորությունները: Դրանցից համեմատաբար խոշորներն են Հաթերքի, Խաչենի, Կարկարի գոգավորությունները:

Արցախի բոլոր գետերը դուրս գալով տարածքից մտնում են Ղարաբաղի և Սիլի տափաստանները՝ 200-300 մ և մեղմորեն հջնում դեպի Կուր և Արաքս գետերը: Արցախի գետերը լեռներից դեպի հարթավայր դուրս գալով առաջանում են հզոր արտաքերման կոներ՝ 200 մ ընդհանուր հզորությամբ: Ղարաբաղի դաշտավայրը աղեղնաձև տարածվում է Գանձակ գետից մինչև Կարկար գետը: Սիլի տափաստանն ընկած է Կարկար և Արաքս գետերի միջև (Ամիրջանյան, Արգումանյան, 1994):

Կլիման. ԼՂՀ-ն աչքի է ընկնում կլիմայի բազմազանությամբ: Կլիման բնութագրող օդերևութարաբանական տարրերը հիմնականում կախված են նրա աշխարհագրական դիրքից, ազդող օդային զանգվածներից, Կասպից ծովի ազդեցությունից, մակերևույթի բարձրություններից, լեռների կողմնադրությունից և այլ գործոններից: Լեռնային ռելիեֆի շնորհիվ ԼՂՀ կլիման աչքի է ընկնում բարձ-

րադիր գոտիականությամբ: Թեև ԼՂՀ տարածքը գտնվում է մերձարևադարձային գոտում, սակայն կլիմայի ցամաքայնությունը նրա մեջ մասում թույլ է արտահայտված:

Զմերն այստեղ համենատարար կարճ է ու մեղմ: Որոշ վայրերում ձևածածկույթ գրեթե չի գոյանում: Ամենացուրտ ամիսը համարվում է հունվարը, սակայն որոշ տարիների ամենացածր ջերմաստիճանը երը դիտվել են դեկտեմբերին, փետրվարին, հազվագյուտ դեպքերում և մարտին: Ամենատաք ամիսը հուլիսն է, իսկ առանձին տարիներին նաև օգոստոսը: Հունվարի միջին ջերմաստիճանը տատանվում է $2-8^{\circ}\text{C}$ -ի միջև: Հուլիսան միջին ջերմաստիճանը ցածրադիր վայրերում $24-26^{\circ}\text{C}$ է, իսկ լեռների ամենաբարձր մասերում չի գերազանցում 13°C -ը: Զմռանն ամենացածր ջերմաստիճանը դիտվում է Մռավի գագաթային հատվածներում՝ $-26,7^{\circ}\text{C}$ և Լիսագորում՝ -23°C : Իսկ ամռան ամենաբարձր ջերմաստիճանը դիտվում է Կուրապատկինո և Սեյսուլան գյուղերում՝ $40,2^{\circ}\text{C}$ (ստվերում):

Տեղումների հիմնական քանակը լինում է գլխավորապես լեռների հարավային և հարավ-արևմտյան լանջերին՝ 3000-3200 մ բարձրությունների վրա: Ամենաշատ տեղումները դիտվում են Մռավի լանջերին՝ մինչև 1479 մն: Ամենաբիշ տեղումները գրանցվել են Կուրապատկինո, Սեյսուլան գյուղերում՝ 250-400 մն: Տեղումների առավելագույն քանակը լինում է գարնանը, հատկապես մայիս ամիսն և հունիսի առաջին տասնօրյակում, որը ներկայացված է աղյուսակ 7-ում:

Ընդհանուր առմամբ ԼՂՀ-ն ունի բարենպաստ կլիմա: Տարվա ընթացքում քիչ են ամպամած և քամոտ օրերը, բայց հաճախակի են լինում կարկուտ, երաշտ ու խորշակ: Հանրապետությունում լավ արտահայտված են տարվա չորս եղանակները՝ ձմեռ, գարուն, ամառ, աշուն (Մնացականյան, Առաքելյան, 2005):

Աղյուսակ 7

**L7Z - ում մթնոլորտային տեղումների քանակը (մմ ս.ս.)* ըստ
ամիսների և գոտիականության**

Ամիս	Գոտիներ			
	Նախալեռ-նային	Միջին լեռնային	Բարձր լեռնային	Մերձալպ-յան
Հունվար	19	27	22	33
Փետրվար	17	25	27	12
Մարտ	32	43	47	58
Ապրիլ	50	70	73	70
Մայիս	56	82	106	102
Հունիս	70	95	97	104
Հուլիս	25	38	44	60
Օգոստոս	22	33	35	82
Սեպտեմբեր	45	46	52	49
Հոկտեմբեր	31	43	54	34
Նոյեմբեր	42	49	42	72
Դեկտեմբեր	17	24	25	25
Միջին տարեկանը	426	575	621	701

* - միլիմետր սնդիկի սյուն

Հողաբուսական ծածկը. ԼՂՀ տարածքի հողաբուսական ծածկը ենթարկվում է վերընթաց գոտիականության: Ոելիտֆի, կլիմայի բազմազանությունը, ինչպես նաև տարածքի զարգացման պատմության առանձնահատկությունները հանգեցրել են տարածքի բուսածածկութի բազմազանության: Լեռնային Ղարաբաղի տարածքն ըստ ուղղաձիգ գոտիականության բաժանվում է հետևյալ գոտիների: ցածրադիր՝ ծ.մ.ք. մինչև 400 մ, նախալեռնային՝ 400-700 մ, միջին լեռնային՝ 700-1000 մ և լեռնային՝ 1000-1800 մ:

Ցածրադիր գոտին ընդգրկում է մինչև ծ.մ. 400 մ բարձրությունները և ունի կիսաանապատային բուսածածկությութեա: Այստեղ տարածված է շիրյակի գոտին: Գոտում հողերի արհեստական ոռոգման միջոցով հնարավոր է ստանալ զյուղատնտեսական մթերքներ: Տարածված են բաց շագանակագույն մարգագետնակիսաապատային ոռոգվող հողերը: Գոտու որոշ հատվածներին բնորոշ են ախտակենին, գիհին, թաղարնին, նռենին, թզենին, հացենին, փոշնին, թխկին և այլ ցեղերի ծառերը:

Նախալեռնային գոտին տարածվում է ծ.մ. 400-700 մ բարձրություններում: Այս գոտուն բնորոշ են բաց և մուգ լեռնաշագանակագույն հողերը և լեռնային սևահողերը: Լեռնաշագանակագույն հողերը ծևավորվում են չոր բարեխառն տաք կլիմայի պայմաններում: Այստեղ խոտարուստերից ածում են կծմախոտը, ծնեբեկը, ավելուկը, թփերից՝ ցաքին, զկերենին, մասրենին, հոնին, արոսենին և այլն, իսկ ծառերից՝ գիհին, փոշնին, պիստակենին, թզենին և այլն: Այսպիսի հողաբուսական ծածկ տարածված է Թարթարի, Խաչենի հովտում, Կարկառի միջին հատվածներում, Վարանդայի և Իշխանագետի միջին հովտումներում:

Նախալեռնային գոտում տարածված լեռնային սևահողերին բնորոշ են հետևյալ բույսերը՝ փետրախոտ, կորնգան, առվույտ, օշինդր, թփուտներ, կաղնու, բոխու, թխկու ֆորմացիաներով անտառներ և այլն: Նախալեռնային գոտու որոշ հատվածներում հանդիպում են աղուտ և ալկալի հողեր, որոնք տարածված են Մարտակերտի և Սարտունու շրջաններում:

Միջին լեռնային գոտում (ծ.մ.ք. 700-1000 մ) տարածված են լեռնամարգագետնային, մարգագետնասևահողային, անտառային, անտառափակասանային հողերը: Այս հողերը ծևավորվում են մեղմ, տաք և կիսախոնավ կլիմայի պայմաններում: Անտառափակասանային հողերը ծածկում են նախալեռների ցածրադիր լանջերը: Այստեղ լավ ածում են հացազգիները, ծխախոտը, խաղողը, պտղատու ծառերը և թփուտները: Անտառային հողերն Արցախում 3 ենթարկայի

Են՝ գորշ, ձմակարբոնատային և շագանակագույն: Գորշ հողերի հատվածներին բնորոշ է ծառաթփուտային բուսականությունը, որտեղ գերիշխող են մասրենին, հոնին, սպլորենին, արոսենին, կաղնին, բոխին, թխին և այլն: Կաղնու և բոխու անտառների տակ ծևավորվում են ձմակարբոնատային հողեր: Շագանակագույն հողերը լայն տարածում ունեն Դարսբադի լեռնաշղթայի արևելյան և հարավարևելյան լանջերին: Շագանակագույն հողերի վրա լավ աճում են հացազի, երկշաքիլավոր և բանջարաբռստանային մշակաբույսերը:

Լեռնային գոտում (ծ.մ.թ. 1000-1800) լեռնամարգագետնային և լեռնանարգագետնատափատանային հողերը ծևավորվում են խոնավ և ցուրտ կիմնայական պայմաններում: Հիմնականում աչքի է ընկնում անտառային բուսականությունը: Անտառակազմող հիմնական ծառատեսակներն են արոսենին, թխին, երբեմն կեչին, որոնք հանդիպում են բարձր լեռնային գոտում ծ.մ. 1800-2000 մ բարձրությունների վրա: Մռավի և Կուսանաց լեռների որոշ հատվածներում տարածված են կաղնու և կեչու անտառները: Անտառային բուսականության հիմնական և գերիշխող տիպերն են բոխու, հաճարենու, կաղնու անտառները: Դրանց հետ հանդես են զալիս լորենին, հացենին, կենին, ընկուզենին, տիվենին, վայրի խնձորենին, կեռասենին, սպլորենին և այլն: Այս հողերի առատ բուսականությունը և խոնավությունը հնարավորություն է տալիս այն օգտագործել որպես արոտավայր:

Ծովի մակերևույթից 2000-2200 մ բարձրություններից սկսած տարածված են ալպյան և մերձալպյան մարգագետնային հողերը, որոնք ունեն համեմատաբար աղքատ բուսականություն: Այս հողերը հանդիպում են Մռավի, Կուսանաց, Թիրսի և Դիզափայտի լեռնաշղթաների մերձագագաթային հատվածներում: Բուսականությունը հիմնականում ցածրահասակ է և ցրտադիմացկուն: Տարածված են ալպյան «գորգերը», որոնք ամառային արոտավայրեր են և հանդիսանում են կերային բազա անասնապահության համար (Մելքոնյան, 1994):

Մի շարք բույսեր, ինչպես անցյալում, այնպես էլ այժմ օգտագործվում են բուժական նպատակներով:

Այսպիսով՝ ԼՂՀ բուսական աշխարհը լինելով հարուստ և բազմազան, համապատասխանաբար ունի ժանգասնկերի հարուստ միկոբիոտա:

Գ???? III. ????????
????????????????? ???Գ???????
???Գ????????? ?? ??????Գ???????
?????????????????

3.1. ԼՂՀ-ում հայտնաբերված ժանգասնկերի կարգաբանական վերլուծությունը

Ժանգասնկերը պատկանում են բարձրակարգ սնկերի Ustulomycota բաժնի Urediniiomycetes դասի Uredinales կարգին: Բազիդիավոր սնկերի շարքում ժանգասնկերը նկատելիորեն առանձնացված խումբ են: Կարգի ներսում ցեղերի ենթարաժինները համեմատաբար կայուն են և մեկուսացված՝ բացառությամբ մի շարք արևադարձային և մերձարևադարձային ժանգասնկերի տեսակների:

ԼՂՀ տարածքում 2005-2010 թթ. առաջին անգամ կատարվել են հասուն ուսումնասիրություններ ժանգասնկերի տեսակային կազմի բացահայտման ուղղությամբ:

Հիմնվելով իրականացված հետազոտական աշխատանքների վրա և օգտագործելով տարրեր գրական աղբյուրների մշակումներ՝ ուսումնասիրվող տարածքում հայտնաբերվել և նույնականացվել են 130 տեսակի ժանգասնկեր՝ ընդգրկված 6 ընտանիքների 10 ցեղերում: Նշված սնկերից 44 տեսակները ԼՂՀ-ում հայտնաբերվել են առաջին անգամ: Ժանգասնկերի տեսակների բաշխվածությունն ըստ տարսնների (ընտանիք, ցեղ, տեսակ) ներկայացվում է աղյուսակի տեսքով (աղ. 8):

ԼՂՀ ժանգասնկերի կարգաբանական վերլուծությունից ականահայտ է, որ թվաքանակով առավել հարուստ է Pucciniaceae ընտանիքը: Հայտնաբերվել է նշված ընտանիքին պատկանող 3 ցեղ (*Gymnosporangium*, *Puccinia*, *Uromyces*) և 109 տեսակ:

Gymnosporangium ցեղից հայտնաբերվել են 6 տեսակներ, որոնցից 2-ը ԼՂՀ-ում առաջին անգամ են հանդիպում: Նշված ցեղից առավել տարածված տեսակ է *Gymnosporangium confusum*-ը:

Pucciniaceae ընտանիքին պատկանող *Puccinia* ցեղից հայտնաբերվել են 83 տեսակներ, որոնցից 24-ը առաջին անգամ են հայտնաբերվել: Այս ցեղը տեսակների թվաքանակով առաջնային է: Լայնորեն տարածված են *Puccinia bardanae*, *P. malvacearum*, *P. menthae*, *P. nigrescens*, *P. violae* տեսակները: Դրանցից *P. bardanae*-ն նոր է ԼՂՀ միկոբիոտայում և հայտնաբերվել է ուսումնասիրության գոեթե բոլոր տարիներին:

Աղյուսակ 8

Uredinales կարգի տեսակների բաշխվածությունն ըստ ընտանիքների, ցեղերի և տեսակների

Հ.հ.	Ընտանիք	Ցեղ	Տեսակ	Տեսակների թիվն ընտանիքում
1	Pucciniaceae	<i>Gymnosporangium</i>	6 (2)*	109
		<i>Puccinia</i>	83 (24)	
		<i>Uromyces</i>	20 (8)	
2	Phragmidiaceae	<i>Phragmidium</i>	8 (4)	8
3	Melampsoraceae	<i>Melampsora</i>	6 (3)	6
4	Pucciniastraceae	<i>Pucciniastrum</i>	2	2
5	Uropyxidaceae	<i>Tranzschelia</i>	1 (1)	1
6	Coleosporiaceae	<i>Coleosporium</i>	1	1
Անամորֆ ձևեր		<i>Aecidium</i>	2(2)	3
		<i>Milesia</i>	1	
Ընդամենը՝	6	10	130 (44)	130

*կակագժերում տրված են ԼՂՀ-ում առաջին անգամ հայտնաբերված տեսակների թիվը:

Տարածվածությամբ երկրորդ տեղն է զբաղեցնում *Uromyces* ցեղը: Նույնականացվել են այս ցեղին պատկանող 20 տեսակներ, որոնցից 8-ը ԼՂՀ միկոբիոտայում նոր տեսակներ են: Նշված ցեղին պատկանող *Uromyces appendiculatus*, *U. fallens*, *U. rumicis* ժանգասնկերը ԼՂՀ-ում հաճախ հանդիպող տեսակներ են և հայտնաբերվել են առաջին անգամ:

Հայտնաբերված մյուս ընտանիքների ցեղերի և տեսակների թիվը ցածր է. Phragmidiaceae ընտանիքից հայտնաբերվել է մեկ ցեղ (*Phragmidium*) և 8 տեսակ, որոնցից 4-ը նոր տեսակներ են ԼՂՀ-ում: Նշված ցեղին պատկանող լայնորեն տարածված ներկայացուցիչներից են *Phragmidium tuberculatum*, *Ph. mucronatum*, *Ph. violaceum* տեսակները և այլն: Վերջին երկուսը ԼՂՀ-ում հայտնաբերվել են առաջին անգամ:

Melampsoraceae ընտանիքից հայտնաբերվել է՝ մեկ ցեղ (*Melampsora*) և 6 տեսակ, Pucciniastraceae ընտանիքից՝ մեկ ցեղ (*Pucciniastrum*) և 2 տեսակ, Coleosporiaceae և Uropyxidaceae ըն-

տանիքներից մեկական ցեղեր (*Coleosporium*, *Tranzschelia*) և մեկական տեսակներ:

Melampsora ցեղին պատկանող 6 տեսակներից 3-ը ԼՂՀ-ում հայտնաբերվել են առաջին անգամ: Հանրապետության տարածքում առավել հաճախ է հանդիպում *Melampsora coleosporioides*-ը, որը նաև նոր տեսակ է:

Pucciniastrum ցեղից հայտնաբերվել են հազվադեպ հանդիպող 2 տեսակներ՝ *Pucciniastrum agrimoniae* և *P. circaeae*:

Coleosporium ցեղից հայտնաբերվել է միայն *Coleosporium tus-silaginis* լայնորեն տարածված տեսակը:

Tranzschelia ցեղից հայտնաբերվել է *Tranzschelia pruni-spinosa* սունկը, որը ԼՂՀ միկրօֆիտայում նոր և լայնորեն տարածված տեսակ է:

Հայտնաբերվել են նաև 2 անամորֆ ձևեր՝ *Aecidium* և *Milesia*, համապատասխանաբար սնկերի 2 (*Aecidium euphorbiae*, *A. pri-mulinum*) և 1 (*Milesia feurichii*) հազվադեպ հանդիպող տեսակներով:

ԼՂՀ տարածքում հայտնաբերված ժանգանկերի կարգաբանական վերլուծությունն արտահայտված տոկոսներով բերվում է աղյուսակի տեսքով (աղ. 9):

Հետազոտման ժամանակահատվածում նույնականացված 130 տեսակի ժանգանկերից 83-ը *Puccinia* ցեղի ներկայացուցիչներ են և կազմում են ընդհանուր թվի 63,8%-ը: Տարածվածությամբ երկրորդ տեղն են զբաղեցնում *Uromyces* ցեղի սնկերը (թվով 20 տեսակ), որինք կազմում են հայտնաբերված սնկերի 15,4%-ը:

Phragmidium ցեղի սնկերը թվով 8-ն են և կազմում են 6,2%-ը, *Gymnosporangium* և *Melampsora* ցեղերից հայտնաբերվել են վեցական տեսակներ և համապատասխանաբար կազմում են 4,6%: *Aecidium* և *Pucciniastrum* ցեղերից հայտնաբերվել են երկուական տեսակներ և կազմում են 1,5%: *Coleosporium*, *Milesia* և *Tranzschelia* ցեղերից հայտնաբերվել են մեկական տեսակներ և կազմում են 0,8%:

Աղյուսակ 9

ԼՂՀ-ում հայտնաբերված ժանգասնկերի ցեղերը

Ցեղ	Տեսակ	
	Թվային ցուցանիշ	Տոկոսային ցուցանիշ (%)
<i>Aecidium</i>	2	1,5
<i>Coleosporium</i>	1	0,8
<i>Gymnosporangium</i>	6	4,6
<i>Melampsora</i>	6	4,6
<i>Milesia</i>	1	0,8
<i>Phragmidium</i>	8	6,2
<i>Puccinia</i>	83	63,8
<i>Pucciniastrum</i>	2	1,5
<i>Tranzschelia</i>	1	0,8
<i>Uromyces</i>	20	15,4
Ընդամենը	130	100

3.2. Ժանգասնկերի կենսացիկի զարգացման առանձնահատկությունները և խմբավորումները

Ի տարբերություն այլ մակաբույժ սնկերի, որոնք հիմնականում վարակում են թուլացած, հիվանդ բույսերին՝ ժանգասնկերը զարգանում են լրիվ առողջ և փարթամ բույսերի վրա, իսկ թույլ, հիվանդ բույսերին վարակում են դժվարությամբ: Այս սնկերը չափազանց ագրեսիվ են, քանի որ վարակելու համար բավական է նույնիսկ մեկ ուրեմնոսպոր: Ինկուբացիոն շրջանը կարճատև է, սպորատվության օրգանները բաց են, սպորներն արագ են տարածվում: Վեգետացիայի շրջանում ուրեմնոսպորատվությունը կրկնվում է, առաջանում է սպորների մի քանի սերունդ:

Ագրեսիվությունը ցույց է տալիս պաթոգենի համաձարակ առաջացնելու ունակությունը, որը պայմանավորված է վարակի աղբյուրի նույնիսկ փորդ քանակի դեպքում պաթոգենի ախտահարելու ունակությամբ, հիվանդության ինկուբացիոն շրջանի տևողությամբ և տարածման արագությամբ (Աբրահամյան և ուրիշներ, 2004):

Բույսերի ախտահարումը ժանգասնկերով հիմնականում տեղային բնույթ է կրում, այսինքն՝ հիվանդությունն արտահայտվում է միայն այն հատվածում, որտեղ թափանցել է պաթոգենի սպորը: Տարածված է նաև համակարգային վարակը, որը սովորաբար ուղեցվում է հիվանդ բույսի արտաքին տեսքի ծևափոխմամբ (Ղարսեա, Լեկոմշեա, 2005): Վարակված բույսերի տերևների և այլ կանաչ օրգանների վրա ժանգասնկերն առաջացնում են բազմաթիվ մանր, դեղին, նարնջագույն, ժանգագույն, կարմրագորշ, դարչնագույն և սև երանգների բարձիկներ՝ սպորների կուտակումներ (Գօրլենկո, 1981): Վարակի նախնական փուլում բույսերի հյուսվածքները չեն մահանում, որը կախված է սնկի զարգացման փուլից: Բույսերի վեգետացիայի վերջում ի հայտ են գալիս հյուսվածքների մահացող շերտեր և միայն ուժեղ վարակի դեպքում է խանգարվում բույսերի ֆիզիոլոգիական արողեսների նորմալ ընթացքը. հատկապես ինտենսիվանում է բույսերի շնչառությունը, ինչի հետևանքով ծախսվում են մեծ քանակությամբ օրգանական նյութեր: Էպիդերմի բազմաթիվ մանր պատովածքների հետևանքով ուժեղանում է բույսերի տրանսպիրացիան, չորանում են հյուսվածքները, խիստ նվազում է ասիմիլյացիան, քլորոֆիլի քանակը, ինչն ազդում է բույսերի կենսունակության վրա: Ի հայտ են գալիս դեղին գունավորված հյուսվածքներ՝ կապված դեղին պիգմենտների՝ քսանտոֆիլների և կարոտինի քանակության մեծացման հետ, նվազում է ֆոտոսինթեզի էներգիան, պակասում է կուտակված ածխաջրերի ընդհանուր քանակը: Վարակված բույսերի ածխաջրային փոխանակության խախտման հետևանքով նվազում է բույսերի ընդհանուր օրգանական զանգվածը, ինչպես նաև խանգարվում է ազտային փոխանակությունը (Կորքեսի, Սլայնիսի, 1975; Միք բաշտեսի, 1991; Ազնուկին, 2005):

Ժանգասնկերի զարգացման ցիկլում կան տարրերակիչ առանձնահատկություններ, որոնք բացի կարևոր կիրառական նշանակությունից, գիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում՝ պայմանավորված իրենց խիստ բնորոշ պլեոնորֆիզմով, այսինքն՝ ընդունակ են զարգացման ընթացքում առաջացնելու մորֆոլոգիական 5 տարրեր սպորատվություններ (փուլեր, ստադիաներ), որոնք ժառանգաբար ամրապնդված են և պարտադիր են յուրաքանչյուր տեսակի համար: Գլխավոր առանձնահատկությունը սպորատվությունների զարգացման ընթացքն է: Ժանգասնկերի զարգացման ցիկլը համալրվում է միջանց հաջորդող հետևալ փուլերով. բազիդիումներ՝ բազիդիոսպորներով, սպերմագոնիում-

ներ՝ սպերմիումներով, էցիումներ՝ էցիոսպորներով, ուրեղինիումներ՝ ուրեղինիոսպորներով, տելիումներ՝ տելիոսպորներով:

Պ. Կարստեն (Karsten, 1879) առաջարկել է սպորատվությունները նշանակել հռոմեական տարերով (I - էցիալ ստադիա, II - ուրեղինիոստադիա, III - տելիոստադիա), իսկ Զ. Տրայլն առաջարկել է սպերմագոնիալ փուլը նշել արարական Օ նիշով (Trail, 1890):

Ժանգասնկերը, որոնց զարգացումն ուղեկցվում է նշված 5 սպորատվություններով, կոչվում են լրիվ ցիկլով (մակրոցիկլիկ) զարգացողներ: Որոշների զարգացման ցիկլում սպորատվությունը կրծատվում է, այսինքն՝ որևէ փուլ բացակայում է, դրանց անվանում են ոչ լրիվ (միկրոցիկլիկ) ցիկլով զարգացող ժանգասնկեր (Ազգուհա, 2005):

Սպորատվության որևէ փուլի առկայությամբ կամ բացակայությամբ պայմանավորված՝ գերճանացի գիտնական Զ. Շրոյտերը ժանգասնկերի ցեղանումներին մորֆոլոգիական իմաստ տալու նպատակով կիրարել է Eus-, Hemi-, Micro-, Hetero-, Brachy-, -Opsis, Endo-, Lepto- և այլ ածանցներ (Schroeter, 1879, 1889):

Ժանգասնկերը, որոնց զարգացման ընթացքում առկա են սպորատվության բոլոր փուլերը, գրվում են Eus- նախածանցով:

Uredinales կարգի ներկայացուցիչները, որոնց զարգացումն ընթանում է առանց էցիումների առաջացման և պահպանվում են O, II և III փուլերը, ցեղանվանը կցվում է Brachy- նախածանցը:

Ժանգասնկերը, որոնց զարգացման ցիկլում բացակայում են սպերմագոնիումներն ու էցիումները, և զարգանում են II և III փուլերը. նշվում են Hemi- նախածանցով:

Այս տեսակները, որոնց զարգացման ցիկլում բացակայում է II փուլը և առկա են O, I, III փուլերը՝ նշվում են -Opsis ածանցով, որը հաճախ դրվում է որպես ժանգասնկի ցեղանվան վերջավորություն:

Ժանգասնկերը, որոնց կենսացիկլում առկա է միայն տելիոստադիան, նշվում են Micro- նախածանցով:

Ժանգասնկերի այն տեսակները, որոնց զարգացումն իրականացվում է միայն սպերմագոնիալ և էցիալ փուլերով, տարբերակում են Endo- նախածանցով:

Ո. Մեյերն (Maire, 1911) առաջարկել է լրացուցիչ Cateu-, Catopsis- և այլ ածանցներ:

Որոշ միկրոձևների մոտ տելիոսպորներն աճում են հասունանալուց անմիջապես հետո և մեկ վեգետացիոն շրջանում կարող են տալ մի քանի գեներացիա: Այդպիսի ժանգասնկերը տարբե-

րակվում են Lepto- նախածանցով, որը կցվում է Micro- նախածանցից առաջ: Երբեմն Eu- և -Oopsis *Uredinales* ձևերի մոտ բացակայում են սպերմագրնիումները, այդ դեպքում նման սնկերը նշվում են Cata- նախածանցով, որը դրվում է արդեն նշված նախածանցից առաջ: Այս հատկությունը հաստատուն չէ, երբեմն կարող է մի տեղում հայտնաբերվել -Oopsis սունկ, որի զարգացման ցիկլն ընթանում է առանց սպերմագրնիումների, իսկ մեկ այլ տեղում հայտնաբերված նույն սունկը կարող է ունենալ լավ զարգացած սպերմագրնիումներ (Maire, 1911):

Ժանգասնկերի մեկ այլ բնութագրիչ առանձնահատկություն է այն, որ դրանք կարող են հանդես գալ որպես միատեր կամ տարատեր: Վերջինս առաջին անգամ բացահայտել են Ա. դե Բարին (Bary, 1863, 1865), Մ.Ս. Կորոնինը (Воронин, 1871), Հ. Կլեբանը (Klebahn, 1904) և Պ. Դիտելը (Dietel, 1918), ժանգասնկերի ուսումնասիրության ուղղությամբ տարվող փորձարարական հետազոտությունների արդյունքում: Որոշ ժանգասնկերի մոտ զարգացման բոլոր փուլերն անց են կացվում մեկ տեր-բույսի վրա, այդպիսի ժանգասնկերին անվանում են միատեր կամ միատուն և նշանակում Auto- նախածանցով, օրինակ՝ փիփերթի ժանգասունկը (*Auto-Puccinia malvacearum*) և այլն: Մյուսների մոտ 0 և 1 փուլերը զարգանում են մեկ բույսի վրա, իսկ II և III փուլերը՝ մեկ այլ բույսի վրա: Նման ձևով զարգացող ժանգասնկերին անվանում են տարատեր կամ երկտուն և նշանակում են Hetero- նախածանցով, օրինակ՝ սալորենու ժանգասունկը (*Hetero-Tranzschelia pruni-spinosae*): Նշենք, որ երկտիրության ժամանակ երկարաձգվում է սնկի զարգացման ժամանակաշրջանը, ինչը կարևոր է այն դեպքերում, եթե տեր-բույսերից որևէ մեկն արագ ավարտում է վեգետացիան, և սունկը չի հասնում նրա վրա անցկացնել զարգացման ողջ ընթացքը: Այն բույսերը, որոնց վրա զարգանում են էցիումները, կոչվում են միջանյալ տեր-բույսեր, իսկ բույսերը, որոնց վրա զարգանում են սպորատվության II և III փուլերը, անվանում են զիջավոր կամ իհմնական տեր-բույսեր (Ենյա, Կառնովա-Ենյա, 1973):

Puccinia ցեղի բնորոշ ներկայացուցիչը *Puccinia graminis*-ն է պատկանում է լրիկ ցիկլով զարգացող, տարբեր տերեր ունեցող ժանգասնկերին: Վերջինիս համար որպես իհմնական տեր-բույս են հանդիսանում հացազգիների ընտանիքին պատկանող բույսերը, իսկ որպես միջանյալ տեր-բույս՝ ծորենին (Ազբյուհա, 1974):

Ժանգասնկերի առանձնացված խումբ են կազմում անամորֆ սնկերը: Վերջիններս սկզբնական շրջանում ընդունվում էին միայն

որպես մորֆոլոգիական կատեգորիա և ոչ որպես ժանգանկերի զարգացման ցիկլի փուլ: Հարցի նման շփոթմունքը գրականության մեջ գոյություն ուներ Երկար ժամանակ. միայն վերջերս Գ. Կամինսը և Ն. Հիրացուկան (Cummins, Hiratsuka, 2003) տվեցին որոշ պարզաբանումներ: Նրանք վերահստատեցին, որ «Aecidium»-ը և «Uredo»-ն չեն համարվում «էցիումներ» կամ «ուրեդինիումներ» և արդարացիորեն բացառեցին սպերմագրնիումների (կամ սպերմագրնիումների տիպերի) առկայությունը: Անամորֆ սնկերի ցեղերի նկարագրության ժամանակ հեղինակներն առաջարկեցին չկիրառել «uredinoid aecia», «aecidioïd uredinia» կամ «aecidioïd telia» տերմինները և նրանց զուգահեռ Վերջածանցները - !, " , "III" առաջարկելով հոլոմորֆների զարգացման ցիկլի այս կամ այն փուլում կիրառել անամորֆ տիպ, օրինակ՝ «էցիումներ Aecidium տիպի» կամ «ուրեդինիումներ Aecidium կամ Uredo տիպի» և այլն: Այդ դեպքում կատարվում է ոչ միայն սպորատվությունների ձևերի ֆիզիոլոգիական դերի, այլ նաև նրա նորֆոլոգիական դերի կրնկրետացում: Գ. Կամինսը և Ն. Հիրացուկան անդրադարձան հոլոմորֆ ցեղերի կրկնակի անվան՝ ըստ տելեոնմորֆի և անամորֆի, խոսքը վերաբերում է հատկապես այն տաքսոններին, որոնք զարգանում են արևադարձային և մերձարևադարձային շրջաններում, որտեղ իսկապես դրանց ավելի բնորոշ են անամորֆները քան տելեոնմորֆները (Ono et al., 1992; Buritica, Hennen, 1994; Buritica, 1998): Գործնականորեն դա թույլատրվել է բուսաբանական անվանակարգման Միջազգային Կողեքսի 59,5 հոդվածում, բայց Գ. Կամինսի և Ն. Հիրացուկայի կարծիքով անվանակարգման մեջ դա հանգեցնում է շփոթմունքի, բացի դրանից նաև դժվարացնում է այն (Greuter et al., 2000): Միաժամանակ, հայտնի է, որ հիմնվելով բուսաբանական անվանակարգման Միջազգային Կողեքսի օրենքների (օրենք IV) վրա՝ յուրաքանչյուր օրգանիզմ, այդ թվում ժանգանկերը, պետք է կրեն մեկ անվանում՝ հիմնված տելեոնմորֆի կամ նրա համարժեքի վրա:

Չատ հեղինակներ իրական են համարում 13 անամորֆներ (Laudon, 1967a,b; Kenny, 1970; Sato, Sato, 1984, 1985; Cummins, 2003):

Ուսումնասիրվող տարածքում հայտնաբերված ժանգանկերը խմբավորվել են միատերերի և տարատերերի (աղ. 10):

Ուսումնասիրություններից պարզվել է, որ հայտնաբերված սնկերի մեծամասնությունը պատկանում են միատեր ժանգանկերին: Համեմատության համար նշենք, որ Հայաստանում նույն-

պես գերակշռում են միատեր ժանգասնկերը (Տեմերևնիկովա-Բաբյան, 1977; Օսոյն, 2009):

Արդյունքում նշվել են ժանգասնկերի 84 միատեր և 46 տարատեր տեսակներ:

Միատեր սնկերից 54 տեսակը պատկանում են *Puccinia* ցեղին, 15-ը՝ *Uromyces*, 8-ը՝ *Phragmidium*, 3-ը՝ *Melampsora*, 2-ը՝ *Aecidium* և մեկական՝ *Milesia*, *Pucciniastrum* ցեղերին:

Միատեր ժանգասնկերից *Puccinia* ցեղին պատկանող 20 տեսակները զարգանում են Ես- (*Puccinia allii*, *P. barkhausiae-rhoeadifoliae*, *P. bupleuri*, *P. centaureae*, *P. chaerophylli*, *P. convolvuli*, *P. gentianae*, *P. heraclei*, *P. picridis*, *P. hieracii*, *P. lapsanae*, *P. menthae*, *P. nigrescens*, *P. pimpinellae*, *P. punctata*, *P. sonchi*, *P. retifera*, *P. tanacetii*, *P. thesii*, *P. wolgensis*), 11-ը՝ (*P. acetosae*, *P. cesatii*, *P. conii*, *P. crepidicola*, *P. dactylidina*, *P. onopordi*, *P. psephelli*, *P. psoroderma*, *P. spilogena*, *P. thesi-decurrentis*, *P. trisetii*) Hemi-, 10-ը՝ (*P. annularis*, *P. arenariae*, *P. armeniaca*, *P. draba*, *P. gladioli*, *P. jasmino*, *P. leveillei*, *P. malvacearum*, *P. schneideri*, *P. xanthii*) Micro-, 10-ը՝ (*P. asperulae-apparines*, *P. bardanae*, *P. calcitrapae*, *P. celakovskiana*, *P. chondrillina*, *P. cousiniae*, *P. jaceae*, *P. montana*, *P. pyrethri*, *P. stachydis*) Brachy-, 1-ը՝ (*P. ziziphorae*) Cateu- և 2-ը՝ (*P. coronillae*, *P. dictyodrema*) Catopsis- զարգացման ցիկլերով: Միատեր և լրիկ ցիկլով զարգացող *Puccinia* ցեղին պատկանող ներկայացուցիչներից առավել տարածված են *P. chaerophylli*, *P. convolvuli*, *P. menthae*, *P. nigrescens*, *P. punctata* սնկատեսակները:

Աղյուսակ 10

Տարատեր և միատեր ժանգասնկերի տեսակների քանակական տվյալները

Տեղ	Տեսակ	
	Տարատեր	Միատեր
<i>Aecidium</i>	2	1,5
<i>Coleosporium</i>	1	-
<i>Gymnosporangium</i>	6	-
<i>Melampsora</i>	3	3
<i>Milesia</i>	-	1
<i>Phragmidium</i>	-	8
<i>Puccinia</i>	29	54
<i>Pucciniastrum</i>	1	1
<i>Tranzschelia</i>	1	-
<i>Uromyces</i>	5	15
Ընդամենը	46	84

Uromyces ցեղին պատկանող միատեր ժանգասնկերը 15-ն են, որոնցից 8-ը՝ (*Uromyces appendiculatus*, *U. euphorbiae-corniculati*, *U. euphorbiae*, *U. fallens*, *U. inaequialtus*, *U. polygoni aviculariae*, *U. trifolii-repentis*, *U. viciae fabae*) Eu-, 4-ը՝ (*U. anthyllidis*, *U. coronillae-variae*, *U. onobrychidis*, *U. rumicis*) Hemi-, 2-ը՝ (*U. hippomarathri*, *U. scillarum*) Micro- և 1-ը (*U. thapsi*) -Oopsis ծևով զարգացող սնկեր են:

Հայտնաբերված *Phragmidium* ցեղի բոլոր ներկայացուցիչները և *Melampsora* ցեղի սնկերից 3 տեսակ (*Melampsora euphorbiae*, *M. helioscopiae*, *M. lini*) միատեր են և զարգանում են լրիվ ցիկլով:

Pucciniastrum ցեղից հայտնաբերվել է 1 միատեր ժանգասունկ (*Pucciniastrum agrimoniae*)՝ Hemi- զարգացման ցիկլով, իսկ անամորֆ սնկերից՝ 2 տեսակ (*Aecidium euphorbiae*, *A. primulinum*) *Aecidium* և 1 տեսակ (*Milesia feurichi*) *Milesia* ցեղերի ներկայացուցիչները:

ԼՂՀ տարածքում հայտնաբերված տարատեր ժանգասնկերը թվով 46-ն են, որոնցից 29 տեսակը պատկանում են *Puccinia*, 6-ը՝

Gymnosporangium, 5-ը՝ *Uromyces*, 3-ը՝ *Melampsora*, և մեկական՝ *Coleosporium*, *Tranzschelia*, *Pucciniastrum* ցեղերին:

Ուսումնասիրված *Puccinia* ցեղի բոլոր տարատեր սնկատեսակները զարգանում են լրիվ ցիկլով: Ոչ բոլոր դեպքերում են հայտնաբերվել լրիվ ցիկլով զարգացող երկտեր սնկերի միջանկյալ և գլխավոր տեր-բույսերը: Հայտնաբերվել են միայն լրիվ ցիկլով զարգացող երկտեր *Puccinia coronata*, *P. graminis*, *P. obscura* և *P. triticina* սնկատեսակներով վարակված միջանկյալ և գլխավոր տեր-բույսերը:

Լրիվ ցիկլով են զարգանում նաև *Uromyces* (*Uromyces dianthi*, *U. heimerianus*, *U. punctatus*, *U. pisi*, *U. striatus*) և *Melampsora* (*Melampsora caprearum*, *M. coleosporioides*, *M. reticulatae*) ցեղերին պատկանող բոլոր տարատեր տեսակները:

Gymnosporangium ցեղին պատկանող բացահայտված բոլոր սնկերը՝ զարգանում են -*Opsis* ձևով: Հայտնաբերվել են նաև *Coleosporium*, *Tranzschelia*, *Pucciniastrum* ցեղերին պատկանող տարատեր և լրիվ ցիկլով զարգացող մեկական սնկատեսակներ (*Coleosporium tussilaginis*, *Tranzschelia pruni-spinosa*, *Pucciniastrum agrimoniae*):

Այսպիսով՝ 174 բնաշխարհում հայտնաբերվել են 46 (35,4%) տարատեր և 84 (64,6%) միատեր ժանգասնկերի տեսակներ:

Ժանգասնկերի կարևոր առանձնահատկություններից է նաև այն, որ զարգացման ընթացքում սպորատվության այս կամ այն փուլերը բացակայում են:

Հայտնաբերված ժանգասնկերն ըստ կենսացիկլի զարգացման առանձնահատկությունների խճառվորված և ներկայացված են այլուսակի տեսքով (աղ. 11):

Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 174 ժանգասնկերի կեսից ավելին (80 տեսակ), որոնք կազմում են 61,54%-ը, լրիվ ցիկլով զարգացող (Ես-) սնկեր են: Հայտնաբերված լրիվ ցիկլով զարգացող սնկերի զգակի մեծամասնությունը, թվով 50 տեսակ, պատկանում են *Puccinia* ցեղին: Համեմատաբար թից են *Uromyces* ցեղի ժանգասնկերը՝ թվով 13 տեսակ: Լրիվ ցիկլով զարգացող սնկերից 8 տեսակը պատկանում են *Phragmidium*, 6-ը՝ *Melampsora*, մեկական՝ *Tranzschelia*, *Coleosporium*, *Pucciniastrum* ցեղերին:

Աղյուսակ 11

Ժանգասնկերի տեսակների խմբավորումն ըստ

կենսացիկլի փուլերի

Զարգացման փուլերը	Eu-	Brachy-	Hemi-	-Opsis	Micro-	Ընդամենը
Ցեղ						
<i>Coleosporium</i>	1	-	-	-	-	1
<i>Gymnosporangium</i>	-	-	-	6	-	6
<i>Melampsora</i>	6	-	-	-	-	6
<i>Phragmidium</i>	8	-	-	-	-	8
<i>Puccinia</i>	50	10	11	2	10	83
<i>Pucciniastrum</i>	1	-	1	-	-	2
<i>Tranzschelia</i>	1	-	-	-	-	1
<i>Uromyces</i>	13	-	4	1	2	20
Ընդամենը	80	10	16	9	12	127

Լրիվ ցիկլով զարգացող *Puccinia* ցեղի ժանգասնկերը մակարութուն են Poaceae, Asteraceae, Apiaceae, Lamiaceae, Polygonaceae, Liliaceae, Rhamnaceae, Boraginaceae, Gentianaceae, Violaceae, Urticaceae, Saxifragaceae, Crassulaceae, Rubiaceae, Convolvulaceae, Santalaceae, Ranunculaceae, Orchidaceae, Juncaceae, Iridaceae, Cyperaceae և Berberidaceae ընտանիքներին պատկանող բույսերի վրա:

ԼՂՀ տարածքում հայտնաբերված *Uromyces* ցեղին պատկանող լրիվ ցիկլով զարգացող ժանգասնկերն ախտահարում են Fabaceae, Caryophyllaceae, Polygonaceae և Euphorbiaceae ընտանիքներին պատկանող բույսերին:

Լրիվ ցիկլով զարգացող *Phragmidium* ցեղի բույր տեսակները մակարութուն են Rosaceae ընտանիքին պատկանող բույսերի վրա:

Melampsora ցեղի ժանգասնկերն ախտահարում են Salicaceae, Euphorbiaceae, Liliaceae և Saxifragaceae ընտանիքների բույսերի ներկայացուցիչներին:

Tranzschelia, *Coleosporium* և *Pucciniastrum* ցեղերից հայտնաբերվել են մեկական տեսակներ, որոնք մակարութուն են համա-

պատասխանաբար Rosaceae, Campanulaceae ու Asteraceae և Onagraceae ընտանիքներին պատկանող բույսերի վրա:

Սպերմագոնիալ, ուրեղինիոն- և տելիոստադիաներով (Brachy-) զարգացող ժանգասնկերից հայտնաբերվել են միայն *Puccinia* ցեղին պատկանող 10 տեսակի սնկեր, որոնք ախտահարում են Asteraceae, Rubiaceae և Lamiaceae ընտանիքներին պատկանող բույսերին: Վերջիններս կազմում են հայտնաբերված սնկերի 7,7%-ը:

Ուրեղինիոն- և տելիոստադիաներով (Hemi-) զարգացող ժանգասնկերից հայտնաբերվել են *Puccinia* (11 տեսակ), *Uromyces* (4) և *Pucciniastrum* (1) ցեղերի սնկեր, որոնք ախտահարում են Asteraceae, Fabaceae, Polygonaceae և Rosaceae ընտանիքներին պատկանող բույսերին: Hemi- ձևով զարգացող սնկերը կազմում են ժանգասնկերի ընդհանուր թվի 12,31%-ը:

Սպերմագոնիալ, էցիալ և տելիոստադիաներով (-Opsis) զարգացող ժանգասնկերից հայտնաբերվել են *Gymnosporangium* ցեղի 6 ներկայացուցիչներ: Վերջիններս ախտահարում են Rosaceae ընտանիքին պատկանող բույսերին: Հայտնաբերվել են նաև -Opsis ձևով զարգացող *Puccinia* ցեղի 2 և *Uromyces* ցեղի 1 տեսակ, որոնք վարակում են Fabaceae, Lamiaceae և Scrophulariaceae ընտանիքներին պատկանող բույսերը: -Opsis ձևով զարգացող սնկերը կազմում են հայտնաբերված ժանգասնկերի 6,92%-ը:

Միայն տելիոստադիայով (Micro-) զարգացող սնկերից ԼՂ տարածքում հայտնաբերվել են 10 տեսակ *Puccinia* և 2 տեսակ *Uromyces* ցեղերի սնկեր: Վերջիններս մակարութում են Malvaceae, Lamiaceae, Asteraceae, Geraniaceae, Iridaceae, Oleaceae, Brassicaceae, Caryophyllaceae, Apiaceae և Liliaceae ընտանիքներին պատկանող բույսերի վրա: Նշված սնկերը կազմում են հայտնաբերված ժանգասնկերի 9,23%-ը:

Հայտնաբերվել են նաև 3 տեսակի անամորֆ սնկեր, որոնք կազմում են ուսումնասիրված ժանգասնկերի ընդհանուր թվի 2,3%-ը:

ԼՂ տարածքում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված ժանգասնկերն ըստ զարգացման առանձնահատկությունների խմբավորելով՝ բացահայտվել է, որ հայտնաբերված սնկերի շարքում *Puccinia ziziphorae* տեսակը, որն ախտահարում է ուրցադադը (*Ziziphora fasciculata*)՝ պատկանում է Cateu- ձևով զարգացող սնկերի շարքին և զարգացման ցիկլն ընթանում է առանց սպերմագոնիումների առաջացնան: Նույն կերպ է ընթանում նաև *Puccinia australis* սնկի զարգացումը:

Puccinia dictyodrema սնկի զարգացման ցիկլն ընթանում է էցիալ և տելիոստադիաներով, իսկ սպերմագոնիալ և ուրեղինիոստադիաները բացակայում են: Այս սունկը պատկանում է Catopsis- ձևով զարգացող սնկերին և հայտնաբերվել է ծիալախուրի (*Smyrnium perfoliatum*) վրա:

1936թ. Շուշի քաղաքի մոտակայքում և 2005-2006 թթ. Ազնաղբյուր և Հերիեր գյուղերում հայտնաբերվել է Fabaceae ընտանիքին պատկանող քարառվույտ՝ (*Coronilla orientalis*) ախտահարված *Puccinia coronilla* սնկով (Նանազյույան, Մարգարյան 2008): Վերջինիս զարգացման ցիկլը նույնպես ընթանում է էցիալ և տելիոստադիաներով, և սունկը դասվում է Catopsis- ձևով զարգացող սնկերի շարքին:

Այսպիսով՝ մեր կատարած ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել է, որ ԼՂՀ տարածքում հայտնաբերված 130 տեսակի ժամանակերից 80-ը՝ Eu-, 10-ը՝ Brachy-, 16-ը՝ Hemi-, 9-ը՝ -Opris և 12-ը՝ Micro- ձևերով զարգացող սնկեր են, իսկ 3 տեսակները պատկանում են անամորֆ ձևերին:

3.3. Ժանգասնկերի մասնագիտացումն ըստ տեր-բույսերի տեսակների

Ժանգասնկերի տարածվածությունը պայմանավորված է այն տերբույսերի տարածվածությամբ, որոնց վրա նրանք զարգանում են:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն ունենալով հարուստ բուսականություն՝ բարենպաստ միջավայր է սնկերի, մասնավորապես Uredinales կարգի ներկայացուցիչների զարգացման համար:

ԼՂՀ-ում՝ 2005-2010 թթ. կատարված ուսումնասիրությունների և արդեն ունեցած տվյալների վերլուծության արդյունքում հայտնաբերվել են 37 ընտանիքներին պատկանող տեր-բույսերի 217 տեսակներ, որոնք ախտահարված են 130 տեսակի ժանգասներով՝ ընդգրկված 10 ցեղերում:

Հանրապետության տարածքում հայտնաբերված ժանգասնկերի տարածվածությունն ըստ տեր-բույսերի ընտանիքների, ներկայացված է աղյուսակի տեսքով (աղ. 12):

Աղյուսակ 12

**Ժամանակակից ցեղերի խմբավորումն ըստ տեր - բույսերի
տեսակների և ընտանիքների**

Ց.հ.		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Տեր – բույսերի ընտանիքներ			<i>Aecidium</i>	<i>Coleosporium</i>	<i>Gymnosporangium</i>	<i>Melampsora</i>	<i>Milesia</i>	<i>Phragmidium</i>	<i>Puccinia</i>	<i>Pucciniastrium</i>	<i>Tranzschelia</i>	<i>Uromyces</i>	Ընդանու
Ց.հ.													
1		Apiaceae նեխուրազգիներ	-	-	-	-	-	-	8	-	-	1	9
2		Aspleniaceae լեզվապտերայիներ	-	-	-	-	1	-	-	-	-	-	1
3		Asteraceae աստղածաղկազգիներ	-	2	-	-	-	-	3 3	-	-	-	35
4		Berberidaceae ծորենազգիներ	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
5		Brassicaceae կաղամբազգիներ	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
6		Boraginaceae զաղուղիկազգիներ	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
7		Campanulaceae զանգակազգիներ	-	3	-	-	-	-	-	-	-	-	3
8		Caryophyllaceae մեխակազգիներ	-	-	-	-	-	-	2	-	-	5	7
9		Convolvulaceae պատառուկազգիներ	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
10		Crassulaceae թանձրատերևազգիներ	-	-	-	-	-	-	2	-	-	-	2
11		Cyperaceae բոշասզգիներ	-	-	-	-	-	-	3	-	-	-	3
12		Euphorbiaceae իշակաթնուկազգիներ	1	-	-	2	-	-	-	-	-	2	5

Աղ. 12. շարունակություն

	Fabaceae թիթենածաղկավորներ	-	-	-	-	-	-	1	-	-	20	21
14	Iridaceae հիրիկազգիներ	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
15	Gentianaceae բողազգիներ	-	-	-	-	-	-	2	-	-	-	2
16	Geraniaceae խորդենազգիներ	-	-	-	-	-	-	2	-	-	-	2
17	Juncaceae կնյունազգիներ	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
18	Lamiaceae խովեղինջազգիներ	-	-	-	-	-	-	10	-	-	-	10
19	Liliaceae շուշանազգիներ	-	-	-	1	-	-	6	-	-	1	8
20	Malvaceae սիմիերտազգիներ	-	-	-	-	-	-	7	-	-	-	7
21	Oleaceae ձիթենազգիներ	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
22	Onagraceae ապուզանազգիներ	-	-	-	-	-	-	-	1	-	-	1
23	Orchidaceae խլորձազգիներ	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
24	Poaceae ռաշտավլուկազգիներ	-	-	-	-	-	-	27	-	-	-	27
25	Polygonaceae մատիտեղազգիներ	-	-	-	-	-	-	8	-	-	4	12
26	Primulaceae զնաբրուկազգիներ	1	-	-	-	-	-	-	-	-	-	1
27	Ranunculaceae զորտնուկազգիներ	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
28	Rhamnaceae դժնիկազգիներ	-	-	-	-	-	-	3	-	-	-	3
29	Rosaceae վարդազգիներ	-	-	12	-	-	17	-	1	2	-	32
30	Rubiaceae սորոնազգիներ	-	-	-	-	-	-	5	-	-	-	5

Աղ. 12, շարունակություն

31	Rutaceae սատապազգիներ	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
32	Salicaceae ուռենազգիներ	-	-	-	2	-	-	-	-	-	-	2
33	Santalaceae սանտալազգիներ	-	-	-	-	-	-	1	-	-	-	1
34	Saxifragaceae քարքեկազգիներ	-	-	-	1	-	-	2	-	-	-	3
35	Scrophulariaceae խլածաղկազգիներ	-	-	-	-	-	-	-	-	-	-	1
36	Urticaceae եղինջազգիներ	-	-	-	-	-	-	2	-	-	-	2
37	Violaceae մանուշակազգիներ	-	-	-	-	-	-	2	-	-	-	2
38	Ընդամենը	2	5	12	6	1	17	136	2	2	34	217

Ուսումնասիրվող ժամանակահատվածում հայտնաբերվել են ժանգասնկերով ախտահարված 217 տեսակի բույսեր՝ ընդգրկված 37 ընտանիքներում: Կերլուծությունը ցույց է տվել, որ հիմնականում ախտահարվել են Asteraceae (34 տեսակ), Rosaceae (32), Poaceae (29), Fabaceae (21), Polygonaceae (12), Lamiaceae (10) և Apiaceae (9) ընտանիքներին պատկանող բույսեր: Հազվադեպ են վարակվել Berberidaceae, Onagraceae, Primulaceae, Rutaceae, Scrophulariaceae և այլ ընտանիքներին պատկանող բույսեր:

Պարզվել է, որ գերակշռում են *Puccinia* ցեղի ներկայացուցիչները, որոնք թվով 83 տեսակ են և կազմում են հայտնաբերված սնկերի կեսից ավելին: Դրանցից 20-ը մակարուծում են Asteraceae (33 տեսակ), 15-ը՝ Poaceae (27) ընտանիքներին պատկանող բույսերի վրա: *Puccinia* ցեղից 7 սմկատեսակներ մակարուծում են Apiaceae (8), 6-ը՝ Polygonaceae (8), 5-ը՝ Lamiaceae (10), չորսական՝ Rubiaceae (5) և Liliaceae (6) ընտանիքներին պատկանող բույսերի վրա: Մնացած ընտանիքների բույսերը վարակվում են *Puccinia* ցեղի մեկ կամ երկու տեսակի ժանգասնկերով:

Երկրորդ տեղն են զբաղեցնում *Uromyces* ցեղին պատկանող սնկերը. թվով 20 տեսակ, որոնք ախտահարում են Fabaceae (20), Caryophyllaceae (5), Polygonaceae (4), Euphorbiaceae (2) և մեկական՝ Scrophulariaceae, Apiaceae, Liliaceae ընտանիքներին պատկանող բույսեր:

Հայտնաբերվել են նաև *Phragmidium* ցեղի 8 տեսակներով ախտահարված Rosaceae ընտանիքին պատկանող 17 տեր-բույսեր, *Melampsora* ցեղի 6 տեսակի ժանգասնկով վարակված Salicaceae (2), Euphorbiaceae (2), Liliaceae (1) և Saxifragaceae (1) ընտանիքների բույսեր, *Gymnosporangium* ցեղի 6 տեսակով ախտահարված Rosaceae (12) ընտանիքին պատկանող բույսեր, *Coleosporium* ցեղի մեկ տեսակի ժանգասնկով վարակված Campanulaceae (3) և Asteraceae (2) ընտանիքների բույսեր, *Pucciniastrum* ցեղի 2 տեսակի սնկով ախտահարված մեկական Rosaceae և Onagraceae ընտանիքների բույսեր և *Tranzschelia* ցեղի մեկ տեսակով ախտահարված Rosaceae ընտանիքին պատկանող 2 տեր-բույսեր:

Անամորֆ սնկերից հայտնաբերվել է *Aecidium* (2) և *Milesia* (1) ցեղերին պատկանող տեսակներ, որոնք համապատասխանաբար մակաբուծում են Euphorbiaceae, Primulaceae և Aspleniaceae ընտանիքներին պատկանող մեկական բույսերի վրա:

Այսպիսով՝ ԼՂՀ տարածքում հայտնաբերված ժանգասնկերով վարակված 217 տեսակի տեր-բույսերից 136-ն ախտահարվել են *Puccinia*, 34-ը՝ *Uromyces*, 17-ը՝ *Phragmidium*, 12-ը՝ *Gymnosporangium*, 6-ը՝ *Melampsora*, 5-ը՝ *Coleosporium*, երկուական՝ *Pucciniastrum*, *Tranzschelia*, *Aecidium* և 1-ը՝ *Milesia* ցեղերի սնկերով:

3.3.1. Ժանգասնկերի խմբավորումն ըստ տեր-բույսերի կենսաձևերի

Ժանգասնկերն ախտահարելով վայրի և մշակովի բուսականությունը, բացասաբար են անդրադարձում դրանց կենսագործունելիքան, մշակովի բույսերի բերքատվության, ծաղկավոր բույսերի դեկորատիվ նշանակության վրա:

ԼՂՀ-ում տարածված ժանգասնկերն ըստ վայրի աճող և մշակովի կուլտուրաների կենսաձևերի՝ ներկայացված են այսուսկ 13-ում:

Կատարված վերլուծությունը ցույց է տվել, որ հիմնականում ախտահարվել են վայրի աճող բույսերը՝ թվով 193 տեսակ: Դրանցից 172-ը խոտաբույսեր են, 19-ը՝ թփեր և 2-ը՝ ծառեր:

Puccinia ցեղի ժանգասնկերով ախտահարվել են վայրի ֆլորայի տեր-բույսերի 128 տեսակներ, որոնցից 124-ը խոտաբույսեր են, իսկ 4-ը՝ թփեր:

Վայրի խոտաբույսերից հիմնականում ախտահարվել են Asteraceae (32) և Poaceae (23) ընտանիքներին պատկանող բույ-

սերը: Համեմատաբար թիզ թվով են ախտահարվել Lamiaceae (10), Apiaceae (8), Polygonaceae (8), Malvaceae (7), Liliaceae (5) և Rubiaceae (5) ընտանիքների ներկայացուցիչները: Նույն ցեղին պատկանող ժանգասնկերով ախտահարվել են Cyperaceae ընտանիքի 3 տեսակի տեր-բույս, Երկուական վարակվել են Gentianaceae, Crassulaceae, Urticaceae, Violaceae, Caryophyllaceae, Geraniaceae և մեկական՝ Ranunculaceae, Fabaceae, Brassicaceae, Boraginaceae, Santalaceae, Oleaceae, Convolvulaceae, Rutaceae, Orchidaceae, Juncaceae և Iridaceae ընտանիքներին պատկանող բուսատեսակներ:

Հայտնաբերվել են *Puccinia* ցեղի տեսակներով ախտահարված 4 տեսակի վայրի թփեր, որոնցից 3-ը պատկանում են Rhamnaceae, 1-ը՝ Berberidaceae ընտանիքներին: Վերջին 2 ընտանիքների ներկայացուցիչները հանդիսանում են միջանևյալ տեր-բույսեր որոց սնկերի զարգացման համար, որոնց համար հիմնական տեր-բույսեր են համարվում Poaceae ընտանիքին պատկանող տարրեր բույսեր:

Աղյուսակ 13 Ժանգասնկերի տեսակների խմբավորումն ըստ տեր-բույսերի կենսաձևերի

Տեղ	Խոտարույս		Թուփ		Ծառ	
	Վայրի	մշակովի	Վայրի	մշակովի	Վայրի	մշակովի
<i>Aecidium</i>	2	-	-	-	-	-
<i>Coleosporium</i>	5	-	-	-	-	-
<i>Gymnosporangium</i>	-	-	9	-	-	3
<i>Melampsora</i>	4	-	-	-	1	1
<i>Milesia</i>	1	-	-	-	-	-
<i>Phragmidium</i>	3	-	6	8	-	-
<i>Puccinia</i>	124	6	4	2	-	-
<i>Pucciniastrum</i>	2	-	-	-	-	-
<i>Tranzschelia</i>	-	-	-	-	1	1
<i>Uromyces</i>	31	3	-	-	-	-
Ընդամենը	172	9	19	10	2	5

Uromyces ցեղի ժանգասնկերով ախտահարվել են վայրի աճող խոտարույսերից 31 տեսակներ, որոնցից 19-ը՝ Fabaceae, 4-ը՝ Polygonaceae, 4-ը՝ Caryophyllaceae, 2-ը՝ Euphorbiaceae և մեկական Apiaceae, Scrophulariaceae, Liliaceae ընտանիքների ներկայացուցիչ-

Աեր են: *Melampsora* ցեղի սնկերով վայրի խոտաբույսերից ախտահարվել են Euphorbiaceae (2) և Liliaceae ու Saxifragaceae ընտանիքներին պատկանող մեկական բույսեր: *Phragmidium* ցեղի ժանգասնկերով ախտահարվել են Rosaceae ընտանիքից վայրի աճող 3 տեսակի խոտաբույս: *Pucciniastrum* ցեղի 2 սնկատեսակով ախտահարվել են Rosaceae և Onagraceae ընտանիքներին պատկանող մեկական բույսեր: *Aecidium* ցեղի 2 տեսակով վարակվել են Primulaceae և Euphorbiaceae ընտանիքներին պատկանող մեկական բույսեր և *Coleosporium*, *Milesia* ցեղերի մեկական տեսակի սնկերով ախտահարվել են հաճապատասխանաբար Campanulaceae (3), Asteraceae (2) և Aspleniaceae (1) ընտանիքներին պատկանող վայրի աճող խոտաբույսեր:

Հայտնաբերվել են նաև *Phragmidium* ցեղի սնկերով ախտահարված Rosaceae ընտանիքին պատկանող 6 և նույն ընտանիքին պատկանող *Gymnosporangium* ցեղի սնկերով ախտահարված 9 թփատեսակներ:

Melampsora և *Tranzschelia* ցեղի մեկական սնկատեսակներով ախտահարվել են Salicaceae և Rosaceae ընտանիքներին պատկանող վայրի աճող մեկական ծառեր:

ԼՂՀ տարածքում հայտնաբերվել են ժանգասնկերով ախտահարված մշակովի բույսերի թվով 24 տեսակներ, որոնցից 9-ը խոտաբույսեր են, 10-ը՝ թփեր և 5-ը՝ ծառեր:

Դարաբաղլում մշակովի աճող բույսերին առանձնապես մեծ վնաս են հասցնում *Puccinia*, *Uromyces* և *Phragmidium* ցեղերին պատկանող ժանգասնկերը:

Մշակովի խոտաբույսերից 6-ը ախտահարվել են *Puccinia* ցեղի սնկերով: Ախտահարված բույսերից 4-ը Poaceae, մեկական՝ Liliaceae ու Asteraceae ընտանիքների ներկայացուցիչներ են:

Հայտնաբերվել են նաև *Uromyces* ցեղի ժանգասնկերով ախտահարված մշակովի աճող 3 տեսակի խոտաբույս՝ Fabaceae (2) և Caryophyllaceae (1) ընտանիքներից:

Մշակովի թփերն ախտահարվել են *Phragmidium* և *Puccinia* ցեղերի սնկերով: *Phragmidium* ցեղի սնկերով վարակվել են Rosaceae ընտանիքին պատկանող 8 տեսակի մշակովի թփեր, իսկ *Puccinia* ցեղի սնկերով ախտահարվել են Saxifragaceae ընտանիքի 2 թփեր:

Puccinia caricina սնկով *Ribes rubrum* և *Grossularia reclinata* բույսերի ախտահարումը ԼՂՀ-ում շատ հազվադեպ երևույթ է: Պետք է նշել, որ լայնորեն տարածված են *Phragmidium* ցեղի

ներկայացուցիչներով Rosaceae ընտանիքին պատկանող թփերի ախտահարումը:

Gymnosporangium ցեղի ժանգասնկերով ախտահարվել են Rosaceae ընտանիքին պատկանող մշակովի 3 տեսակի ծառեր, իսկ Tranzschelia և Melampsora ցեղերի սնկերով վարակվել են համապատասխանաբար Rosaceae և Salicaceae ընտանիքներին պատկանող մեկական ծառատեսակներ:

ԼՂՀ-ում լայնորեն տարածված է *Prunus domestica* ծառատեսակի վարակը *Tranzschelia pruni-spinosae* սնկով, որի արդյունքում թուլանում են վարակված բույսերի պտղակոթունները և տերևակոթունները, իսկ տերևները դեղնում և ժամանակից շուտ թափվում են: Մյուս ծառերի վրա վարակվածությունը թույլ էր արտահայտված:

Այսպիսով՝ ԼՂՀ տարածքում 2005-2010 թթ. ողջ վեգետացիայի ընթացքում ժանգասնկերով ախտահարված տեր-բույսերի 217 տեսակներ խմբավորելով ըստ կենսաձևերի պարզվել է, որ 193-ը վայրի աճող տեսակներ են, իսկ 24-ը՝ մշակովի կուլտուրաներ: Ժանգասնկերով ախտահարված վայրի աճող բույսերից 172 տեսակները խոտաբույսեր են, 19-ը՝ թփեր և 2-ը՝ ծառեր, իսկ մշակովի կուլտուրաներից 9-ը խոտաբույսեր են, 10-ը՝ թփեր և 5-ը՝ ծառեր: Հայտնաբերված տեր-բույսերից 136-ը ախտահարվել են *Puccinia* ցեղի ժանգասնկերով, 34-ը՝ *Uromyces*, 17-ը՝ *Phragmidium*, 12-ը՝ *Gymnosporangium*, 6-ը՝ *Melampsora*, 5-ը՝ *Coleosporium*, երկուական՝ *Aecidium*, *Pucciniastrum*, *Tranzschelia* և *Milesia* ցեղերի մեջ սնկատեսակով:

Ժանգասնկերով ախտահարված տեր-բույսերի խմբավորումն ըստ տնտեսական նշանակության

Քանի որ ժանգասնկերը բացասաբար են անդրադարձում վարակված բույսերի բերքատվության և դեկորատիվ նշանակություն ունեցող տեսակների վրա, այդ իսկ պատճառով անհրաժեշտություն առաջացավ խմբավորել ԼՂՀ-ում նշված սնկերով ախտահարված տեր-բույսերն ըստ տնտեսական նշանակության (աղ. 14):

Ժանգասնկերով ախտահարված տեր-բույսերի 217 տեսակներից 94-ը կարելի է առանձնացնել ելնելով դրանց տնտեսական նշանակությունից: Կերպուծությունը ցույց է տվել, որ ախտահարված բույսերի մեծանանությունն ունեն դեղագործական նշանակություն: Հայտնաբերված 57 տեսակի դեղաբույսերն ախտահարվել են 41 սնկատեսակներով, որոնք հիմնականում *Puccinia* (26) ցեղի ներկայացուցիչներ են:

Ինտենսիվ էր ախտահարվածությունը հետևյալ դեղաբույսերի վրա. *Arctium lappa*, *Artemisia absinthium*, *Berberis vulgaris*, *Inula helenium*, *Malva sylvestris*, *Origanum vulgare*, *Rosa canina*, *Rumex crispus*, *Taraxacum vulgare*, *Trifolium pratense* և այլն:

Աղյուսակ 14
**Ժանգասնկերով վարակված տեր-բույսերի խմբավորումն ըստ
 տնտեսական նշանակության**

Տեղ	Aecidium	Coleosporium	Gymnosporangium	Melampsora	Phragmidium	Puccinia	Pucciniastrum	Tranzschelia	Uromyces	Ընդանենք
Բույսերի խմբերն ըստ տնտեսական նշանակության										
Դեղաբույսեր	1(1)*	1(1)	6 (3)	1(1)	3(2)	35 (26)	1(1)	-	9 (6)	57(41)
Ուտելի	-	-	1(1)	-	3(3)	13(11)	-	2(1)	2(2)	21(18)
Դեկորատիվ	-	-	-	1(1)	7(2)	1(1)	-	-	1(1)	10(5)
Կերային	-	-	-	-	-	-	-	-	6(3)	6(3)
Ընդամենը	1(1)	1(1)	7(4)	2(2)	13(7)	49(38)	1(1)	2(1)	18(12)	94(67)

*Վակագծերից դուրս մշկում են ախտահարված բույսերի թիվը, իսկ վակագծերում՝ մակարուծող սնկերի տեսակների քանակը:

Ուտունասիրվող տարածքում հայտնաբերված դեղաբույսերից 35 տեսակներն ախտահարվել են *Puccinia*, 9-ը՝ *Uromyces*, 6-ը՝ *Gymnosporangium*, 3-ը՝ *Phragmidium* և մեկական՝ *Aecidium*, *Coleosporium*, *Melampsora* և *Pucciniastrum* ցեղերի ներկայացուցիչներով:

Ուտելի բույսերից ախտահարվել են 21 տեսակներ, որոնցից 13-ը՝ *Puccinia*, 3-ը՝ *Phragmidium*, երկուական՝ *Uromyces*, *Tranzschelia* և 1-ը՝ *Gymnosporangium* ցեղերին պատկանող ժանգասնկերով:

Puccinia ցեղի տարբեր տեսակների սնկեր (*Puccinia coronata*, *P. persistens*, *P. graminis*) ախտահարթելով ցորենը և այլ հացահատիկային բույսերը, մեծ վնաս են հասցնում բերքատվությանը: Ժանգասնկերի մեծ տարածվածությունը հացահատիկային մշակաբույսերի վրա՝ հանգեցնում է բերքի մասնակի կորստի, հասկակալման շրջանում բույսերի աճի բռնացմանը:

ԼՂՀ տարածքում *Phaseolus vulgaris* բույսի ախտահարումը *Uromyces appendiculatus* ժանգասնկով դիտվել է աշնան ամիսներին, որի տարածվածությունը հանգեցրել է բերքի մասնակի կորստի: Այդ շրջանում ցանած լոբու ունդերը հիմնականում օգտագործվում են պահածոյացման նպատակով, իսկ ախտահարված բույսերի պտուղների վրա ևս նկատվել են ժանգասնկերի սպորների կուտակումներ, ինչը բացասաբար է ազդել լոբու ունդերի որակի վրա:

Առօրյա կյանքում առավել շատ կիրառվող 57 տեսակի դեղաբույսերից 12-ը ունեն նաև սննդային նշանակություն: Այդ դեղաբույսերից կարելի է առանձնացնել հետևյալ տեսակները. *Conium maculatum*, *Cydonia vulgaris*, *Polygonatum adans*, *P. orientale*, *Rubus idaeus*, *Urtica dioica*, *U. urens* և այլն:

Դեկորատիվ նշանակություն ունեցող բույսերից վարակվել են 10 տեսակներ: Դրանք ախտահարվել են *Puccinia*, *Uromyces* և *Melampsora* ցեղերին պատկանող մեկական ժանգասնկերի տեսակներով, ինչպես նաև *Phragmidium* ցեղին պատկանող 2 սնկատեսակով:

Սունկանակերտ քաղաքի պուրակներում աճեցվող հիմնական ծաղկատեսակ *Bellis perennis* խտաբույսի առանձնյակներն ախտահարվել են *Puccinia obscura* սնկով, ինչը հանգեցրել է դրանց ծաղկակորունների և տերևների ծևախախտման ու դեկորատիվ նշանակության կորստի:

Պարզվել է նաև, որ *Uromyces dianthi* ժանգասնկի վարակը շատ արագ տարածվում է ծերմոցային պայմաններում աճեցվող *Dianthus* sp. տեսակի վրա: Այս հանգեցրել է ցողունների վրա սնկի սպորատվության խիստ կուտակումների առաջացման, որի հետևանքով ցողունները ծռնչվել և ծևափոխվել են: Սուլվան արագ տարածվելով նվազեցրել է բույսի դեկորատիվ նշանակությունը: Ուսումնասիրության ոչ բոլոր տարիներին են հայտնաբերվել *Melampsora coleosporioides* սնկով ախտահարված *Salix babylonica* տեսակի ծառեր: Հայտնաբերման դեպքում դիտվել է վարակի ինտենսիվ արտահայտվածություն: Վերջինս բացասաբար է ազդում նշված առանձնյակների դեկորատիվ նշանակության վրա, քանի որ տերևներն ամբողջությամբ ծածկվում են դեղին և ժանգագույն փառով ու ժամանակից

շուտ թափվում: *Phragmidium mucronatum* և *Ph. tuberculatum* սնկատեսակներով ախտահարվել են վարդերի 7 տարբեր տեսակներ, որոնց դեկորատիվ նշանակությունը նույնպես նվազել է:

Կերային նշանակություն ունեցող բույսերից ախտահարվել են 6 տեսակներ, որոնք վարակվել են *Uromyces* ցեղին պատկանող 3 տեսակի ժանգասնկերով: Գյուղատնտեսական կերաբույսերի վարակվածությունը համագեցրել է բույսերի կերային արժեքի նվազման: Կերջինս կախված է ախտահարվածության աստիճանից:

Այսպիսով՝ ախտահարված տեր-բույսերն ըստ տնտեսական նշանակության խնբավորելուց պարզվել է, որ հայտնաբերված 94 տեսակներից 57-ը դեղաբույսեր են, 21-ը՝ ուտելի, 10-ը՝ դեկորատիվ և 6-ը՝ կերային նշանակություն ունեցող:

Ժանգասնկերի նշված բացասական ներգործություններից խուսափելու համար այժմ նշակվել և կիրառվում են պայքարի տարբեր միջոցառումներ: Խիստ կարևորվում է ախտահարված միջանկյալ տեր-բույսերի ոչնչացումը: Ազրոտեխնիկական միջոցառումները, որոնք սահմանափակում են բույսերի ժանգասնկային հիվանդությունների զարգացումը, նպաստում են հացահատիկային բույսերի բերքատվության բարձրացմանը: Պայքարի քիմիական եղանակն արդյունավետ է միայն բազմայնյա կուլտուրաների ժանգասնկերի ոչնչացման, կամ արժեքավոր սելեկցիոն նյութի մշակման համար:

Ժանգանակակից ուսումնասիրության էտապում հիմնական ուշադրությունը սևեռվում է սնկերի պոպուլյացիայի կառուցվածքին, ռասային կազմին, գեների վիրուլենտությանը, սորտավիդիտության նշանակությանը, ավելի կայուն սորտերի ստեղծման համար նոր մեթոդների կիրառմանը, ինչպես նաև պաթոգեն սնկերի և տեր-բույսերի գենետիկական, ֆիզիոլոգիական ու կենսաքիմիական փոխարաբերությունների բացահայտմանը:

Գ???? IV. ???Գ?????????

????????????????????? ?????????? ??????????

????????????????????? ?????????? ?? ??????

????????????? ?????? ??????????????????

????????????? ?????? ??????????????????

4.1. Ժանգասնկերի տարածվածությունն ըստ շրջանների

Ուսումնասիրվող ժամանակահատվածում ԼՂՀ տարածքի տարբեր շրջաններում հայտնաբերվել են 130 տեսակի ժանգասնկեր՝ ընդգրկված 6 ընտանիքների 10 ցեղերում:

Հետազոտությունները հիմնականում իրականացվել են նախալեռնային և միջին լեռնային գոտիներում: Համեմատաբար քիչ են ուսումնասիրվել ցածրադիր և բարձր լեռնային գոտիները: Հայտնաբերված ժանգասնկերի տարածքային տեղակայվածությունը պարզելու նպատակով խնդբավորվել ենք սնկերն ըստ շրջանների:

Վերլուծությունը ցույց է տվել, որ հայտնաբերվել են Pucciniastaceae ընտանիքին պատկանող *Pucciniastrum* ցեղի 2 տեսակներ, որոնցից *Pucciniastrum agrimoniae* սունկը հայտնաբերվել է միայն ԼՂԻՄ-ում, իսկ *P. circaeae* տեսակն ինչպես ԼՂԻՄ-ի տարածքում, այնպես էլ Ասկերանի և Մարտունու շրջաններում:

Հանրապետության տարածքում հայտնաբերվել է Coleosporiaceae ընտանիքին պատկանող *Coleosporium* ցեղի մեկ տեսակի ժանգասունկ (*Coleosporium tussilaginis*), որը հայտնաբերվել է Ասկերանի, Մարտունու, Շուշիի շրջաններում:

Melampsoraceae ընտանիքին պատկանող *Melampsora* ցեղից հայտնաբերվել են 6 տեսակներ, որոնցից 3-ը (*Melampsora caprearum*, *M. coleosporioides*, *M. reticulatae*) նոր տեսակներ են ԼՂՀ միկոբիոտայի համար և հայտնաբերվել են Ասկերանի շրջանում, 2 տեսակ (*M. euphorbiae*, *M. helioscopiae*) հայտնաբերվել են ԼՂԻՄ-ի տարածքում, իսկ *M. lini* սնկատեսակը՝ ԼՂԻՄ-ում և Մարտունու շրջանում:

Uropyxidaceae ընտանիքին պատկանող *Tranzschelia* ցեղի մեկ ներկայացուցիչ (*Tranzschelia pruni-spinosae*) հայտնաբերվել է Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում: Վերջինս ԼՂՀ միկոբիոտայում նոր տեսակ է:

Phragmidiaceae ընտանիքի *Phragmidium* ցեղից հայտնաբերվել են 8 ժանգասնկեր, որոնցից 4-ը նոր տեսակներ են ԼՂՀ միկոբիոտայում: *Phragmidium mucronatum* սունկը հայտնաբերվել է Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում, *Ph. rubi-idaei* տեսակը՝ Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի շրջաններում, *Ph. violaceum* տեսակը՝ Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի և Հադրութի շրջաններում, իսկ *Ph. potentillae* տեսակը հայտնաբերվել է միայն Ասկերանի շրջանում: Մյուս 4 տեսակներից *Ph. rubi* սունկը հայտնաբերվել է Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի շրջաններում և ԼՂԻՄ-ի տարածքում, *Ph. fragariastrum* տեսակը՝ միայն ԼՂԻՄ-ի տարածքում, *Ph. sanguisorbae* տեսակը՝ Ասկերանի, Մարտունու և Շահումյանի շրջաններում, և *Ph. tuberculatum* տեսակը՝ Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հադրութի և Քաշարաղի շրջաններում:

Հայտնաբերվել են նաև *Pucciniaceae* ընտանիքից *Gymnosporangium* ցեղին պատկանող 6 տեսակներ, *Puccinia* ցեղի 83 և *Uromyces* ցեղի 20 տեսակներ:

Gymnosporangium ցեղի 6 ժանգասնկերից *Gymnosporangium fuscum* և *G. tremelloides* սնկատեսակները ԼՂՀ միկոբիոտայում հայտնաբերվել են առաջին անգամ՝ Ասկերանի շրջանում: Մյուս 4 տեսակներից *G. clavariiforme* սունկը հայտնաբերվել է Քաշարաղի շրջանում, *G. confusum* տեսակը՝ Շահումյանի, Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու շրջաններում և ԼՂԻՄ-ում, *G. cornutum* տեսակը՝ Շուշիի շրջանում և ԼՂԻՄ-ում և *G. fusisporum* տեսակը՝ Քաշարաղի, Շահումյանի շրջաններում, ինչպես նաև ԼՂԻՄ-ի տարածքում:

Հայտնաբերվել են *Uromyces* ցեղին պատկանող 20 տեսակի ժանգասնկեր, որոնցից 8-ը նոր տեսակներ են ԼՂՀ միկոբիոտայում: Դրանցից *Uromyces coronillae* և *U. thapsi* տեսակները հանդիպում են Մարտունու շրջանում, *U. viciae-fabae* տեսակը՝ Ասկերանի, *U. fallens* տեսակը՝ Ասկերանի և Մարտունու, *U. heimerlianus* տեսակը՝ Շուշիի և Մարտունու շրջաններում, *U. onobrychidis* և *U. rumicis* տեսակները՝ Մարտակերտի, Ասկերանի, Մարտունու շրջաններում և *U. appendiculatus* տեսակը՝ Մարտունու, Ասկերանի շրջաններում, ինչպես նաև Ստեփանակերտ քաղաքում:

Նշված ցեղի մնացած 12 տեսակներից 4-ը (*U. euphorbiae-corniculati*, *U. hippomarathri*, *U. inaequialtus*, *U. scillarum*) հայտնաբերվել են ԼՂԻՄ-ի տարածքում, *U. trifolii-repentis* և *U. euphorbiae* սնկատեսակները՝ Ասկերանի շրջանում և ԼՂԻՄ-ում, *U. anthyllidis*

տեսակը՝ Շահումյանի շրջանում, *U. dianthi* տեսակը՝ Շահումյանի շրջանում և Ստեփանակերտ քաղաքի մերձակայքում, *U. risi* տեսակը՝ Շուշիի, Ասկերանի, Մարտունու շրջաններում, *U. polygoni-aviculariae* տեսակը՝ Ասկերանի և Մարտակերտի շրջաններում, *U. punctatus* տեսակը՝ Ասկերանի, Շահումյանի, Մարտունու շրջաններում և ԼՂԻՄ-ում, և *U. striatus* տեսակը՝ հայտնաբերվել է Շահումյանի, Մարտունու և Ասկերանի շրջաններում:

Pucciniaceae ընտանիքի *Puccinia* ցեղին պատկանող 83 տեսակի սննդերից 24-ը ԼՂՀ միկոբիոտայի համար նոր տեսակներ են, որոնցից 8-ը (*Puccinia armeniaca*, *P. celakovskiana*, *P. chaerophylli*, *P. dactylidina*, *P. hordei*, *P. opopordi*, *P. polygoni-amphibii*, *P. stachydis*) հայտնաբերվել են միայն Ասկերանի շրջանում, 4-ը՝ (*P. arenariae*, *P. bupleuri*, *P. phragmitis*, *P. rangiferina*) միայն Շուշիի շրջանում, *P. heraclei* տեսակը՝ Ստեփանակերտ քաղաքի մերձակայքում, 5 տեսակներ՝ (*P. annularis*, *P. conii*, *P. convolvuli*, *P. violae*, *P. xanthii*) Ասկերանի և Մարտունու շրջաններում, *P. allii* տեսակը՝ Ասկերանի և Մարտակերտի շրջաններում, *P. leveillei* և *P. punctata* սնկատեսակներ՝ Ասկերանի և Շուշիի շրջաններում, *P. nigrescens* տեսակը՝ Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի շրջաններում, *P. bardanae* և *P. tanacetii* սննդեր՝ Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում:

Puccinia ցեղի մյուս 59 տեսակներից 21-ը հայտնաբերվել են միայն ԼՂԻՄ-ի տարածքում, 3-ը՝ (*P. australis*, *P. barkhausiae-rhoeadifoliae*, *P. calcitrapae*) Շահումյանի, 3-ը՝ (*P. convolvuli*, *P. longissima*, *P. psephellii*) Քաշարաղի, *P. triseti* տեսակը՝ Մարտունու, 5-ը՝ (*P. asperulae-apparines*, *P. bromina*, *P. hieracii*, *P. jaceae*, *P. retifera*) ԼՂԻՄ-ի և Ասկերանի, 4-ը՝ (*P. caricina*, *P. sessilis*, *P. drabae*, *P. polygoni-alpinii*) ԼՂԻՄ-ի և Շուշիի, *P. jasmino* և *P. persistens* տեսակները՝ ԼՂԻՄ-ի և Շահումյանի, *P. stipina* և *P. wolgensis* սնկատեսակները՝ ԼՂԻՄ-ի և Հադրութի, 3-ը՝ (*P. striiformis*, *P. lapsanae*, *P. triticina*) Ասկերանի և Շահումյանի շրջաններում, *P. coronata* տեսակը՝ ԼՂԻՄ-ում և Քաշարաղում, *P. iridis* տեսակը՝ Ասկերանում Մարտունիում ու ԼՂԻՄ-ում, *P. cynodontis* տեսակը՝ Մարտունիում և ԼՂԻՄ-ում, *P. acetosae* տեսակը՝ ԼՂԻՄ-ում, Մարտակերտի ու Շուշիի շրջաններում, *P. graminis* տեսակը՝ ԼՂԻՄ-ում, Ասկերանում, Մարտակերտում և Շուշիում, *P. menthae* տեսակը՝ ԼՂԻՄ-ում, Ասկերանում, Մարտունիում և Շուշիում, *P. centaureae* տեսակը՝ Ասկերանում, Մարտունիում, ԼՂԻՄ-ում և

Քաշաթաղում, *P. coronillae* տեսակը՝ Շուշիում, Ասկերանում և Մարտունիում, *P. malvacearum* սունկը հայտնաբերվել է Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հաղորութի, Շահումյանի, շրջաններում, ԼՂԻՄ-ում և Ստեփանակերտ քաղաքի մերձակայքում, *P. bromina* տեսակը՝ Քաշաթաղում, Ասկերանում և ԼՂԻՄ-ում, *P. cesatii* տեսակը՝ Քաշաթաղում, Մարտունիում և ԼՂԻՄ-ում, *P. coronata* տեսակը՝ Ասկերանում, Քաշաթաղում, Շուշիում, ինչպես նաև ԼՂԻՄ-ում, *P. obscura* տեսակը՝ Ստեփանակերտում և ԼՂԻՄ-ում *P. picridis* տեսակը՝ Քաշաթաղում և Մարտակերտում, *P. pimpinellae* տեսակը՝ Ասկերանում և Քաշաթաղում:

Անամորֆ ձևերից հայտնաբերվել են *Milesia* (1) և *Aecidium* (2) ցեղերի ժանգասնկեր: *Milesia* ցեղին պատկանող *Milesia feurichii* սունկը հայտնաբերվել է ԼՂԻՄ-ի տարածքում: *Aecidium* ցեղի ներկայացուցիչները (*Aecidium euphorbiae*, *A. primulinum*) նոր տեսակներ են ԼՂՀ միկրօբիոտայում և հայտնաբերվել են Մարտունու ու Մարտակերտի շրջաններում:

Խմբավորելով ԼՂՀ-ում տարածված ժանգասնկերն ըստ շրջանների, պարզվել է, որ կան սնկեր, որոնք հայտնաբերվել են միայն մեկ շրջանում, և կան տեսակներ, որոնք հանդիպել են մեկ և ավելի շրջաններում: Նախկին ԼՂԻՄ-ի տարածքում հայտնաբերվել են 57 տեսակի սնկեր, որոնք ուսումնասիրվող ժամանակահատվածում չեն հայտնաբերվել ԼՂՀ շրջաններում, դա բացատրվում է նրանով, որ ուսումնասիրությունները, որոնք անկուփել են Վ.Ի. Ույանիշչի աշխատություններում, իրականցվել են սահմանամերձ գոտում, որտեղ բուսականությունը և բնակլիմայական պայմանները որոշակիորեն տարբերվում են ուսումնասիրված տարածքներից:

Այսպիսով՝ Ասկերանի շրջանում հայտնաբերվել են 44 տեսակի ժանգասնկեր, որոնցից 18-ը պատկանում են *Puccinia*, 11-ը՝ *Uromyces*, 7-ը՝ *Phragmidium*, 3-ը՝ *Melampsora*, 2-ը՝ *Gymnosporangium* և մեկական՝ *Coleosporium*, *Pucciniastrum* և *Tranzschelia* ցեղերին:

Մարտունու շրջանում հայտնաբերվել են 29 տեսակի ժանգասնկեր, որոնցից 8-ը պատկանում են *Puccinia*, 10-ը՝ *Uromyces*, 6-ը՝ *Phragmidium* և մեկական՝ *Melampsora*, *Coleosporium*, *Pucciniastrum*, *Tranzschelia* և *Aecidium* ցեղերին:

Շահումյանի շրջանում հայտնաբերվել են 21 տեսակներ, որոնցից 13-ը պատկանում են *Puccinia*, 4-ը՝ *Uromyces*, 3-ը՝ *Gymnosporangium* և 1-ը՝ *Phragmidium* ցեղերին:

Մարտակերտի շրջանում հայտնաբերվել են 13 տեսակի ժանգասնկեր, որոնցից 3-ը պատկանում են *Puccinia*, 3-ը՝ *Uromyces*, 5-ը՝ *Phragmidium* և մեկական՝ *Tranzschelia* և *Aecidium* ցեղերին:

Չուշիի շրջանում հայտնաբերվել են 12 տեսակներ, որոնցից 8-ը պատկանում են *Puccinia*, 2-ը՝ *Uromyces*, մեկական՝ *Coleosporium* և *Gymnosporangium* ցեղերին:

Քաշաթաղի շրջանում հայտնաբերվել են 9 տեսակի սնկեր, որոնցից 7-ը պատկանում են *Puccinia*, մեկական՝ *Phragmidium* և *Gymnosporangium* ցեղերին:

Հադրութի շրջանում հայտնաբերվել են 6 տեսակի ժանգասնկեր, որոնցից 3-ը պատկանում են *Puccinia*, 2-ը՝ *Phragmidium*, և 1-ը՝ *Tranzschelia* ցեղերին:

Նախկին ԼՂԻՄ-ում հայտնաբերվել են 57 տեսակներ, որոնցից 40-ը պատկանում են *Puccinia*, 7-ը՝ *Uromyces*, 3-ը՝ *Melampsora*, երկուական՝ *Phragmidium*, *Pucciniastrum*, *Gymnosporangium* և 1-ը՝ *Milesia* ցեղերին:

Ստեփանակերտ քաղաքի պուրակներում և շրջակայքում հայտնաբերվել են 4 տեսակներ, որոնցից 2-ը պատկանում են *Uromyces* ցեղին, իսկ մեկական՝ *Phragmidium* և *Tranzschelia* ցեղերին:

4.2. ԼՂՀ և «Ժանգասնկերի համեմատական վերլուծությունը»

Հետազոտման նյութ է հանդիսացել 2005-2010 թթ. կատարված արշավների արդյունքում հավաքված և 315 նքուշներից կազմված հերբարիումը:

Բացի այդ, համեմատական վերլուծություն կատարելու նպատակով հետազոտվել են ԵՊՀ-ի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի հերբարիումում պահպանվող նյութերը, ինչպես նաև ուսումնասիրվել են մեզ հասանելի գրական աղբյուրները Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ժանգասնկերի վերաբերյալ:

ԼՂՀ և «Ժարածքներում հայտնաբերված ժանգասնկերի համեմատական վերլուծությունը կատարվել է «ժակարի ֆլորիստական ընդհանրության գործակցով» (Վելուկանոս ս ճր., 1980), որի միջոցով բացահայտվել է 2 հանրապետությունների ժանգասնկերի բիոտաների համապատասխանության (KJ) աստիճանը:

$$KJ = 100 \times \frac{c}{(a+b-c)}$$

որտեղ ա-ն՝ համեմատվող առաջին տարածքի սնկերի թիվն է,
բ-ն՝ համեմատվող երկրորդ տարածքի սնկերի թիվը,
c-ն՝ համեմատվող տարածքների համար ընդհանուր սնկերի
թիվը,

Հետազոտվող 2 համրապետությունների համար KJ-ն՝
ընդհանրության գործակիցը, կազմել է 38,62%:

Բացահայտվել է նաև ԼՂՀ և ՀՀ ժանգանկերի տեսակային
կազմի տարբերության գործակիցը (ԿՃ), որը կազմել է 61,38%:

Բացահայտվել է նաև տարբերության գործակիցը՝ ԿՃ-ն,

$$ԿՃ = \frac{(a+b-2c)}{(a+b-c)} \times 100,$$

ԿՃ-ն ցույց է տալիս համեմատվող սնկերի բիոտաների տե-
սակմերի և ցեղերի միջև տարբերության աստիճանը (Վելսկանօս և
Ճ.ր., 1980): Ընդհանրության և տարբերության գործակիցներն
արտահայտվում են տոկոսներով և դրանց գումարը պետք է կազմի
100%:

Այսպիսով՝ ԼՂՀ և ՀՀ միկոբիոտայի ֆլորիստական ընդհանրու-
թյան գործակիցը կազմել է 38,62%, իսկ տարբերության գործա-
կիցը՝ 61,38 %:

ԼՂՀ տարածքում 2005-2010 թթ. վեգետացիայի ընթացքում կա-
տարված հետազոտությունների արդյունքները համեմատելով ՀՀ-ում
կատարված նույնատիպ աշխատանքների հետ պարզվել է, որ
ԼՂՀ տարածքում հայտնաբերված 130 տեսակի ժանգանկերից 18-ը
ՀՀ միկոբիոտայում առ այսօր չեն հայտնաբերվել, որոնցից 11
տեսակը պատկանում են *Puccinia* (*Puccinia spilogena*, *P. silvatica*,
P. retifera, *P. coronillae*, *P. drabae*, *P. obscura*, *P. sessilis*, *P. dictyodrema*,
P. wolgensis, *P. thesii*, *P. psoroderma*), 3-ը՝ *Uromyces* (*Uromyces coronillae-variae*, *U. hippomarathri*, *U. thapsi*) և մեկա-
կան՝ *Milesia* (*Milesia feurichii*), *Aecidium* (*Aecidium primulinum*),
Gymnosporangium (*Gymnosporangium cornutum*), *Phragmidium* (*Phragmidium fragariastrum*) ցեղերին:

ԼՂՀ բնաշխարհում հայտնաբերվել են ժանգանկերով վարակ-
ված 86 տեսակի տեր-բույսեր և տեր-բույսերի 3 ընտանիքներ
(Gentianaceae, Aspleniaceae, Rutaceae), որոնք ժանգանկերով
ախտահարված վիճակում առ այսօր չեն նշվել ՀՀ միկոբիոտայում:

ԼՂՀ տարածքում հայտնաբերված և ՀՀ միկոբիոտայում դեռևս
չնշված տեր-բույսերից կարելի է առանձնացնել որոշ տեսակներ,
որոնք հազվադեպ վարակվող տեսակներ են:

Liliaceae ընտանիքին պատկանող *Ornithogalum* sp. տեսակի վրա զարգանում են *Puccinia hordei* ժանգանկի սպերմագոնիալ և էցիալ փուլերը, իսկ ուրեղինիոն- և տելջոստաղիաները զարգանում են *Hordeum* sp. տեսակի վրա: << տարածքում հայտնաբերվել են միայն վերջին 2 փուլերը: Նշված փուլերը չեն հայտնաբերվել նաև նախկին ԽՍՀՄ տարածքում և նոյնիսկ Հեռավոր Արևելքում, մինչդեռ ԼՂՀ-ում այն տարածված տեսակ է: *Puccinia hordei* սնկի սպերմագոնիալ և էցիալ փուլերը *Ornithogalum* sp. տեսակի, իսկ ուրեղինիումները և տելիումները՝ *Hordeum* sp. տեսակի վրա հայտնաբերվել եր Ն. Հիրացուկայի կողմից 1958 թվականին (Ազ- բուհա, 2005):

Ranunculaceae ընտանիքից *Ranunculus szowitsianus* տեր- բույսը *Puccinia perplexans* սնկով վարակված վիճակում հայտնա- բերվել է Վաղ գարնանը, որի վրա զարգանում է նշված սնկի էցիալ փուլը: Ախտահարված բույսը հայտնաբերվել է 2008թ. մարտի 28-ին ԼՂՀ Ասկերանի շրջանի Ակնաբերյուր գյուղում (հայտնաբերվել է միայն մեկ անգամ): Նշված տեսակը ժանգանկերի մասին տպա- գրված մեզ հայտնի ոչ մի աշխատությունում որպես տեր-բույս չի նշվում (Սլեյնսու, 1959, 1960, 1962; Տեմերենիկովա-Բաբայն 1977; Ազբուհա, 2005 և այլն): Նշենք, որ *Puccinia perplexans* սունկը տարածված տեսակ է, զարգանում է Ranunculaceae ընտանիքին պատկանող այլ բույսերի վրա և հայտնաբերվել է թե << տարածքում, թե այլ երկրներում:

Asteraceae ընտանիքին պատկանող մշակովի աճեցվող մար- գարտածաղիկը (*Bellis perennis*) *Puccinia obscura* ժանգանկով ախտահարված վիճակում հայտնաբերվել է 2009թ. մայիսին Ստե- փանակերտ քաղաքի պուրակներում, իսկ ուրեղինիոն- և տելիոստա- ղիաները ԼՂԻՄ-ի տարածքում հայտնաբերվել էին փայլուկի (*Luzula multiflora*) վրա (Սլեյնսու, 1960): Եվ սունկը, և տեր-բույսը << միկոբիոտայում դեռևս չեն հայտնաբերվել: Մեզ հայտնի աշխատու- թյուններում նշվում է, որ սնկի էցիալ փուլը հայտնաբերվել է միայն Վ.Գ. Տրանշելի կողմից 1939թ., իսկ ԼՂՀ-ում այն հաճախ հանդիպող տեսակ է (Սլեյնսու, 1960):

ԼՂՀ տարածքում լայնորեն տարածված և << միկոբիոտայում չնշված տեր-բույսեր հանդիսացող տեսակներից են. *Althaea grossheimii*, *Galium aparine*, *Malvalthaea transcaucasica*, *Mentha aquatica*, *Potentilla micrantha*, *Rosa alpine*, *Rubia tinctorum*, *Salix babylonica*, *Taraxacum vulgare*, *Viola alba*, *V. somchetika* և այլն:

Առանձնացնենք նաև ԼՂՀ տարածքում հազվադեպ հանդիպող և ՀՀ միկոբիոտայում չնշված որոշ տեր-բույսեր. *Rhamnus cathartica*, *Ribes rubrum*, *Saxifraga aizoides*, *Verbascum thapsus* և այլն:

ԼՂՀ տարածքում հայտնաբերվել են նաև 12 տեսակի տեր-բույսեր, որոնք ՀՀ միկոբիոտայում ախտահարվել են այլ ժանգա-սմկերով, իսկ ներկայացված սմկերի համար նշվում են առաջին անգամ: Նշված տեր-բույսերն ընդգրկված են 4 ընտանիքներում, և ախտահարվել են 11 տեսակի ժանգասնկերով, որոնցից 8-ը՝ *Ruscinia* և մեկական՝ *Phragmidium*, *Gymnosporangium*, *Uromyces* ցե-ղերի ներկայացուցիչներ են:

Գ???? Վ. ??????? ??????? ?????????? ??????? ??????? ??? Գ?????? ???????

Ստորև ներկայացվում են ԼՂ-ում հայտնաբերված ժանգա-սնկերի տեսակներն ըստ ընտանիքների, որտեղ ցեղերը և տե-սակները դասավորված են այբենական կարգով, միաժամանակ տրվում են հոմանիշները և նշված սմկով պիտահարված բոլյսերի լատիներեն անվանումները, հավաքման վայրը և ժամանակա-հատվածը: Փակագծերում տրված են հրատարակման տարեթիվը և հեղինակը:

Կոնսպեկտում ներկայացվում են պիտահարված բոլյսերի անվանումները, դրանց հայտնաբերման վայրերը հին ու նոր անվանումներով (հին անվանումները փակագծերում), ինչպես նաև այն սնկատեսակները, որոնք հայտնաբերվել են մինչ մեր ուսումնասիրությունները:

Բացի վերը նշվածից կոնսպեկտում ընդգրկված են աստղա-նիշերով (*) տարբերակված սնկեր, որոնք առաջին անգամ են հայտնաբերվել ԼՂ տարածքում, դրանց վերաբերյալ ներկա-յացվում է նաև ամփոփ նկարագիր:

Նյութի մշակումը և լաբորատոր աշխատանքներն իրակա-նացվել են սնկաբանական ընդունված մեթոդներով (Методы экспер. микологии, 1982; Mueller et al., 2004):

Սնկերը որոշելու համար օգտագործվել են մենագրություններ, որոշիչներ (Կորեևսի, Սլյանիշև, 1975; Պատոլուսկո 1977; Սլյա-նիշև 1978; Մինկավսկի, 1984; Սլյանիշև և ար., 1985; Ազբուկինա, 2005):

Կոնսպեկտում սնկերի կարգաբանությունը կատարվել է ըստ Զ.Ս. Ազբուկինայի (Ազբուկինա, 2005):

Սնկերի տեսակների անվանումներում հեղինակների ազգա-նունների կրձատումները կատարվել են ըստ Τ. Կիրկի և Α. Անսելի (Kirk, Ansell, 2003):

Տեր-բոլյսերի հոմանիշները տրվել են փակագծերում, իսկ լա-տիներեն անվանումները ներկայացվել են ըստ Ս.Կ. Չերեպանովի (Черепанов, 1995):

Բաժին - Basidiomycota

Դաս - Urediniomycetes

Կարգ - Uredinales

Ընտանիք - Pucciniastaceae

Ցեղ - *Pucciniastrum*

1. *Pucciniastrum agrimoniae* (Dietel) Tranzschel - *Agrimonia eupatoria* L. - ԼՂԻՄ, 2.07.1937թ. (Սլյանիշև, 1959):

2. *Pucciniastrum circaeae* (G. Winter) Speg. - *Circaea lutetiana* L.

- ԼՂԻՄ, 6.08.1937թ. (Սլյանիշև, 1960); գ. Սու, 16.07.2005թ.; գ. Ակնաղբյուր, 23.07.2005թ.:

Ընտանիք - Coleosporiaceae

Ցեղ - *Coleosporium*

3. *Coleosporium tussilaginis* (Pers.) Lev. - syn. *Coleosporium campanulae* (Pers.) Lev. - *Campanula alliariifolia* Willd. - գ. Ակնաղբյուր, 7.05.2006թ.; *C. rapunculoides* L. - ք. Աղդամ, 20.07.1932թ. (Սլյանիշև, 1959); գ. Ակնաղբյուր, 1.05.2008թ.; գ. Սարգսաշեն, 25.05.2008թ.; գ. Քարին տակ, 06.06.2008թ.; ք. Շուշի, 4.08.2005թ.; *C. trautvetteri* Grossh. ex Fed. - ԼՂԻՄ, 15.07.1950թ. (Սլյանիշև, 1959); *Inula helenium* L. - ք. Շուշի, 10.08.2008թ.; *I. sp.* - գ. Ակնաղբյուր, 23.07.2005թ.; գ. Կարմիր գյուղ, 28.07.2005թ.; գ. Հաղործի, 5.08.2005թ.:

Ընտանիք - Melampsoraceae

Ցեղ - *Melampsora*

4*. *Melampsora caprearum* (DC.) Thuem. - *Salix caprea* L. - գ. Մադաթաշեն, 1.08.2005թ.; գ. Ակնաղբյուր, 10.08.2005թ.:

Սպերմագոնիումները տերևների վերին մակերեսներին են, կուտիկուլայի տակ, 30-100 մկմ լայնությամբ և 60-70 մկմ բարձրությամբ: Եցիումները տերևների ստորին մակերեսներին են, մեկական կամ բազմաքանակ, ցրված դեղնավուն կետերում, 0,5-1 մմ երկարությամբ, բաց նարնջագույն: Եցիուաղոնները կլոր են կամ երկարավուն, երեսն թթվակի անկյունաձև, 18-26 x 12-18 մկմ, թաղանթը 1,5-2 մկմ հաստությամբ, խիտ և նուրբ գորտնուկավոր:

Ուրեղինիումները տերևների ստորին մակերեսներին են, երբեմն նաև վերին մասում՝ դեղին կետերի վրա ցրված, կլորավուն, 1-2 մմ տրամագծով, նարնջագույն: Ուրեղինիուսպորները գնդաձև են կամ լայն էլիպսուղղալ, 15-24 x 11-18 մկմ, թաղանթը 2,5-4 մկմ հաստությամբ է, առանց հարթ հատվածների, գորտնուկավոր, 5-7 ցրված ծակուտիներով: Պարաֆիզները գլխիկավոր են 45-55 x 16-25 մկմ, գագաթում հաստացած մինչև 6 մկմ:

Տելիումները տեղակայված են տերևների վերին մակերես-ներին՝ կուտիկուլայի տակ, գորշ կետերում ցրված, հաճախ միավորվում են 1-1,5 մմ տրամագծով կարմիր կամ մուգ գորշ խիտ կեղևների: Տելիոսպորները պրիզմայաձև են, 25-40 x 9-17 մկմ, վերջավորություններում կլորացած, թաղանթը մոտ 1 մկմ հաս-տությամբ, գագաթում 8-10 մկմ, բաց գորշագույն, հարթ:

Տարածվածությունը. ԼՂՀ-ում հայտնաբերվել են *Salix caprea* ծառատեսակների վրա՝ Ասկերանի շրջանի Մադարաշեն և Ակնաղբյուր գյուղերում:

ԼՂՀ-ում հազվադեպ հանդիպող տեսակ է, տարատեր՝ լրիվ զարգացման ցիկլով: Եցիումները զարգանում են *Pinaceae* ընտա-նիքից *Larix* ցեղի բույսերի վրա, իսկ ուրեղինիումները և տեղում-ները՝ *Salicaceae* ընտանիքից *Salix* ցեղի ներկայացուցիչների վրա:

Դարաբաղում հայտնաբերվել է միայն սնկի զարգացման ուրե-դինիոստադիան:

5*. *Melampsora coleosporioides* Dietel - *Salix babylonica* L. - գ.
Նորագյուղ, 26.09.2006թ.; գ. Ակնաղբյուր, 15.10.2007թ.:

Ուրեղինիումները տերևների երկու մակերեսներին են, հիմնա-կանում տեղակայված են ստորին մասում, էպիթերմիսի տակ, ցրված են, 0,25 մմ տրամագծով, կլորավուն և նարնջագույն: Ուրեղինիոսպորները ձվածն են կամ լայն էլիպսուիդալ, 15-26 x 10-19 մկմ, թաղանթը մոտ 1,5-2 մկմ հաստությամբ, գորտնուկավոր, երբեմն գագաթային մասում հալթ, 5-9 ցրված ծակուտիներով: Պարաֆիզները զիսիկավոր են 35-65 x 14-20 մկմ, թաղանթը գագաթում թթվակախ հաստացած (մինչև 3,5 մկմ):

Տելիումները տերևների երկու մակերեսներին են, հիմնականում վերին հատվածներում՝ էպիթերմիսի տակ, երբեմն կուտիկուլայի տակ, 0,75-0,8 մմ տրամագծով կլորավուն խմբերով: Տելիոսպոր-ները զիանածն են, հազվադեպ կլորավուն, 20-38 x 7-13 մկմ, դեղին գունավորությամբ, թաղանթը մոտ 1 մկմ հաստությամբ, գագաթում հաստացում չկա, գորշ է և հալթ:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Salix babylonica* ծառա-տեսակների վրա՝ Ասկերանի շրջանի Նորագյուղ և Ակնաղբյուր գյուղերում:

Սպերմագնիումները և էցիումները հայտնի չեն, ուրեղինիում-ները և տելիումները զարգանում են *Salicaceae* ընտանիքին պատ-կանող բույսերի վրա:

Սունկը Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, հայտնաբերվել են միայն ուրեղինիումները, հայտնաբերման դեպքում Վարակն ակտիվ արտահայտված է:

6. *Melampsora euphorbiae - gerardiana* W. Mueller. - *Euphorbia sequieriana* Neck. - ԼՂԻՄ, 07.1939թ. (Յևյանիշև, 1959):

7. *Melampsora helioscopiae* (Pers.) G. Winter - *Euphorbia helioscopia* L. - ԼՂԻՄ, 29.05.1952թ. (Յևյանիշև, 1959):

8. *Melampsora lini* (Ehrenb.) Lev. - *Linum nodiflorum* L. syn. L. luteolum M.B. - ԼՂԻՄ, 4.06.1937թ.; ք. Վարանդա (Ֆիզուլի), 16.06.1937թ. (Յևյանիշև, 1959):

9*. *Melampsora reticulatae* A. Blytt - *Saxifraga aizoides* L. - գ. Խնածախ, 3.11.2005թ.:

Սպերմագոնիումները տեղակայված են տերևների վերին մակետեսներին, էպիթերմիսի տակ, ցրված կամ փոքր խմբերով, բաց նարնջագույն են:

Եղիսւմները տերևների երկու մակերեսներին են, հիմնականում վերին, էպիթերմիսի տակ են, ցրված կամ փոքր խմբերով, տեղակայված կողք կողքի, 0,5-1 մմ տրամագծով, նարնջագույն: Եղիսւպորները գնդաձև են կամ ձվաձև, 16-26 x 14-18 մկմ, նարնջագույն, թաղանթը 2-3 մկմ հաստությամբ, խիտ գորտնուկավոր:

Ուրեղինիումները տերևների ստորին մակերեսներին են, էպիթերմիսի տակ, ցրված կամ փոքր խմբերով, 0,5-1 մմ տրամագծով, նարնջագույն: Ուրեղինիոսպորները գնդաձև են, լայն էլիպտիդալ կամ հակադարձ ձվաձև 15-25 (30) x 11-25 մկմ, թաղանթը 4-6 մկմ հաստությամբ, գորտնուկավոր: Պարաֆիզները 60-95 x 18-41 մկմ, թաղանթը մինչև 7,5-10 մկմ հաստությամբ:

Տելիումները տերևների ստորին մակերեսին են, էպիթերմիսի տակ, ցրված, 0,3-0,5 մմ տրամագծով, սկզբում դեղնագորշ գունավորությամբ, այնուհետև մուգ գորշագույն: Տելիոսպորները գլանաձև են կամ սեպաձև, 30-40 x 9-15 մկմ, ծայրերում կլորացած, երբեմն հիմքում սեպաձև սեղմված, մուգ դեղին, թաղանթը մոտ 1 մկմ հաստությամբ, մուգ դեղին, հարբ:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Saxifraga aizoides* տերբույսի վրա՝ Ասկերանի շրջանի Խնածախ գյուղում 2005թ. :

Սունկը տարատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում հայտնաբերվել է միայն մեկ անգամ սպերմագոնիալ և էցիալ փուլում: Սպերմագոնիումները և էցիումները զարգանում են *Saxifragaceae* ընտանիքից *Saxifraga* ցեղի ներկայացուցիչների վրա, որը հայտնաբերել էր միայն մեկ անգամ Վ.Գ. Տրանշելը 1939թ.,

իսկ ուրեղինիումները և տելիումները զարգանում են Salicaceae ընտանիքից *Salix sp.* ծառատեսակի վրա:

Ընտանիք - Uropyxidaceae

Ցեղ - *Tranzschelia*

10*. *Tranzschelia pruni-spinosae* (Pers.) Dietel - *Prunus divaricata* Ledeb. - գ. Զրադացներ, 5.08.2005թ.; գ. Ակնաղբյուր, 20.08.2005թ.; 10.09.2005թ.; գ. Ճարտար, 8.10.2008թ.; *P. Domestica* L. - գ. Ավետարանոց, 5.05.2005թ.; գ. Ճարտար, 20.07.2005թ.; 16.09.2005թ.; գ. Առաջաձոր, 15.08.2005թ.; գ. Ակնաղբյուր, 25.08.2005թ.; ք. Հաղորդ, 1.09.2005թ.; ք. Ստեփանակերտ, 22.09.2005թ.; գ. Խորամոր, 28.09.2005թ.; ք. Ասկերան, 30.10.2005թ.; գ. Խաչմաշ, 19.09.2008թ.:

Սպերմագոնիումները տեղակայված են տերևների երկու մակերեսներին, կետավոր են, ուռուցիկ, գորշ, գրեթե սև գունավորությամբ:

Եցիսմները տեղակայված են տերևների ստորին մակերեսների դիֆուզ միցելիումի վրա, ցրված են, ունեն պերիդիում, որը պատռվում է 3-5 խոշոր թիակների: Եցիսապորները կլորավուն են, 17-26 x 13-23 մկմ, բաց գորշավուն, թաղանթը նուրբ գորտնուկավոր է:

Ուրեղինիումները տերևների ստորին մակերեսներին են՝ փոքր, դեղին կամ գորշ կետերի վրա, ցրված, գորշ դարչնագույն գունավորությամբ, չունեն պերիդիում:

Տելիումները նման են ուրեղինիումներին, բայց մուգ գորշագույն:

Պարաֆիզները գավազանաձև են, 30-65 x 10-20 մկմ, գագաթում մինչև 8-10 մկմ հաստացումով, բաց գորշագույն: Ուրեղինիուսպորները ձվաձև են կամ էլիպսոիդալ, 24-36 x 14-20 մկմ, թաղանթը նոտ 1,5 մկմ հաստությամբ, գագաթում՝ մինչև 8 մկմ հաստությամբ, դեղնագորշագույն, գորտնուկավոր, բացառությամբ գագաթի հարթ հատվածի, ունեն 3-4 ծակոտի:

Տելիուսպորները երկրչիզ են, 24-45 x 18-25 մկմ: Չույզ բջիջները գնդաձև են, թաղանթը 1,5-2,5 մկմ հաստությամբ, գորշ դարչնագույնից մինչև շագանակագույն, կոշտ գորտնուկավոր, վերին բջջում՝ եզրային ծակոտիկ և ստորին բջջում՝ հիմնային ծակոտիկ, ոտիկը մինչև 40 մկմ երկարությամբ, անգույն և փխրուն: Տելիուսպորները տարածվում են մեկական:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Prunus divaricata* տերությունից վրա Ասկերանի և Մարտունու շրջանների որոշ գյուղերում,

P. domestica տեսակի վրա Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի, Հաղորդի շրջանների որոշ գյուղերում և Ստեփանակերտ քաղաքում:

Սունկը Ղարաբաղում տարածված տեսակ է, տարատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, հայտնաբերվել են միայն ուրեղինիումները և տելիումները:

Ընտանիք - Phragmidiaceae

Ցեղ - *Phragmidium*

11. *Phragmidium fragariastri* (DC.) J. Schroet. - *Potentilla micrantha* Ramond ex DC.- ԼՌԻՄ, 27.08.1937թ. (Սլեյնիշև, 1959):

12*. *Phragmidium mucronatum* (Fr.) Schleidl. - *Rosa alpine* L. - q. Զրադացներ, 8.11.2005թ.; ք. Ստեփանակերտ, 10.11.2006թ.; *R. canina* L. - q. Ակնաղբյուր, 19.06.2005թ.; ք. Ակնաղբյուր, 23.07.2005թ.; գ. Վանք, Գանձասար, 20.09.2005թ.; գ. Խնածախ, 3.09.2005թ.; գ. Ավետարանց, 10.11.2005թ.; գ. Հաղորտի, 19.11.2005թ.; գ. Հաղորտի, 12.12.2005թ.; գ. Նիմգի, 14.12.2005թ.; գ. Խնածախ, 14.12.2005թ.; գ. Ակնաղբյուր, 18.12.2006թ.; գ. Հաղորտի, 27.07.2007թ.; *R. spinosissima* L.-p. Շուշի, 06.07.2007թ.; *R. iberica* Stev. ex Bieb. - ք. Ստեփանակերտ, 25.08.2008թ.; *R. sp.* - ք. Ստեփանակերտ, 5.07.2005թ.; ք. Ստեփանակերտ, 30.11.2005թ.; *R. sp.* - գ. Ակնաղբյուր, 19.06.2005թ.:

Սպերմագոնիումները սովորաբար տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, 0,2-1,5 մմ տրամագծով, կլորավուն են, դեղնավուն գունավորությամբ և փոքր խմբերով: Եցիումները նույնապես տերևների ստորին մակերեսներին են, զղերի միջև, տերևակորունների և երիտասարդ ճյուղերի վրա, երբեմն նաև պտույնների վրա, կլորավուն կամ երկարավուն, 0,2-1 մմ տրամագծով, նարնջագույն, այնուհետև վար գունավորվում են: Պարաֆիզները պերիֆերիկ են, բազմաքանակ, գավազանաձև մինչև 70 մկմ երկարությամբ:

Եցիուպորները գնդաձև են, լայն էլիպսոիդալ 18-28 x 15-21 մկմ, դեղնանարնջագույն, թաղանթն անգույն է, մազմղուկներով:

Ուրեղինիումները տերևների ստորին դեղին մակերեսներին են, ցրված կամ խմբերով, կլորավուն, 0,1-1 մմ տրամագծով, նարնջագույն դեղին գունավորությամբ: Պարաֆիզն այնպիսինն է, ինչպիսին եցիումների մոտ, երբեմն գագաթում թեթև հաստացած: Ուրեղինիուսպորները ձվաձև են, լայն էլիպսոիդալ, կամ գրեթե գնդաձև, 20-28 x 16-21 մկմ, նարնջագույն դեղին գունավորու-

թաղանթը խիտ է և մազմզուկներով, 6-8 ցրված ծակոտիներով:

Տելիումները տերևների ստորին մակերեսներին են, հաճախ ուրեղինիումների հետ խառնված, ցրված կամ խմբերով, 0,2-0,5 մմ տրամագծով, սև են, չունեն պարաֆիզներ: Տելիոսպորները կազմված են 7-8 բջիջներից, գլանաձև են, կամ երկարավուն գլանաձև, 55-90 x 25-35 մկմ, վերջավորություններում կլորացած, վերին բջիջը եռանկյունաձև է, ազգարում հաստացած, թաղանթը գորշ դարչնագույնից մինչև սև գունավորությամբ՝ պատված խիտ գորտնուկներով, յուրաքանչյուր բջջում 3 ծակոտիներով, ուժիկը 70-125 մկմ երկարության է, ստորին մասում հաստացած՝ մինչև 28 մկմ, անգույն, թափանցիկ, վերին հատվածում թերև գունավորված, ամուր, ջրում խիստ ուռչող, արտաքին թաղանթի հիմքում կտրվածք չկա:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Rosa alpine*, *R. canina*, *R. spinosissima*, *R. iberica*, *R. sp.* թիատեսակների վրա Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի շրջանների մի շարք գյուղերում և Ստեփանակերտ քաղաքի պուրակներում:

ԼՂՀ-ում այս սունկը շատ տարածված տեսակ է, միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, մակարութում է Rosaceae ընտանիքին պատկանող բույսերի վրա: Ղարաբաղում հայտնաբերվել են սպերմագոննիումները, էցիումները, ուրեղինիումները և տելիումները:

13*. *Phragmidium potentillae* (Pers.: Pers.) P. Karst. - *Potentilla recta* L. - q. Ակնաղբյուր, 20.08.2005թ.; q. Խնածախ, 3.11.2005թ.:

Սպերմագոննիումները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, փոքր խմբերով, հաճախ միավորվում են, ունեն դեղին գունավորում: Էցիումները տերևների երկու մակերեսներին են, հիմնականում ստորին, 0,5 մմ տրամագծով, կլորավուն, նարնջադեղնագույն խմբերով կամ ցրված: Պարաֆիզը զավագանաձև է կամ գլանաձև, 55-80 x 6-10 մկմ: Էցիոսպորները լայն էլիպսոիդալ են կամ գնդաձև, 20-30 x 20-27 մկմ, նարնջադեղնագույն, թաղանթը 1,5-2 մկմ հաստությամբ, թափանցիկ, անգույն կամ բաց դեղին գունավորությամբ, խիտ, մանր գորտնուկավոր:

Ուրեղինիումները տերևների ստորին մակերեսներին են, ցրված, կլորավուն, նարնջադեղնագույն, 0,5-1 մմ տրամագծով: Պարաֆիզները զավագանաձև, լայնացած 50-80 x 12 - 21 մկմ: Ուրեղինիոսպորները գնդաձև են, ծված կամ էլիպսոիդալ, 16-27 x 15-24 մկմ, դեղնանարնջագույն, թաղանթը 1,5-2 մկմ հաստությամբ է, բաց դեղնավուն, գորտնուկավոր, թույլ տեսանելի ծակոտի-

ներով: Տելիումները տերևների ստորին մակերեսներին են, ցրված կամ խմբերով, կլորավուն, 0,5-1 մմ տրամագծով, սև, դրանց զուգահեռ տերևների վերին մակերեսներին առաջանում է քլորոֆիլազուրկ դեղնավուն կետեր: Տելիուսպորները 4-5 բջիջներով են, գլանաձև կամ գավազանաձև, 48-100 x 22-35 մկմ, գագաթային բջիջները կլորավուն են, վերին բջիջը մնացածներին համեմատ քիչ երկար է, կեղլտոտ գորշագույն կամ դեղնագորշագույն, թաղանթը 3-4 մկմ հաստությամբ, հաճախ գագաթում մինչև 9 մկմ հաստությամբ, հարթ, գորշ ծյութագույնից մինչև շագանակագույն, յուրաքանչյուր բջջում 2-3 ծակոտիներով, ոտիկը 60-200 մկմ երկարությամբ, ստորին մասում հաստացած:

Տարածվածությունը.Հայտնաբերվել է *Potentilla recta* բույսի վրա Ասկերամի շրջանի Ակնաղբյուր և Խնածախ գյուղերում:

Սունկը Ղարաբաղում հազվադեպ է հանդիպում, միատեր է՝ լոկվ զարգացման ցիկլով, մակաբուծում է Rosaceae ընտանիքին պատկանող բույսերի վրա: Ղարաբաղում հայտնաբերվել են սնկի զարգացման բոլոր փուլերը:

14*. *Phragmidium rubi-idaei* (DC.) P. Karst. - *Rubus caesius* L. -
գ. Ակնաղբյուր, 20.08.2005թ.; 28.10.2005թ.; գ. Հաղորտի, 4.11.2005թ.; գ. Նորագյուղ, 5.04.2006թ.; գ. Վանք, 20.10.2007թ.; գ. Ճարտար, 29.09.2007թ.; գ. Խնապատ, 5.06.2008թ.:

Սպերմագոնիումները տեղակայված են փոքր խմբերով տերևների վերին մակերեսներին, կիսագնդաձև կամ կրնաձև, դեղին գունավորությամբ:

Եղիումները տերևների ստորին մակերեսներին են փոքր, կլորավուն 0,1-1 մմ տրամագծով, մեկական կամ փոքր խմբերով, սկզբում տեղակայված են էպիթերմիսի տակ, որի պատռվելուց հետո ծյան տեսք են ստանում և շրջապատվում դեղին պարաֆիզմներով: Եղիուսպորները կարծ շղթաներով են, գնդաձև, ծվածեալ, 17-25 x 13-21 մկմ, դեղին կամ նարնջագույն պարունակությամբ: Թաղանքն անգույն է նարնջագույն պարունակությամբ: Պարաֆիզները գավազանաձև են, անգույն:

Ուրեղինիումները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, դեղին կետերում, փոքրիկ, կլորավուն, 0,3-1 մմ տրամագծով, մեկական, ցրված տերևների ամբողջ մակերեսին կամ փոքր խմբերով կուտակված էպիթերմիսի տակ, որից հետո ծածկվում են դեղին փոշով՝ շրջապատված պարաֆիզներով: Ուրեղինիումները գնդաձև են, էլիպսիդալ, 20-30 x 16-23 մկմ, դեղին պա-

րունակությամբ: Թաղանքն անգույն է, բարակ, գորտնուկավոր, 2-4 թեր դասավորված ծակոտիներով:

Տելիումները տերևների ստորին մակերեսներին են, հյուսվածքների կարմրավուն կետերում, փոքրիկ կլորավուն՝ 0,1-0,4 մմ տրամագծով, մեկական, կամ փոքր խմբերով, երբեմն փուլսը ձյան նման լցված, աև գունավորությամբ: Տելիուսպորները գլանաձև են՝ 60-110 x 24-36 մկմ 3-8 բջիջներով, առավել հաճախ՝ 5-6, կլորավուն և ստանում են կոնաձև տեսք, ունեն գորշավուն ծլման ծակոտիներ՝ 5-7,5 մկմ բարձրությամբ և 4-7 մկմ հաստությամբ, հիմքում կլորավուն են՝ յուրաքանչյուր բջիջ 3-4 լայնակի շեղ ծակոտիներով: Թաղանքը մուգ դարչնագույն է 5-7 մկմ հաստությամբ՝ ծածկված գորտնուկներով: Ոտիկն անգույն է, ամուր և երկար մինչև 140 մկմ երկարությամբ, հիմքում հաստացած մինչև 20 մկմ:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Rubus caesius* (հավելված, նկ. 10) բույսի վրա Ասկերանի, Մարտակերտի և Մարտունու շրջանների որոշ գյուղերում:

Սունկը միատեր է, լրիվ զարգացման ցիկլով: ԼՂՀ-ում հայտնաբերվել են զարգացման բոլոր փուլերը: Սպերմագոննիումները, էցիումները, ուրեղիննիումները և տելիումները զարգանում են Rosaceae ընտանիքին պատկանող բույսերի վրա:

Այս ժանգասունկը լայնորեն տարածված է Ղարաբաղում: Վարակված օջախներ հայտնաբերվել են հետազոտությունների գրեթե բոլոր տարիներին, իսկ վարակվածությունը շատ զգալի էր:

15. *Phragmidium rubi* (Pers.) G. Winter - *Rubus sp.* - ԼՂԻՄ, 17.06.1946թ.; թ. Աղյամ, 10.10.1952թ. (Յլյանսկեա, 1959); թ. Մարտունի, 18.07.2005թ.; գ. Խրամորթ, 5.09.2005թ.; գ. Սարուշեն, 8.10.2005թ.; 10.10.2005թ.; 9.11.2005թ.; գ. Ավետարանց, 16.09.2005թ.; գ. Ակնաղբյուր, 11.09.2005թ.; 12.12.2007թ.; գ. Խնապատ, 28.10.2005թ.; 1.01.2006թ.; գ. Գիշի, 20.11.2005թ., թ. Մարտակերտ, 26.11.2005թ.; 12.09.2006թ., թ. Ասկերան, 4.12.2005թ.; 24.12.2005թ.; թ. Ստեփանակերտ, 10.12.2005թ.; գ. Սպիտակաշեն, 10.01.2006թ.; գ. Խնձրիստան, 5.10.2007թ.:

16. *Phragmidium sanguisorbae* (DC.) J. Schroet. - *Poterium polygonatum* Waldst. & Kitt. - թ. Կովսական (Զանգելան), 3.06.1937թ. (Յլյանսկեա, 1959); գ. Ակնաղբյուր, 28.10.2005թ.; գ. Հաղորտի, 27.07.2007թ.:

17. *Phragmidium tuberculatum* F. Muell. - *Rosa iberica* Stev. ex Bieb. - ք. Քարվաճառ (Քելբաջար), 23.05.1956թ.; ***R. pulverulenta*** Bieb. - ք. Քարվաճառ, 23.05.1946թ.; ***R. sp. cult.*** - ք. Ստեփանակերտ, 5.11.2005թ.; գ. Քռասնե, 12.09.2005թ.; 2.12.2005թ.; ք. Ասկերան, 2.01.2006թ.; գ. Հաղործի, 27.07.2007թ.; ***R. sp.*** - ք. Ստեփանակերտ, 5.07.2005թ.; գ. Ազնաղյուր, 08.07.2005թ.; ***R. sp.*** - ք. Քարվաճառ, 14.08.1946թ. (ՅԼՅԱԽԱՑԵՎ, 1959):

18*. *Phragmidium violaceum* (Schultz.) G. Winter - *Rubus idaeus* L. - գ. Խրամորթ, 10.11.2005թ.; ***R. sp.*** - Գանձասար, 20.09.2005թ.; գ. Դրմբոն, 28.10.2005թ.; գ. Խնածախ, 3.11.2005թ.; ք. Հաղործի, 5.11.2005թ.; ք. Մարտունի, 18.11.2005թ.; ք. Մարտակերտ, 22.09.2005թ.; գ. Քրահունջ, 24.11.2005թ.:

Սպերմագոնիումները, էցիումները, ուրեղինիոն-և տելիոստադիանները զարգանում են մոշենու վրա: Սպերմագոնիումները կիսագնդած են, վերին մակերեսին առաջացնում են խիտ խմբեր, դեղնավուն գունավորությամբ են: Էցիումները կլոր են, ունեն պարաֆիզներ, դասավորված են օղակածե, նարնջագույն գունավորությամբ, իսկ տերևների վերին մակերեսին խոշոր են, մուգ մանուշակագույն գունավորությամբ:

Էցիոսպորները կլորավուն են կամ լայն էլիպսոիդալ, դեղնանարնջագույն, մազմզուկներով, պատված թափանցիկ թաղանթով, 19-27 x 17-24 մկմ: Պարաֆիզներն անգույն են, մինչև 60 մկմ երկարությամբ, վերին ծայրում մինչև 18 մկմ տրամագծով:

Ուրեղինիումները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, խիտ, ցրված, նարնջագույն, կլորավուն, ծածկված խիտ պարաֆիզներով, տերևների վերին մակերեսներին ուրեղինիումներին համապատասխան առաջանում է մանուշակագույն երանգ: Ուրեղինիոսպորները կլորավուն են կամ լայն էլիպսոիդալ, դեղնավուն, 19-30 x 17-28 մկմ, գորտնուկավոր թաղանթով: Պարաֆիզներն անգույն են, գավազանածե, մինչև 60 մկմ երկարությամբ, գլխիկը 20 մկմ տրամագծով:

Տելիումները տեղակայված են մանուշակագույն կետերում, խոշոր են, փոշիացող, մոխրաևսկավուն: Տելիոսպորները 3-4 միջնապատով են, մուգ դարչնագույն, գորտնուկավոր թաղանթով, գագաթում անգույն ծլման ծակոտիով, յուրաքանչյուր բջջում 3-4 ծակոտիներով, 90-105 x 26-34 մկմ, ոտիկը շատ երկար է, անգույն, իհմքում խիստ հաստացած:

Տարածվածությունը.Հայտնաբերվել է *Rubus idaeus* բուսատեսակի Վրա Ասկերանի, Մարտունու, Մարտակերտի շրջանների որոշ գյուղերում և Հաղորդք քաղաքում:

Սունկը Ղարաբաղուն լայնորեն տարածված է, միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով: ԼՂՀ տարածքում հայտնաբերվել են սնկի տելիումները:

Ընտանիք - Pucciniaceae

Ցեղ - *Gymnosporangium*

19. *Gymnosporangium clavariiforme* (Pers.) DC. - *Crataegus monogyna* Jacq. - ք. Քելբաջար (Քարվաճառ), 4.08.1934թ. (Սևանական, 1959):

20. *Gymnosporangium confusum* Plowr. - *Crataegus curvisepala* Lindm. - syn. *C. kytostyla* Fingerh., *C. oxyacantha* L. - ք. Կովսական (Զանգելան), 30.05.1937թ.; գ. Ավանաղբյուր, 3.08.2005թ.; 20.08.2005թ.; գ. Վ. Հռովարդ, 20.09.2007թ.; *C. pentagyna* Waldst. & Kit. - ք. Կովսական, 9.06.1937թ.; *C. szovitsii* Pojark - ք. Կովսական, 10.06.1935թ.; *Mespilus germanica* L. - ԼՂԻՄ, 11.08.1935թ.; 4.07.1937թ. (Սևանական, 1959); Կարմիր զյուղ, 23.08.2005թ.; գ. Հաղորտի, 1.10.2005թ.; գ. Ավանաղբյուր, 22.09.2005թ.; գ. Սամնա, 4.11.2005թ.; *Cydonia vulgaris* Pers., գ. Ավանաղբյուր - 1.08.2005թ.; 18.11.05; գ. Ավետարանց - 3.08.2005թ.; գ. Ավետարանց - 12.09.2005թ.; գ. Խնապատ - 25.11.2005թ.; ք. Մարտակերտ - 28.09.2005թ.:

21. *Gymnosporangium cornutum* (Pers.) Arthur ex F. Kern - syn. *Gymnosporangium juniperi* Link - *Sorbus armeniaca* Hedl. - ԼՂԻՄ, 22.08.1930թ. (Սևանական, 1959); *S. aucuparia* L. - ք. Շուշի, 4.08.2008թ.:

22*. *Gymnosporangium fuscum* R. Hedw. - *Pyrus* sp. - գ. Ավանաղբյուր, 20.07.2005թ.; գ. Ավետարանց, 16.10.2005թ.:

Սնկի սպերմագոնիումները զարգանում են տերևների վերին մակերեսներին, սկզբուն նարնջագույն են, հետո մգանում են, կլորավուն են, տեղակայված հյուսվածքների հաստացած մասերում՝ 1սմ տրամագիծով, գնդաձև են, հավաքված՝ խմբերով:

Եցիումները հյուսվածքների այն նույն տեղերում են, որտեղ տեղակայված են սպերմագոնիումները, բայց դասավորված են տերևների ստորին մակերեսներին փոքր խմբերով, օվալաձև են, կոնաձև մինչև 3 մմ բարձրությամբ: Պերիդիումը վերևում փակ է, իսկ կողքերից բացվում է նեղ առանձնացված բջիջների շարքի,

Վերևի և հիմքի մասերում մնում է միացած ձևով: Պերիդիումի բջիջները երկարավուն են:

Եցիոսպորները օվալաձև են, էլիպսոիդալ կամ բութ բազմանկյուն: Թաղանթը գորշ է մազմզուկներով:

Ուրեղինիոսպորները բացակայում են:

Տելիոսպորները ճյուղերի վրա առաջացնում են հյուսվածքների հիպերտրոֆիա և ձևախախտում: Ղարաբաղի տարածքում տելիոսպորներ չեն հայտնաբերվել:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Pyrus sp.* տեսակի վրա Ասկերանի շրջանի Ավետարանոց և Ակնալեբուր գյուղերում:

Սունկը տարատեր է, ոչ լրիվ զարգացման ցիկլով: Սպերմագրնիումները և էցիումները ձևավորվում են *Pyrus* ցեղին պատկանող բույսերի վրա, տելիոսպորները՝ *Juniperus sabinae* տեսակի վրա:

Gymnosporangium fuscum սնկով վարակված տանձենու ժառեր Ղարաբաղի տարածքում հայտնաբերվել են 2005թ. ընդամենը երկու անգամ: Նոյնիսկ հայտնաբերման ժամանակ վարակը մեծ տարածում չի ունեցել և ախտահարված ժառերի վրա հայտնաբերվել են վարակակիր 2-3 տերևներ: Ղարաբաղում տանձենու ժանգատունկը հազվադեպ է հանդիպում:

23. *Gymnosporangium fusicolorum* E. Fisch. - *Cotoneaster melanocarpus* Fisch. ex Blytt. - ք. Քարվածառ (Քելբաջար), 20.07.1934թ.; *C. krasnovii* Pojark. - syn. *C. racemiflora* L. - ք. Կովսական (Զանգելան), 21.07.1932թ.; ԼՂԻՄ, 4.07.1935թ. (Սևանաց, 1959):

24*. *Gymnosporangium tremelloides* (A. Braun) R. Hartig - *Malus domestica* Borkh. - գ. Ակնալեբուր, 25.06.2005թ.:

Սպերմագրնիումները տեղակայված են տերևների վերին մակերեսներին, 0,7 - 1 սմ տրամագծով կլորավուն և մուգ նարնջագույն կետերում, դեղնադարչնագույն են:

Եցիումները հանդիպում են նոյն հատվածներում, տերևների երկու մակերեսներին և տերևակորունին, հաստացած և գունագրկված հատվածներում, ինչպես նաև պտուղների և փոքր ճյուղերի վրա՝ դասավորված փոքր, շրջանաձև խմբերով, 2-6 մմ լայնությամբ, մեղրադեղնագույն են: Պերիդիումը գլանաձև է, եղջյուրակերպ ուռուցիկ փքվածքով, մինչև 14 մկմ երկարությամբ, գագաթում պատռվում է և ցրվում ժապավենաձև գծերով, կաթնադեղնավուն: Պերիդիումի բջիջները կոնաձև են, արտաքին թաղանթը 2-3 մկմ հաստությամբ, հարթ, ներքինը՝ 8-10 մկմ հաստությամբ, քիչ կնճռոտված, կողքայինները նույնական են:

Եղիոսպորները գնդածն են կամ գրեթե գնդածն, լայն էլիպսոիդալ, 30-48 x 24-35 մկմ, շագանակագույն, գորշագույն, 10-13 ցրված ծակոտիներով:

Տելիումները տեղակայված են տերևների և կանաչ շիվերի վրա, շագանակագույն գորշագույն գունավորությամբ են, հարթ բարձիկանման, առաջացնում են վարակված հյուսվածքների հիպերտրոֆիա՝ ձևավորելով 1-5 մմ բարձրության և 2-4 մմ լայնությամբ փրփածք:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Malus domestica* բույսի վրա միայն մեկ անգամ 2005թ. Ակնաղբյուր գյուղում:

Սունկը Ղարաբաղում հազվաենակ հանդիպող տեսակ է, տարատեր՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով: Ղարաբաղում հայտնաբերվել են միայն էղիումները:

Ցեղ - *Puccinia*

25. *Puccinia acetosae* (Schumach.) Koern. - *Rumex acetosa* L. - ԼՂԻՄ, 3.08.1929թ. (Սլայնից, 1960); ***R. acetosella* L.,** Գանձասար - 20.09.2005թ.; ք. Շուշի - 5.08.2008թ.; ***R. acetoselloides* Bal.**, ք. Շուշի - 7.07.2006թ.:

26*. *Puccinia allii* (DC.) F. Rudolphi - *Allium sp.* - գ. Զրադացներ, 25.06.2005թ.; գ. Դրախտիկ, 25.10.2006թ.:

Սպերմագոնիումները Ղարաբաղում չեն հայտնաբերվել:

Եղիումները տերևների երկու մակերեսներին են, խմբերով, կլորավուն կամ կարճ զանածն, 100-150 մկմ տրամագծով, դեղնավուն կամ գրեթե սպիտակ: Պերիդիումի բջիջներն անկանոն թագմանկյան տեսք ունեն, 20-32 x 15-24 մկմ, արտաքին թաղանթը 5-7 մկմ հաստությամբ, զոլավոր, ներքին պատը՝ 3-5 մկմ հաստությամբ, գորտնուկավոր:

Եղիոսպորները գրեթե գնդածն են կամ էլիպսոիդալ, 17-30 x 15-25 մկմ, թաղանթը 1-2 մկմ հաստությամբ, գորտնուկավոր:

Ուրեղինիումները տերևների երկու մակերեսներին են և ցողունների վրա, դեղին կետերի վրա խիտ ցրված, երկարավուն են կամ օվալածն, 0,3-1,8 մմ երկարությամբ, սկզբում ծածկված են էափերմիսով, այնուհետև բացվում են երկարավուն գծով, փոշիանում են, դեղին կամ կարմրագեղնավուն գունավորությամբ: Ուրեղինիոսպորները գնդածն են, էլիպսոիդալ կամ ձվածն, 18-30 (36) x 18-22 մմ, թաղանթը 1,5-2 մկմ հաստությամբ է, դեղնավուն, հազվադեպ մազմզուկներով, 5-8 ցրված ծակոտիներով:

Տելիումները տերևների երկու մակերեսներին են, ծաղկակորունի և ցողունի վրա, դեղնավուն կետերում ցրված կամ խմբերով,

կլորավուն կամ երկարավուն, փոքր են, երկար ժամանակ մնում են էպիդերմիսի տակ, խիտ են, մուգ գորշագույնից մինչև սև գունավորությամբ, գորշ պարաֆիզներով, բաժանված են փոքր մասերի: *Տելիոսպորները* սովորաբար գավազանածն են, երկարավուն կամ էլիպտիդալ, 27-80 x 17-22 (25) մկմ, գագաթում կլորացած է, կոնածն, ծգված կամ լի հարթ, իհմքում սեղմված է, թաղանթը 1-2 մկմ հաստությամբ, գագաթում ավելի ինտենսիվ գունավորվածությամբ, հարթ է, թույլ նկատելի ծակոտիներով: Ոտիկը կարծ է, երբեմն 30 մկմ երկարությամբ, անգույն է, ամուր: *Տելիոսպորներն* առատ են:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Allium sp.* (հավելված, նկ. 15) տեսակի վրա միայն Ասկերանի շրջանի Զրադացներ և Մարտակերտի շրջանի Դրախտիկ գյուղերում:

Դարաբաղում այդ սունկը հազվադեպ հանդիպող տեսակ է, միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով: ԼՂՀ-ի տարածքում հայտնաբերվել են էցիումները և ուրեղինիումները:

27*. *Puccinia annularis* (F. Strauss) Rohl. - *Teucrium chamaedrys* L. - գ. Ակնաղբյուր, 1.11.2005թ.; 4.11.2006թ.; գ. Խնածախ, 3.11.2005թ.; գ. Կարմիր շուկա, 26.09.2005թ.; գ. Ավետարանց, 10.09.2006թ.; գ. Խնուշինակ, 4.11.2008թ.:

Զարգանում են միայն տելիումներ, որոնք տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, խոշոր են, անկանոն տեսքի, կլորավուն երկարաձգված, մուգ դարչնագույնից մինչև բաց դարչնագույն, ուռուցիկ, խիտ, տերևներից դժվար են պոկվում, հազվադեպ ցրված են: *Տելիոսպորներին* շատ բնութագրական են երկարությունն ու նեղությունը, դրանց զույգ բջիջները գրեթե միանման են, հաճախ սպորներն իլիկածն են, վերին մասը սրացած, միջնապատը թույլ արտահայտված, թաղանթը հարթ է, սպորների գագաթային մասը հաստացած, սպորների չափերը 38-45 x 12-17 մկմ, ոտիկն անգույն է, պահպանվող:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Teucrium chamaedrys* տեսակի վրա Ասկերանի և Մարտունու շրջանների որոշ գյուղերում:

ԼՂՀ-ում սունկը հազվադեպ հանդիպող տեսակ է, միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:

28*. *Puccinia arenariae* (Schumach.) G. Winter - *Silene cyri* Schischk. - syn. *Otites cyri* (Schischk.) Grossh. - ք. Շուշի, 4.08.2008թ.:

Տելիումները տերևների երկու մակերեսներին են, հիմնականում ստորին մակերեսներին, ցրված են կամ խմբերով, տեղադրված կողք կողքի, 0,3-0,8 (1) մմ տրամագծով, երբեմն երկարավուն՝ 0,5-2,5 մմ երկարությամբ, բարձիկանման, ծածկված են էպիթերնիսով, այնուհետև պատռվում են, մերկանում, խիտ են և սև: Տելիուսպորները գնդաձև են, օվալաձև կամ ձվաձև, ունեն ոտիկ:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Silene cyri* բուսատեսակի վրա 2008թ. Շուշի քաղաքում:

Սունկը ԼՂՀ-ում հազվադեպ հանդիպող տեսակ է, միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:

29*. *Puccinia armeniaca* Teterovn. - *Carduus sp.* - գ. Ակնաղբյուր, 27.07.2007թ.:

Տելիումները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, մուգ դարչնագույն են, բավականին խոշոր, հավասարաչափ ցրված, փոշիացող, չեն խառնվում: Տելիումները երկարավուն են, միջնապատճ լավ արտահայտված է, թաղանթը հազվադեպ գորտնուկավոր, զագաթային մասում նկատելի հաստացած (մինչև 7մկմ), հիմքում հաճախ հարթեցված, սպորները շագանակագույն են, չափերը՝ 32-43 x 20-24 մկմ: Ըստ տելիուսպորների ձևի՝ այս սունկը տարրերվում է *Puccinia carduorum* տեսակից, որի մոտ վերին քիչքի կիսակլոր է, բթացած, չունի թաղանթային հաստացում, միջնապատճ թույլ է արտահայտված, քան *P. armeniaca* տեսակի մոտ: Սպորների ընդհանուր ձևը ավելի երկար է և ներ, երկարությունը գրեթե 2 անգամ գերազանցում է լայնությանը: *P. armeniaca* տեսակը տարրերվում է նաև այն ժանգասնկերից, որոնք մակարություն են *Carduus* ցեղին պատկանող տեսակների վրա:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Carduus sp.* տեսակի վրա Ասկերամի շրջանի Ակնաղբյուր գյուղում 2007թ.:

Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:

30. *Puccinia asperulae-apparines* Picb. - *Asperula apparine* Bieb. - ԼՂԻՄ, 16.04.1937թ. (Ուլյանիսիև, 1962); գ. Ակնաղբյուր, 20.09.2005թ.; գ. Բադարա, 26.08.2006թ.; *Rubia tinctorum* L. - գ. Ակնաղբյուր, 20.08.2005թ.; 15.09.2007թ.; գ. Զրադացներ, 5.07.2008թ.:

31. *Puccinia australis* Koern. - *Sedum hispanicum* L. - ք. Կովսական (Զանգելան), 31.05.1937թ.; *S. pallidum* Bieb. - ք. Կովսական, 11.06.1937թ. (Ուլյանիսիև, 1960):

32*. *Puccinia bardanae* (Wallr.) Cummins - *Arctium lappa* L. - գ. Ակնաղբյուր, 2.07.2005թ.; 10.11.2008թ.; ք. Ստեփանակերտ,

2.07.2005թ.; 25.07.2005թ.; գ. Մադարաշեն, 6.07.2005թ.; գ. Ջրաղացներ, 1.09.2005թ.; գ. Հաղորտի, 5.09.2005թ.; Կարմիր գյուղ, 23.08.2005թ.; գ. Խնածախ, 25.09.2005թ.; գ. Հոռաթաղ, 5.05.2007թ.; գ. Հարավ, 10.06.2007թ.; գ. Բալուջա, 5.10.2007թ.; գ. Խանցը, 20.09.2008թ.:

Սպերմագնիումները տեղակայված են տերևների երկու մակերեսներին, հիմնականում ստորին, երբեմն ցողունների վրա, խիտ, ցրված, դեղին կամ մանուշակագույն բժերում, շրջապատված են դեղին եզրագծերով, երբեմն միավորվում են, կլորավուն են, փոքր և փոշիացող: Եցիոսպորները տարբեր ձևեր ունեն, 24-30 (36) x 20-26 (33) մկմ, դարչնագույն, գորշագույն, թաղանթը 1,5-2 մկմ հաստությամբ, դարչնագույն դեղին կամ դարչնագույն, գորշագույն, հազվադեպ գորտնուկավոր և ծակոտիներով:

Ուրեղինիումները նման են էցիումներին: Ուրեղինիոսպորները բաց դարչնագույն են, գորշագույն, 2-4 ծակոտիներով:

Տելիումները տերևների երկու մակերեսներին են և ցողունների վրա, խիտ, ցրված, հաճախ միախառնվող, կլորավուն կամ էլիպսուիդալ, 0,5-1 մմ երկարությամբ, վաղ պատռվում են, փոշիանում, դարչնագույն են կամ սև: Տելիոսպորները էլիպսուիդալ են, տանձածն, գավազանածն կամ ծվածն, 30-36 x 20-28 մկմ, գագաթում կլորացած, իինքում կլորավուն կամ երբեմն սեղմված, թաղանթը 1,5-2,5 մկմ հաստությամբ, դարչնագույն, գորտնուկավոր, վերին բջջում ծակոտին տեղակայված է գագաթային մասում, կամ թեթևակի թեքված դեպի կողքը, ստորին բջջի ծակոտին թեքված է դեպի ոտիկը, երկուսն էլ ծածկված են թույլ զարգացած փականով, կամ առանց փականի, ոտիկը կարծ է, անգույն և փխրուն:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Arctium lappa* բույսի վրա Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի շրջանների մի շարք գյուղերում:

Տեսակը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով:

Սունկը Ղարաբաղում տարածված տեսակ է, հայտնաբերվել են միայն ուրեղինիումները և տելիումները:

33. *Puccinia barkhausiae-rhoeadifoliae* Bubak - *Crepis foetida* L. - syn. *Barkhausia rhoeadifolia* Bieb. - ք. Կովսական (Զանգելան), 18.07.1932թ. (Սլյանիշև, 1962):

34. *Puccinia bistortae* (F. Strauss) DC. - *Bistorta carnea* (C. Koch) Kom. - syn. *Polygonum carneum* C. Koch. - ԼՂԻՄ, 5.07.1940թ. (Յլյանիշվ, 1960):

35. *Puccinia bromina* Erikss. - *Bromus arvensis* L. - գ. Ակնաղբյուր, 26.06.2008թ.; *B. tectorum* - ԼՂԻՄ, 25.05.1953թ.; *B. briziformis* Fish. & C. A. Mey - ք. Կովսական (Չանգելան), 3.01.1937թ. (Յլյանիշվ, 1960); *B. japonicus* Thunb. - ք. Կովսական, 4.06.1937թ.; ԼՂԻՄ, 4.06.1937թ.; *B. squarrosum* L. - ք. Կովսական, 5.06.1937թ.; *Litospermum officinale* L.- գ. Ակնաղբյուր, 20.08.2005թ.:

36. *Puccinia bromina* Z. Urb. et J. Markova - syn. *Puccinia rubigo-vera* (DC.), *Puccinia dispersa* Erikss et Henn. - *Anchusa sp.* - գ. Ակնաղբյուր, 3.08.2005թ.; *Lolium rigidum* Gaudin - ԼՂԻՄ, 15.08.1936թ.; *Secale cereale* L. - ԼՂԻՄ, 29.05.1952թ. (Յլյանիշվ, 1960):

37*. *Puccinia bupleuri* F. Rudolphi - *Bupleurum rotundifolium* L. - գ. Ղարաղլաղ, 5.09.2007թ.:

Սպերմագրնիումները տեղակայված են տերևների երկու մակերեսներին, ստորին մակերեսին էցիումների հետ, 140-180 x 100-130 մկմ, գորշ դեղնավուն են:

Էցիումները տերևների ստորին մակերեսներին են, խիտ ցրված դիֆուզ սնկամարմնում, 0,1-0,3 մմ տրամագծով: Պերիդիումը բաժականճան է, սպիտակավուն, ետ ծալված ծայրով: Պերիդիումի բջիջներն անկանոն շարթերով են, էլիպսուիդալ կամ շեղանկյունաձև, 22-35 x 16-25 մկմ, արտաքին թաղանթը 5-7 մկմ հաստությամբ, թույլ լայնակի գծավորված, ներքին թաղանթը 3-4 մկմ հաստությամբ, գորտնուկավոր: Էցիոսպորները գնդաձև են, կամ գրեթե գնդաձև, բազմանկյուն 16-24 մկմ տրամագծով, դեղնավուն կամ անգույն, թաղանթը մոտ 1 մկմ հաստությամբ, դեղնավուն, խիտ գորտնուկավոր:

Ուրեղինիումները տերևների երկու մակերեսներին են ցրված կամ դասավորված խմբերով, թույլ գունավորված կետերուն, 0,2-0,4 մմ տրամագծով, դաշնագույն գորշ են: Ուրեղինիոսպորները գնդաձև են, գրեթե գնդաձև կամ էլիպսուիդալ 19-24 x 17-22 մկմ, դեղնագորշավուն գունավորությամբ, թաղանթը 1,5-2 (2,5) մկմ հաստությամբ, դեղնավուն, մազմագուներով, 3-4 ծակոտիներով:

Տելիումները տերևների երկու մակերեսներին են, ընծյուղների, տերևների վրա, ցրված, փոքր, կլորավուն կամ էլիպսուիդալ, երբեմն երկարավուն, երկար ժամանակ ծածկված են մնում էպիդերմիսով, այնուհետև փոշիանում են, ստանում մուգ գորշավուն գունավորություն, տեղակայված են տերևների վրա: Տելիոսպոր-

Ները գնդաձև են, էլիպսոիդալ 24-40 x 15-30 մկմ, ծայրերում կլորացած, գորշագույն, թաղանթը 2,5-4,5 մկմ հաստությամբ, գագաթային մասում հաստացում չկա, բայց գորշագույն են, հարթ, ծակոտիները վերին բջջի գագաթային մասում են, ստորին բջջում՝ թեքված ոտիկի կողմը, ոտիկը կարճ է, անգույն և փխրուն:

Տարածվածությունը.Հայտնաբերվել է *Bupleurum rotundifolium* տեր-բույսի վրա Շուշիի շրջանի Ղարաղլաղ գյուղում 2007թ.:

Սունկը միատեր է՝ լրիվ զարգացնան ցիկլով, Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, հայտնաբերվել են միայն տեղիումները:

38. *Puccinia calcitrapae* Cummins - syn. *Puccinia schirajewckii* Tranzschel - *Serratula biebersteiniania* (Ilijin ex Grossh.) Takht. - ք. Քարվածար (Քելբաջար), 2/3.03.1934թ. (Մայնաց, 1962):

39. *Puccinia caricicola* Fuckel - *Carex tristis* Bieb. - ԼՂԻՄ, 2.08.1929թ. (Մայնաց, 1960):

40. *Puccinia caricina* DC. - *Carex tomentosa* L. - ԼՂԻՄ, 1936թ. (Մայնաց, 1960); *Grossularia reclinata* (L.) Mill. - ք. Շուշի, 20.06.2005թ.; *Ribes rubrum* L. - ք. Շուշի, 25.06.2005թ.; *Urtica dioica* L. - ք. Շուշի, 25.06.2005թ.; *U. urens* L. - գ. Պարաղլաղ, 20.05.2007թ.:

41*. *Puccinia celakovskiana* Bubak - *Cruciata taurica* Pall. ex Willd., syn. *Galium chersonense* (Willd.) Roem. et Schultz - գ. Ակնաղբյուր, 7.08.2008թ.:

Զարգանում են սպերմագոնինիումներ, ուրեղինիումներ և տեղիումներ: Սպերմագոնինիումները տեղակայված են տերևների երկու մակերեսներին, խիտ, կետաձև, գորշ մեղրագույն, հաճախ նոր ձևավորվող ուրեղինիումների միջև:

Ուրեղինիումները առաջնային և երկրորդային են, առաջնային ուրեղինիումները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, մուգ դարչնագույն, խոշոր, ձևավորվում են դեղնած հատկածներում, հաճախ շրջապատված գնդաձև դասավորված սպերմագոնինիումներով: Երկրորդային ուրեղինիումները տերևների երկու մակերեսներին են, կլոր, փոքր, գորշ, ցրված և փոշիացող: Ուրեղինիուսաղրները կլոր են կամ լայն էլիպսոիդալ դեղնադարչնագույն, թաղանթը գորտնուկավոր է, 2 ծակոտիններով, 21-25 x 19-21 մկմ:

Տելիումները տերևների ստորին մակերեսներին վրա, խոշոր, երկարավուն կամ կլորավուն, մուգ դարչնագույն: **Տելիուսաղրները** էլիպսոիդալ են կամ կարճ գավազանաձև, գագաթային մասում կլորավուն, հազվադեպ սեղմված, ոտիկի մոտ հար-

թեցված, ստորին բջիջը հաճախ ավելի երկար է, քան վերինը, սպորների գույնը դեղնադաշնագույն է, թաղանթը հարթ է, զագարային մասում հաստացած, ունեն 35-60 x 20-28 մկմ երկարություն, ոտիկն անգույն է, պահպանվող:

Տարածվածությունը.Հայտնաբերվել է *Cruciata taurica* տերբուսի վրա միայն մեկ անգամ 2008թ. Ակնադրյուր գյուղում:

Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով, ԼՂՀ-ում հազվադեպ հանդիպող տեսակ է:

42. *Puccinia centaureae* (DC.) Cummins - syn. *Puccinia carduorum* Jacky., *P. carthami* (Hutzelm.) Corda - *Carduus arabicus* Jacq. - ԼՂԻՄ, 30.05.1952թ.; *Carthamus oxyacantha* Bieb. - ք. Ջերայիլ, 15.07.1925թ.; *C. tinctorius* L. - ԼՂԻՄ, 5.07.1950թ. (Յևյանիշև, 1962); *Centaurea glehnii* Trautv. - գ. Ակնադրյուր, 26.08.2008թ.; *Cirsium arvense* (L.) Scop. - գ. Ակնադրյուր, 25.08.2005թ.; գ. Հաղորդի, 20.10.2005թ.; գ. Խաչմազ, 1.09.2008թ.; *Chartolepis pterocaula* (Trautv.) Czer. - գ. Ակնադրյուր, 28.07.2008թ.; *Cousinia macrocephala* C.A. Mey - ք. Վարանդա (Ֆիզուլի), 20.06.1937թ.; *Grossheimina macrocephala* (Muss.-Puschk. ex Willd.) Sosn. & Takht. - ԼՂԻՄ, 20.08.1930թ. (Յևյանիշև, 1962):

43. *Puccinia cesatii* J. Schroet. - *Bothriochloa ischaemum* L. - syn. *Andropogon ischaemum* L. - ք. Ջերայիլ, 7.04.1932թ.; Վարանդա (Ֆիզուլի), 26.04.1933թ.; ԼՂԻՄ, 08.1936թ. (Յևյանիշև, 1960):

44*. *Puccinia chaerophylli* Purton - *Chaerophyllum temulum* L. - գ. Զրադացներ, 25.04.2005թ.; գ. Բադարա, 25.07.2005թ.:

Սպերմագոնիումները տեղակայված են տերևների երկու մակերեսներին և տերևակոթունների վրա, փոքր են, գնդաձև կամ շաշաձև, 110-155 մմ լայնությամբ և 6-12 մկմ բարձրությամբ, սկզբում դեղին են, այնուհետև սև կամ գորշագույն:

Եցիումները տերևների երկու մակերեսներին են և տերևակոթուններին՝ տեղակայված խմբերով, 0,2-0,6 մմ տրամագծով: Պերիդիումը բաժականման է, բջիջները նստած են իրար վրա, շեղանկյունաձև են, կամ երկարավուն, 26-45 x 15-30 մկմ, արտաքին թաղանթը 2,5-3,5 մկմ հաստությամբ, խիտ, նուրբ գորտնուկավոր, ներքին թաղանթը նույն հաստությամբ, խիտ գորտնուկավոր: Եցիուսպորները գնդաձև են կամ էլիպսոիդալ, հաճախ անկյունաձև, 20-35 x 16-28 մկմ, թաղանթը 1-1,5 մկմ հաստությամբ, դեղին կամ անգույն:

Ուրեղինիումները տերևների ստորին մակերեսներին՝ ցրված դեղնավուն կետերով, 0,3-0,5 մմ տրամագծով, գորշ դարչնագույն:

Ուրեղինիոսպորները կլորավուն են ձվածն, 20-33 x 18-26 մկմ, թույլ գունավորված, թաղանթը՝ 1 մկմ հաստությամբ, բաց դեղնավունից մինչև գորշագույն դեղին, երբեմն մազմզուկներով, 3 ծակոտիներով:

Տելիումները ուրեղինիումների նման են, սակայն մուգ գորշագույն: Տելիուսպորները կարծ են կամ լայն էլիպսուիդալ, 24-45 x 16-26 մկմ, ծայրերում կլորացած, միջնապատճ նկատելի է, թաղանթը 2-2,8 մկմ հաստությամբ, բաց գորշագույն, ծակոտիները տեղակայված են վերին բջջում՝ զագաթին մոտ, ստորին բջջում՝ ոտիկին մոտ, ծածկված են անգույն կափարիչով, ոտիկը կարծ է կամ հավասար սպորների երկարությանը, անգույն են, կոտրվող:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Chaeorophyllum temulum* բույսի վրա Ասկերանի շրջանի Ջրաղացներ և Բադարա գյուղերում:

Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով: Տարածվածությունը համատարած բնույթ է կրում, Ղարաբաղում հայտնաբերվել են սնկի զարգացման բոլոր փուլերը:

45. *Puccinia chondrillina* Bubak - *Chondrilla juncea* L. - ԼՂԻՄ, 29.07.1930թ. (Սլահացք, 1962):

46*. *Puccinia conii* (F. Strauss) Fuckel - *Conium maculatum* L. - գ. Հաղորտի, 5.08.2005թ.; գ. Ակնաղբյուր, 28.07.2005թ.; 28.08.2006թ.:

Սպերմագնիումները տերևների վերին մակերեսներին են, փոքր խմբերով, կետավոր, ուռուցիկ, բաց գորշագույն:

Ուրեղինիումները տերևների ստորին մակերեսներին են, ցրված դեղնավուն կետերով, կլորավուն կամ էլիպսուիդալ, հաճախ միավորվում են, փոշիանում, կարմրադարձնագույն են: Ուրեղինիուսպորները ծվածն են կամ էլիպսուիդալ, թաղանթի վերին հատվածի կեսը գորտնուկավոր է, ստորին մասը՝ հարթ, բաց դարչնագույն, 2-3 ծակոտիներով, որոնք տեղակայված են բջջի ստորին հատվածում, սպորների չափերը 25-32 x 17-28 մկմ է:

Տելիումները տերևների ստորին մակերեսներին են և ցողունների վրա, կլորավուն կամ երկարավուն, առաջացնում են երկար զոլեր, երկար ժամանակ մնում են էպիֆերմիսի տակ, հետո փոշիանում են, դարձնում մուգ դարչնագույն: Տելիուսպորներն անկանոն էլիպսուիդալ են, զագաթում և հիմքում կլորացած կամ թույլ սեղմված, ունեն գրեթե հարթ թաղանթ, զագաթում հաստացում չկա, սպորների դարչնագույն են, 30-46 x 18-30 մկմ: Ոտիկը կարծ է, նուրբ:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Conium maculatum* բույսի վրա Մարտունու շրջանի Հաղործի և Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղերում:

Սունկը Դարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով: Հայտնաբերվել են սնկի ուրեմնին- և տելիոստարիաները:

47*. *Puccinia convolvuli* Alb. et Schwein. - *Fallopis convolvulus* (L.) A. Love - syn. *Polygonum convolvulus* L. - q. Ակնաղբյուր, 29.07.2005թ.; q. Կարմիր գյուղ, 23.08.2005թ.:

Սպերմագրնիումները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին փոքր խմբերով, ունեն դեղնավուն գունավորում: Եցիումները նույնական տերևների ստորին մակերեսներին են: Պերիդիումի բջջները էլիպսուղղալ են, 25-32 x 15-22 մկմ: Եցիոսպորները կլորավուն են, էլիպսուղղալ, դեղին գունավորությամբ, 17-24 x 16-20 մկմ, թաղանթը 1-2 մկմ հաստությամբ, բաց դեղնավուն գունավորությամբ:

Ուրեղինիումները սովորաբար տերևների ստորին մակերեսներին են, ցրված, հաճախ շրջանաձև հավաքված, 0,4-1 մմ տրամագծով, վաղ պատռվում են, դարչնագույն են:

Ուրեղինիոսպորները կլորավուն են, էլիպսուղղալ, 25-35 x 17-25 մկմ, թաղանթը 2,5-3 մկմ հաստությամբ, բաց գորշավուն:

Տելիումները հիմնականում տերևների ստորին մակերեսներին են, որոշ ժամանակ ծածկված են մնում էպիթերնիտով, խիտ են, մուգ դարչնագույն: Տելիոսպորները զավազանաձև են, օվալաձև, էլիպսուղղալ կամ անկանոն տեսքի, 45-65 x 20-30 մկմ, զագաթում կլորավուն, երեսն հարթ, միջնապատճ թույլ է արտահայտված, վերին բջջը ստորին բջջից կարճ է և լայն, թաղանթը 2-2,5 մկմ հաստությամբ է, գորշ դարչնագույն, ծակոտիները տեղակայված են միջնապատին մոտ և զագաթային մասում, ոտիկը 40-45 մկմ երկարությամբ, դարչնագույն գունավորությամբ և ամուր:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Fallopis convolvulus* բույսի վրա Մարտունու շրջանի Կարմիր գյուղում և Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում 2005թ. հուլիս, օգոստոս ամիսներին:

Սունկը զարգանում է լրիվ ցիկլով, միատեր է:

Դարաբաղում հայտնաբերվել են ուրեղինիումները և տելիումները:

48. *Puccinia convolvuli* (Pers.) Cast. - *Calystegia sepium* (L.) R. Br. - p. Կովսական (Զանգելան), 6.06.1937թ. (Սլեյնիաց, 1962):

49. *Puccinia coronata* Corda - *Avena fatua* L. - գ. Ակնաղբյուր, 5.06.2007թ.; *Rhamnus spathulifolia* Fisch. & C.A. Mey - ք. Կովսական (Զանգելան), 3.06.1937թ.; ք. Ջերայիլ, 17.07.1946թ. (Մայնիշև, 1960); *R. pallasii* Fisch. & C.A. Mey - ք. Շուշի (Խարուզաղ), 25.05.2006թ.; գ. Ակնաղբյուր, 5.06.2006թ.; ԼՂԻՄ, 1932 թ.:

50. *Puccinia coronata* Fraser et Ledingham - syn. *Puccinia coronifera* K. - *Bromus briziformis* Fish. & C.A. Mey - ք. Կովսական (Զանգելան), 3.06.1937թ.; *B. communatus* Schrad. - ք. Կովսական, 3.06.1937թ.; *B. japonicus* Thunb. - ք. Կովսական, 4.06.1937թ.; *Hordeum bulbosum* L. - ք. Կովսական, 8.06.1937թ.; *Rhamnus catarthica* L. - ԼՂԻՄ, 15.06.1936թ. (Մայնիշև, 1960):

51. *Puccinia coronillae* Woron. - *Securigera orientalis* (Mill.) Lassen - syn. *Coronila orientalis* Mill. - ք. Շուշի, 15.05.1936թ.; 2.06.1936թ. (Մայնիշև, 1960); գ. Ակնաղբյուր, 28.07.2005թ.; գ. Հերհեր, 29.07.2006թ.:

52. *Puccinia cousiniae* Syd. - *Cousinia cynaroides* (Bieb.) C.A. Mey - ԼՂԻՄ, 26.08.1935թ. (Մայնիշև, 1962):

53. *Puccinia crepidicola* Syd. - *Barkhausia marschalii* C.A. Mey - ԼՂԻՄ, 30.05.1952թ. (Մայնիշև, 1962):

54. *Puccinia cynodontis* Desm. - *Cynodon dactylon* (L.) Pers. - գ. Հաղործի, 28.07.2007թ.; ԼՂԻՄ, 15.07.1927թ. (Մայնիշև, 1960):

55*. *Puccinia dactylidina* Bubak - *Dactylis glomerata* L. - գ. Ակնաղբյուր, 26.06.2007թ.:

Ուրեղինիումները տերևների երկու մակերեսներին են, ջղերի միջև, ցրված կամ խմբերով, երկար ժամանակ մնում են էպիթերմիսի տակ, ժամանակավուն են, հետագայում պատռվող: Ուրեղինիումները կլոր են, դեղին, թաղանթը երբեմն գորտնուկավոր, 8-10 ծակոտիմերով, 20-26 x 18-21 մկմ:

Տելիումները տերևների երկու մակերեսներին են, հիմնականում տեղակայված ստորին մակերեսին, կլորավուն են կամ երկարաձգված, խիտ և սև: Տելիումները տարածեն՝ գավազանածեն, բթացած, գագաթային նասում կլորացած կամ ձգված, հիմքում հարթեցվում են, վերին բջիջը հաճախ կարճ է ստորինից, միջնապատը նկատելի է, բաց դարչնագույն, թաղանթը հարթ, գագաթում հաստացած, 30-50 x 16-26 մկմ: Ոտիկը կարճ է, ամուր, դարչնագույն:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Dactylis glomerata* բույսի վրա Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում 2007թ.:

Սունկը Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:

56. *Puccinia dictyodrema* Linder - *Smyrnium perfoliatum* L. - ԼՂԻՄ (Յլյանիշև, 1962):

57. *Puccinia drabae* F. Rudolphi - *Draba bruniiifolia* Stev. - ԼՂԻՄ, 2.06.1936թ.; ք. Շուշի, 15.05.1936թ. (Յլյանիշև, 1960):

58. *Puccinia gentianae* (F. Strauss) Link - *Gentiana cruciata* L. - ԼՂԻՄ, 8.08.1929թ.; *G. septemfida* Pall - ԼՂԻՄ, 2.09.1935թ. (Յլյանիշև, 1962):

59. *Puccinia gladioli* Cast. - *Gladiolus kotschyanus* Boiss. - ԼՂԻՄ, 21.06.1929թ.; *G. italicus* Mill. - syn. *G. segetum* Ker. Gawl. - ԼՂԻՄ, 19.06.1929թ., (Յլյանիշև, 1960):

60. *Puccinia graminicola* Z. Urb. - syn. *Puccinia phlei-pratensis* Erikss. - *Phleum phleoides* (L.) Karst. - ԼՂԻՄ, 8.08.1929թ. (Յլյանիշև, 1960):

61. *Puccinia graminis* Pers.: Pers. - *Elytrigia* (Link) Nevski - syn. *Agropyron trichophorum* (Link) Richt. - ԼՂԻՄ, 24.07.1932թ.; *Berberis vulgaris* L. - ք. Շուշի, 20.08.2005թ.; գ. Մեծ շեն, 25.08.2005թ.; գ. Ղարաղլաղ, 25.08.2005թ.; ԼՂԻՄ, 21.06.1929թ.; *Poa nemoralis* L. - ԼՂԻՄ, 11.08.1929թ. (Յլյանիշև, 1960); *Triticum aestivum* L. - գ. Ակնաղբյուր, 26.06.2008թ.:

62. *Puccinia hieracii* (Schumach.) Mart. - *Hieracium sp.* - ԼՂԻՄ, 6.07.1930թ. (Յլյանիշև, 1962); գ. Ակնաղբյուր, 1.08.2006թ.:

63*. *Puccinia heraclei* Grev. - *Heracleum pastinacifolium* C. Koch - ք. Ստեփանակերտ (քարայր), 1.08.2007թ.:

Սպերմագրնիումները տերևների երկու մակերեսներին են, խմբերով, կլորավուն, 90-120 մկմ տրամագծով, դեղնավուն կամ գրեթե անգույն:

Եցիումները տերևների ստորին մակերեսներին են, դեղին խմբերով, հաճախ ջղերի մոտ, վարակված հատվածներում առաջացնում են թույլ ձևախախտումներ: Պերիդիումը թույլ զարգացած է, սպիտակավուն: Պերիդիումի քիչները կլորավուն են կամ էլիպսուիդալ, սպերմագրնիումների նման, բայց ավելի խոշոր, հաստացած և կոշտ գորտնուկավոր թաղանթով:

Եցիուպորները գնդաձև են, նույնիսկ նեղ էլիպսուիդալ, 21-32 x 18-28 մկմ, թաղանթը նուրբ է, գորտնուկավոր:

Ուրեղինիումները տերևների երկու մակերեսներին են, ցրված, փոշիացող, դարչնագույն և գորշագույն: Ուրեղինիուսպորները գնդաձև էլիպսուիդալ են, հազվադեպ ծվաձև կամ էլիպսուիդալ, 25-

33 x 19-27 մկմ: Թաղանթը 1,5-2 մկմ հաստությամբ, բաց գորշագույն, հազվադեպ պատված մազմզուկներով, 3-4 ծակոտիներով:

Տելիումները տերևների երկու մակերեսներին են, սովորաբար տեղակայված են ջրերի շուրջը և ընձյուղների վրա, փոշիանում են, ունեն մուգ գորշագույնից մինչև սև գունավորություն: Տելիուսպորները էլիպսուիդալ են, 24-36 x 17-26 մկմ, ծայրերում կլորացած, թույլ ձգված, թաղանթը 2-2,5 մկմ հաստությամբ, գորշագույն, նուրոք, ցանցածև, վերին բջջում ծակոտին տեղակայված է գագաթային մասում, ստորին բջջի ծակոտին տեղակայված է ոտիկի մոտ, ոտիկը կարճ է, անգույն, փխրուն:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Heracleum pastinacifolium* տեր-բույսի վրա Ստեփանակերտ քաղաքում միայն մեկ անգամ 2007թ.:

Տեսակը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով:

Չնայած Դարաբաղում նշված սունկը հայտնաբերվել է միայն մեկ անգամ, սակայն վարակը շատ ակտիվ արտահայտված էր: Հայտնաբերվել է սնկի զարգացման տելիուստադիան:

**64*. *Puccinia hordei* G. H. Otth - *Ornithogalum* sp. - գ.
Ակնարբյուր, 15.03.2007թ.:**

Սպերմազոնիումները տերևների երկու մակերեսներին են, հաճախ էցիումների միջև, խիստ խմբերով, շրջանածև դասավորված, 100-150 մկմ տրամագծով, սկզբում մեղրատեղնագույն, այնուհետև գրեթե սև:

Էցիումները տերևների երկու մակերեսներին են, 200-300 մկմ երկարությամբ, դեղնավուն: Պերիդիումները բաժականման են: Պերիդիումի բջիջները բազմանկյուն են կամ կլորավուն, արտաքին թաղանթը 6-8 մկմ հաստությամբ, հարթ, ներքին թաղանթը 3-4 մկմ հաստությամբ, գորտնուկավոր: Էցիուսպորները գնդածև են, էլիպսուիդալ կամ բութ բազմանկյուն, 18-28 x 16-20 մկմ, թաղանթը 1-2 մկմ հաստությամբ, թափանցիկ, անգույն, երբեմն գորշագույն դեղին, խիստ և նուրբ գորտնուկներով:

Ուրեղինիումները սովորաբար տերևների վերին մակերեսներին են, ցրված կամ դասավորված փոքր երկարածզված շրջաններով, 0,3-0,5 մմ երկարությամբ, մուգ նարնջագույն առանց պարաֆիզների: Ուրեղինիուսպորները էլիպսուիդալ են կամ ետ ծալված, ձվածև, 20-30 x 17-22 մկմ, թաղանթը (1) 5-2 (2,5) մկմ հաստությամբ, դեղնավուն կամ բաց մոխրագույն, մազմզուկներով պատված, 7-9 (10 կամ 11) ցրված ծակոտիներով:

Տելիումները սովորաբար տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, ցրված են, դասավորված շրջաններով կամ հավաքած էլիպտիդալ խմբերով, ուրեղինիումների շուրջը՝ նուրբ կետավոր, 0,1-0,5 (0,8) մմ, երկար ժամանակ ծածկված են մնում էպիթերմիսով, սև են, տարրերակված, մուգ, հաստացած և փոքրիկ օջախների վերևում ցրված պարաֆիզմերով։ Տելջուպորները հիմնականում միաբջիջ են (միաչ 80%), երկարավուն, ետ ծալված, ձվածև կամ երկարավուն գավազանածն, ոչ հազվադեպ անկյունածն կամ անհամաչափ, 25-45 x 16-25 մկմ, երկբջիջ, 40-58 x 50-25 մկմ վերևում հարթ գնդածն, հաճախ ձգված, հիմքում թեթևակի սեղմված, թաղանթը 1-2 մկմ հաստությամբ, մուգ, հարթ, գագաթին 5-7 մկմ հաստությամբ, հաճախ անգույն, թափանցիկ գորտնուկավոր հաստացումով, ոտիկը կարծէ, գորշ և ձկուն։

Տարածվածությունը.Հայտնաբերվել է *Ornithogalum sp.* տեսակի վրա Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում։

Սունկը տարատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով։

Սպերմագոնիումները և էցիումները զարգանում են *Ornithogalum sp.* տեսակի վրա (Hiratsuka, Sato, 1958), ուրեղինիումները և տելիումները՝ *Hordeum sp.* տեր-բույսի վրա։ Հեռավոր Արևելքում նշված սմկի հազվադեպ հանդիպելը բացատրում են էցիալ տիրոջ բացակայությամբ, իսկ սպորների առկայությունը՝ քանու միջոցով սերմերի հետ սպորների տեղափոխմամբ։

Չնայած շատ աշխատություններում նշվում են այս սմկի էցիալ տիրոջ հազվադեպ հանդիպելու մասին, ԼՂՀ-ում նշված սնկով վարակված *Ornithogalum sp.* տեր-բույսեր հաճախ են հանդիպել Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում և հակառակը չեն հայտնաբերվել այս սնկով վարակված *Hordeum sp.* բուսատեսակներ։ Նշենք, որ ԼՂՀ-ում *Hordeum sp.* բույսի ցանքատարածությունները շատ չեն։

**65. *Puccinia iridis* (DC.) Wallr. - *Iris schellkownikowii* Fomin - ք.
Աղյամ (Յլյանիշև, 1960):**

**66. *Puccinia jaceae* G.H. Otth - *Centaurea jacea* L. - գ.
Ակնաղբյուր, 25.07.2008թ.; *C. solstitialis* L. - ԼՂԻՄ, 19.1953թ.
(Յլյանիշև, 1962):**

**67. *Puccinia jasmine* DC. - *Jasminum fruticans* L. - ԼՂԻՄ,
29.05.1936թ., ք. Կովսական (Զանգելան), 2.07.1932թ. (Յլյանիշև,
1962):**

68. *Puccinia lapsanae* (Schultz) Fuckel - *Lapsana communis* L. - գ. Ակնաղբյուր, 10.08.2005թ.; ***Garhadiolus hedypnois* (F. et M.) J. et Sp.** - ք. Կովսական (Զանգելան), 7.06.1937թ. (Յլքինշև, 1962):

69*. *Puccinia leveillei* Mont. - *Geranium robertianum* L. - ք. Շուշի, 4.08.2008թ.; գ. Ակնաղբյուր, 5.09.2008թ.; ***G. sanguineum* L.** - գ. Ակնաղբյուր, 10.08.2009թ.:

Տելիոսպորները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, ընձյուղների և ջերի միջն, փոքր են, դարչնագույն բժերի վրա հավաքված մինչև 2 սմ երկարությամբ և 8 մմ լայնությամբ խմբերով, առաջացնում են վարակված օրգանների ձևախախտումներ, արագ պատրզում են, գորշ դարչնագույն են: Տելիոսպորները գնդած են, ծվածն, 24-40 x 14-23 մմ, ծայրերում կլորավուն են կամ սեղմված, թույլ ծգված, թաղանթը 2-3,5 մկմ հաստությամբ, բաց գորշագույն, գորտնուկավոր (հատկապես ստորին բջջում), վերին բջջում ծակոտին տեղակայված է զագաթային մասում, ստորին բջջի ծակոտին տեղակայված է միջնապատում կամ հիմքում, ոտիկը սովորաբար կարծ է, երբեմն մինչև 60 մկմ երկարությամբ, հաստ, անգույն և փխրուն: Հանդիպում են նաև մեզոսպորներ:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Geranium robertianum* բույսի վրա Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում և Շուշի քաղաքում, ինչպես նաև *G. sanguineum* տեսակի վրա նույնապես Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում:

Տեսակը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում մեծ տարածվածություն չունի:

70. *Puccinia longissima* J. Schroet. - *Koeleria cristata* (L.) Pers. - syn. *K. gracilis* Pers. - ք. Ջերբայի, 18.04.1932թ. (Յլքինշև, 1960):

71. *Puccinia malvacearum* Mont. - *Alcea rosea* L. - գ. Թավանե, 12.07.2005թ.; գ. Խնապատ, 18.07.2005թ.; գ. Ակնաղբյուր, 2.10.2005թ.; ք. Ստեփանակերտ, 10.11.2005թ.; գ. Թավանե, 2.12.2005թ.; ք. Ստեփանակերտ, 1.04.2006թ.; գ. Սզնեք, 15.05.2006թ.; գ. Բաղարա, 25.05.2006թ.; գ. Հարավ, 28.07.2007թ.; գ. Սպիտակաշեն, 5.04.2008թ.; գ. Խնուշինակ, 5.05.2008թ.; ***Althaea grossheimii* L.** - ք. Ստեփանակերտ, 14.07.2008թ.; ***A. hirsuta* L.** - գ. Ակնաղբյուր, 25.06.2008թ.; ***Alcea rugosa* Alef.** - ԼՂԻՄ, 1936թ.; ***Malva neglecta* Wallr.** - ք. Կովսական (Զանգելան), 31.05.1947թ.; Սարտակերտ, 30.05.1952թ. (Յլքինշև, 1960); Գանձասար, 20.05.2006թ.; Սադարաշեն, 26.05.2005թ.; գ. Մեծ Թաղար, 10.06.2005թ.; գ. Հոռարաղ, 5.07.2005թ.; գ. Ակնաղբյուր, 8.07.2005թ.;

գ. Ազոյս, 4.12.2005թ.; գ. Մաճկալաշեն, 12.04.2006թ.; գ. Շոշ, 15.04.2006թ.; *M. sylvestris* L. - գ. Խնապատ, 25.05.2005թ.; գ. Հաղործի, 29.09.2005թ.; գ. Խորամորթ, 1.12.2005թ.; ք. Հաղործի, 3.12.2005թ.; գ. Քռասնե, 5.12.2005թ.; *Malvalthaea transcaucasica* (Sosn.) Iljin - ք. Սարտակերտ, 25.05.2007թ.:

72. *Puccinia menthae* Pers.: Pers. - *Acinos arvensis* (Lam.) Dandy - syn. *A. thymoides* Moench. - ԼՂԻՄ, 14.06.1936թ. (Սլեյնիսիւս, 1962); *Mentha aquatica* L. - գ. Ակնաղբյուր, 5.07.2005թ.; գ. Մաղամաշեն, 20.07.2005թ.; գ. Դահրավ, 20.07.2005թ.; գ. Սարգսաշեն, 22.07.2005թ.; գ. Նորագյուղ, 25.07.2005թ.; գ. Խնապատ, 7.09.2005թ.; *M. longifolia* (L.) Huds. - ք. Շուշի - 10.11.2007թ.; *Origanum vulgare* L. - գ. Այգեստան, 29.07.2005թ.; գ. Ակնաղբյուր, 1.08.2005թ.; գ. Աշան, 15.07.2007թ.; գ. Հաղործի, 27.07.2007թ.; գ. Կարմիր Շուկա, 28.07.2006թ.:

73. *Puccinia montana* Fuckel - *Centaurea fischeri* Schlecht. - ԼՂԻՄ, 20.07.1950թ. (Սլեյնիսիւս, 1962):

74*. *Puccinia nigrescens* Kirchn. - *Salvia* sp. - գ. Դրմբոն, 28.07.2005թ.; գ. Ջանյարադ, 1.08.2005թ.; գ. Ակնաղբյուր, 3.08.2005թ.; գ. Կարմիր գյուղ, 15.05.2007թ.; գ. Խնուշինակ, 19.06.2008թ.; գ. Նորագյուղ, 07.07.2008թ.; *S. officinale* L. - գ. Ակնաղբյուր, 08.07.2009թ.:

Սպերմագոնիումները, էցիումները, ուրենինիումները և տելիումները զարգանում են *Salvia* sp. բուսատեսակների վրա: Սպերմագոնիումներն էցիումների միջև են, գնդաձև, փոքր և մեղագույն:

Էցիումները զարգանում են տերևակղթունի, ցողունի, ջղերի երկարավուն մանուշակագույն կետերի վրա: Պերիդիումը կարձ գլանաձև է, կտրտված և ձգված ծայրով: Էցիուսպորները ուսկեցույն դեղին են, կլորավուն կամ անկյունաձև, փոքր կետիկավոր թաղանջով, 20-22 x 19-21 մկմ:

Ուրենինիումները տերևների ստորին մակերեսներին են, բավականին խոշոր, գնդաձև, սև, մակերեսային, փոշիանում են: Ուրենինիուսպորները խոշոր են կամ լայն օվալաձև, դարչնագույն, թաղանթը հազվադեպ գորտնուկավոր, 2 ծակոտիներով, 25-28 x 19-21 մկմ:

Տելիումները տերևների ստորին մակերեսներին են, խոշոր, գնդաձև, սև, մակերեսային, փոշիանում են: Տելիումների տեղակայվածությունն առատ է: Տելիուսպորները երկարավուն են, բջիջները՝ միաննան, գագաթը բութ է կամ քիչ սեղմված, թաղանթը

հարթ է, զագաթային մասում ուժեղ հաստացած, սպորները՝ մուգ դարչնագույն, 34-40 x 20-26 մկմ, ոտիկը նուրբ:

Տարածվածությունը.Հայտնաբերվել է *Salvia officinale* տեսակի վրա Մարտակերտի, Ասկերանի և Մարտունու շրջանների որոշ գյուղերում:

Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Դարաբաղում հաճախ հանդիպող տեսակ է: Վարակված օջախներ հայտնաբերվել են ուսումնասիրության բոլոր տարիներին, հայտնաբերվել են միայն տելիումները:

75. *Puccinia obscura* J. Schroet. ex Pass. - *Bellis perennis* L. - ք.
Ստեփանակերտ, 29.05.2009թ.; *Luzula multiflora* (Ehrh.) Lej. - ԼՂԻՄ, 28.06.1937թ.; ԼՂԻՄ, 22.07.1952թ. (Յլյանիշև, 1960):

76*. *Puccinia onopordi* Syd. - *Onopordum acanthium* L. - գ.
Ակնաղբյուր, 28.07.2005թ.:

Ուրեղինիումները և տելիումները զարգանում են *Onopordum acanthium* տեսակի վրա: Ուրեղինիումները տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, գորշ ժանգագույն են, փոքր, անկանոն: Ուրեղինիոսապորները կլորավուն են կամ լայն օվալաձև, գորշագույն, հարթ թաղանթով, 3 ծակոտիններով, սպորների չափերը՝ 20-28 x 19-24 մկմ:

Տելիումները տերևների ստորին մակերեսներին են, սև, փոքր, կլորավուն, երբեմն ցրված, կամ խմբավորված տերևների մագինների վրա: Տելիոսապորները երկարավուն են, գոյգ քիչները միանման, միջնապատը նկատելի է, վերին քիչը երբեմն կլորացած է, հաճախ թթացած, սպորները մուգ դարչնագույն են, թաղանթը՝ մանր գորտնուկավոր, չափերը 40-50 x 23-26 մկմ, ոտիկը հաստ է, անգույն և փխրուն:

Տարածվածությունը.Հայտնաբերվել է *Onopordum acanthium* տեսակի վրա միայն մեկ անգամ Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում 2005թ.:

Հազվագյուտ տեսակ է, միատեր՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:

77. *Puccinia permixta* Syd. et P. Syd. - *Diplache serotina* (L.) Eink - ԼՂԻՄ, 8.08.1929թ. (Յլյանիշև, 1960):

78. *Puccinia persistens* J. Markova et Z. Urb. - syn. *Puccinia agropyrinia* Eriksson - *Elytrigia caespitosa* (C. Koch.) Nevski - syn. *Agropyron caespitosum* C. Koch. - ԼՂԻՄ, 20.07.1929թ.; *E.* (Link) Nevski - syn. *Agropyron trichophorum* (Link) Richt. - ԼՂԻՄ, 9.07.1929թ.; *Hordeum crinitum* (Scherb.) D. sf. - ք. Կովսական (Զանգելան), 5.06.1937թ. (Յլյանիշև, 1960):

79*. *Puccinia phragmitis* (Schumach.) Koern. - *Phragmites australis* (Cav.) Trin. ex Steud. - syn. *P. communis* - ց. Շուշի, 4.08.2008թ.:

Սպերմագրնիումները սովորաբար տերևների վերին մակերեսներին են, կույտերով, կլորավուն և սպիտակ:

Եցիումները տերևների ստորին մակերեսներին են, խիտ կլորավուն խճերով, մինչև 1-1,5 մկմ տրամագծով, մանուշակագույն կետերում, 0,2-0,3 մմ տրամագծով: Պերիդիումը բաժականման է կամ կարծ գլանաձև, սպիտակ, կտրտված եւ ծալված ծայրով: Պերիդիումի քչիշներն անկանոն շարքերով են, արտաքին թաղանթը 8-10 մկմ հաստությամբ, լայնակի զոլավոր, ներքին պատը՝ 3-4 մկմ հաստությամբ, մազմզուկներով: Եցիուսպորներն անկյունաձև են, 17-25 x 14-18 մկմ, սպիտակագույն, թաղանթը մոտ 1 մկմ հաստությամբ, անգույն, խիտ գորտնուկավոր:

Ուրեդինիումները սովորաբար տերևների ստորին մակերեսներին են և ջղերի վրա, ցրված կամ խմբերով, բաց դեղին կետերում, 0,5-2 մմ երկարությամբ, ուռուցիկ, վաղ բացվող, ծածկված կտրտված էպիդերմիսով, մուգ դարչնագույն, գորշագույն, չունեն պարաֆիզներ: Ուրեդինիուսպորները գրեթե կլորավուն են, լայն էլիպստիդալ կամ ձվաձև, 20-26 x 15-21 մկմ, գորշագույն, թաղանթը 3-4 մկմ հաստությամբ, գորշագույն, մազմզուկներով, 4-5 ծակուներով:

Տելիումները տերևների երկու մակերեսներին են, սովորաբար վերին ջղերի վրա, հաճախ դասավորված ջղերի կողքի դեղին բժերի վրա, լայն էլիպստիդալ են կամ գծային, 0,5-1,2 մմ երկարությամբ, շուտ պատրվուն են, ծածկված են կտրտված էպիդերմիսով, խիտ են, բարձիկանման, շագանակագույն, չունեն պարաֆիզներ: Տելիուսպորները երկարավուն էլիպստիդալ են, 40-60 x 16-24 մկմ, գագաթային մասում կլորավուն, հիմքում կլորավուն, կամ երկարաձգված, միջնապատը նկատելի է, թաղանթը 2-3 մկմ հաստությամբ, գագաթում 4-7 մկմ, գորշագույն և կամ գորշ դարչնագույն, հարթ է, վերին քջում ծակուտին տեղակայված է գագաթային մասում, ստորին քջի ծակուտին տեղակայված է միջնապատում, ոտիկի երկարությունը 130-140 մկմ է, դեղին կամ բաց դարչնագույն և ամուր:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Phragmites australis* տեսակի վրա միայն Շուշի քաղաքում:

Տեսակը տարատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, հայտնաբերվել են ուրեղինիում-ները և տելիումները:

80. *Puccinia picridis* Hazsclinsky - syn. *Puccinia hieracii* Joerst. - *Picris pauciflora* W. - ք. Կովսական (Զանգելան), 5.06.1937 թ. (Սլյանիշև, 1962); *Taraxacum vulgare* Lam. - գ. Վանք, 20.09.2005թ.:

81. *Puccinia pimpinellae* (F. Strauss) Mart. - *Pimpinella sp.* - գ. Ակնարբյուր, 27.06.2008թ.; *P. aurea* DC. - syn. Reutera aurea (DC.) Boiss. - ք. Ջերայիլ, 30.06.1932թ. (Սլյանիշև, 1962):

82. *Puccinia poae-nemoralis* G.H. Otth - syn. *Puccinia poae-seduticae* Westend. - *Poa pratensis* L. - ԼՂԻՄ, 4.04.1936թ. (Սլյանիշև, 1960):

83. *Puccinia polygoni - alpini* Cruchet et Mayor - *Aconogonon alpinum* (All.) Schur - syn. *Polygonum alpinum* All. - ԼՂԻՄ, 20.07.1931թ. (Սլյանիշև, 1960); ք. Շուշի, 4.08.2008թ., գ. Ղարադշաղ, 5.08.2008թ.:

84*. *Puccinia polygoni - amphibii* Pers.: Pers. - *Persicaria maculata* (Rafin.) A & D. Love - syn. *Polygonum persicaria* L. - գ. Ակնարբյուր, 29.07.2005թ.:

Սպերմագոնիումները տեղակայված են տերևների երկու մակերեսներին, փոքր խմբերով, 1-8 մմ տրամագծով, կլորավուն, 80-150 x 70-120 մկմ, մերրադեղնագույն, կարծ պարաֆիզներով:

Եցիումները տերևների ստորին մակերեսներին են, շրջանաձև խմբերով մինչև 1 սմ տրամագծով, կարմիր կամ վար կետերում՝ շրջապատված դեղին եզրաշերտով, կամ թույլ կանաչ ֆոնով, ավելի ուշ կարմրում են, կլորավուն են, 0,2-0,4 մմ տրամագծով, չեն առաջանում վարակված օջախների հաստացումներ: Պերիդիումը կարծ գլանաձև է, կամ բաժականման, ատամնավոր: Պերիդիումի քշիջները կանոնավոր շարքերով են, բավական խիստ դասավորված, անկյունաձև, էլիպսոիդալ, 20-32 x 16-20 մկմ, արտաքին թաղանթը 5-8 մկմ հաստությամբ, ներքին պատը՝ 2-5 մկմ, գորտնուկավոր: Եցիոսպորները կլորավուն են, բազմանկյուն, ձվաձև կամ էլիպսոիդալ, 13-19 x 13-16 մկմ, թաղանթը մոտ 1 մկմ հաստությամբ, փոքր գորտնուկներով:

Ուրեղինիումները տերևների երկու մակերեսներին են, իիմնականում ստորին մակերեսների վրա, ցրված կամ խմբերով, դեղնավուն կետերում, կլորավուն են, 0,5-0,8 մմ տրամագծով, վաղ բացվող, փոշիացող, մուգ դարչնագույն: Ուրեղինիոսպորները էլի-

պստիդալ են, կլորավուն կամ ձվածկ, 18-30 x 16-23 մկմ, թաղանթը 1-1,5 մկմ հաստությամբ, դեղնագորշագույն, գորտնուկավոր, եզրային ծակոտիներով:

Տելիումները տերևների երկու մակերեսներին են, սովորաբար ստորին մակերեսներին և ցողունների վրա, սև կամ մուգ գորշագույն, որոշ բույսերի վրա դրանք թեթևակի ուժուցիկ են, խիտ, գրեթե չփոշիացող կամ կուտակված բույսի հյուսվածքներում, զբաղեցնելով տերևների գրեթե ողջ ստորին մակերեսը, երկար ժամանակ մնում են էպիթերմիսի տակ, այլ բույսերի մոտ բարձիկանման են, խիտ, շուտ պատռվող, գրեթե չփոշիացող, ցրված տերևների ստորին մակերեսներով: Տելիումները սովորաբար երկարավուն գավազանածն են կամ երկարավուն, 29-56 x 13-18 մկմ, գագաթում կլորավուն կամ քացած, հիմքում՝ սեղմված, ունեն միջնապատ, վերին բջիջը երբեմն կարծ է և լայն ստորին բջջից, թաղանթը 1-2 մկմ հաստությամբ, գագաթային մասում 5-8 մկմ, դեղին գորշագույն, հարթ, վերին բջջում ծակոտին տեղակայված է գագաթային մասում, ստորին բջջի ծակոտին տեղակայված է միջնապատում, ոտիկը սովորաբար փոքր է, անգույն, կամ բաց դեղնավուն և ամուր:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Polygonum persicaria* տեսակի վրա Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում 2005թ.:

Տեսակը տարատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Դարաբաղում հազվաբեր հանդիպող: Մեզ մոտ հայտնաբերվել են միայն տելիումները:

85. *Puccinia psephelli* Uljan. - *Psephellus transcaucasicus* D. Sosn. - ք. Քարվաճար (Քելբաջար), 19.07.1934թ. (Սլեյնիշև, 1962):

86. *Puccinia pseudosphaeria* Mont. - syn. *Puccinia sonchi* Rob. - *Sonchus arvensis* L. - ԼՂԻՄ, 15.06.1952թ. (Սլեյնիշև, 1962):

87. *Puccinia psoroderma* Linder - *Angelica purpurascens* (Ave-Lall) Gilli - syn. *Xanthogalum purpurascens* Lallem. - ԼՂԻՄ, 08.1892թ. (Սլեյնիշև, 1962):

88*. *Puccinia punctata* Link - *Galium aparine* L. - գ. Ակնաղբյուր, 20.08.2005թ.; ք. Շուշի, 1.08.2008թ.; ք. Շուշի, 4.08.2008թ.:

Սպերմագոնիումները տերևների երկու մակերեսներին են, հաճախ տեղակայված էցիումների միջև, փոքր խմբերով 80-100 մկմ տրամագծով, մեղրադեղնագույն:

Էցիումները տերևների ստորին մակերեսներին են, ցրված կամ փոքր խմբերով, մինչև 2 մկմ տրամագծով, դեղնավուն կամ մանուշակագույն կետերում, կլորավուն, 0,2-0,4 մմ տրամագծով: Պերի-

դիումը բաժականնան է, կտրտված սպիտակավուն ծայրով: Պերի-դիումի բջիջները երկարավուն շարքեր են կազմում, բազմանկյուն են, 24-41 x 18-26 մկմ, արտաքին թաղանթը 7-9 մկմ հաստությամբ, ներքին պատը՝ 3-5 մկմ հաստությամբ, գորտնուկավոր: Եցիոսպոր-ները կլորավուն են, էլիպսոիդալ կամ օվալաձև, 18-25 x 15-22 մկմ, դեղնանարնջագույն, թաղանթը մոտ 1 մկմ հաստությամբ, թափանցիկ, գորտնուկավոր կամ գրեթե հարթ:

Ուրեղինիումները սովորաբար տերևների ստորին մակերես-ներին են, ցրված, երբեմն դասավորված օղակաձև, 0,2-0,5 մմ տրամագծով, բացվուն են երկարավուն պատռվածքով, փոշչիա-նում են, ունեն գորշ, շագանակագույն գունավորում: Ուրեղինիո-սպորները կլորավուն են, էլիպսոիդալ կամ ձվաձև, 18-30 x 16-19 մկմ, թաղանթը 1-2 մկմ հաստությամբ, բաց գորշագույն, գորտնու-կավոր, 2 ծակոտիներով:

Տելիումները տերևների ստորին մակերեսներին են, երբեմն ցողունների վրա, ցրված կամ փոքր խմբերով, մինչև 1-1,5 մմ տրամագծով, կլորավուն կամ երկարավուն, 0,2-0,8 մմ տրամա-գծով, խիտ, մուգ գորշագույն: Տելիոսպորները էլիպսոիդալ են կամ երկարավուն, 30-60 x 14-22 մկմ, գագաթային մասում կլորավուն, հարթ կամ ձվաձև, հիմքում՝ սեղմված և ոտիկի մեջ ընկղզմվող, միջնապատր թույլ նկատելի է, վերին բջիջը ստորինի համեմատ լայն է ու կարճ, թաղանթը 1-2 մկմ հաստությամբ, գագաթում՝ մինչև 16 մկմ, բաց գորշագույն են, հարթ, վերին բջջում ծակոտին տեղակայված է գագաթային մասում, ստորին բջջի ծակոտին տե-ղակայված է միջնապատի տակ, ոտիկի երկարությունը հասնում է 60 մկմ-ի, անգույն է կամ բաց գորշագույն և ամուր:

Տարածվածությունը.Հայտնաբերվել է *Galium aparine* տեսա-կի վրա Շուշի քաղաքում և Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյու-ղում:

Տեսակը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում տարածված տեսակ է, հայտնաբերվել են ուրեղինիումները և տելիումները:

89. *Puccinia pyrethri* Rabenh. - *Pyrethrum coccineum* (Willd) Worosch. - syn. *P. roseum* Bieb. - ԼՂԻՄ, 21.07.1950թ. (Սլայհանչև, 1962):

90*. *Puccinia rangiferina* S. Ito - *Rhamnus pallasii* Fisch. & C.A. Mey - ք. Շուշի, 25.05.2006թ.:

Ուրեղինիումները տերևների երկու մակերեսներին են, սովորա-բար վերին, ցրված են կամ խմբերով, նկատելի կետեր չեն առա-

ջացնում, էլիպսոիդալ են կամ գծային, 0,5-2 մմ երկարությամբ, երբեմն կլորավուն, շուտ պատռվում են, փոշիանում, նարնջագույն, նոսր կարծ պարաֆիզմերով: Ուրեղինիոսպորները լայն էլիպսոիդալ են, 24-30 x 17-24 մկմ, կարմրադեղին կամ կավագույն դեղին, թաղանթը 1,5 մկմ հաստությամբ, դեղնավուն, մազմզուկ-ներով, թույլ նկատելի ծակոտիներով:

Տելիումները տերևների ստորին մակերեսներին են, ցրված կամ խմբերով, հաճախ միավորվում են, շուտ պատռվում, խիտ են և սև: Տելիուսպորները երկար զավազանաձև են, կամ գլանաձև, 36-92 x 14-20 մկմ, հիմքում սեղմված, ունեն միջնապատ, թաղանթը 1,5 մկմ հաստությամբ, զագաթում՝ 3-5 մկմ հաստությամբ, զագաթային մասում գորշ շագանակագույն է, հիմքում՝ դեղնագույն, կազմված մի քանի ածուկներից, 10-20 մկմ երկարությամբ, գորշագույն, ամուր:

Տարածվածությունը.Հայտնաբերվել է *Rhamnus pallasii* տեսակի վրա միայն մեկ անգամ Շուշիում 2006թ.:

Սունկը Ղարաբաղում խիստ հազվադեպ հանդիպող տեսակ է, իսկ ախտահարված օջախներում վարակն ակտիվ արտահայտված էր:

Սունկը տարատեր է՝ ոչ լրիվ զարգացնան ցիկլով:

91. *Puccinia retifera* Linder - *Chaerophyllum bulbosum* non L. - ԼՂԻՄ (Սլեյնիշև, 1962); գ. Սարուշեն, 20.04.2008թ.:

92. *Puccinia schneideri* J. Schroet. - *Thymus transcaucasicus* Ronn. - syn. *T. fominii* Klok. et Shost. - ԼՂԻՄ, 13.06.1937թ. (Սլեյնիշև, 1962):

93. *Puccinia sessilis* W. G. Schneid. ex J. Schroet. - syn. *Puccinia orchidearum-phalaridis* Kleb, *Puccinia digraphidis* Soppitt - *Platanthera chlorantha* (Cust.) Reichenb. - գ. Լերկասար (Լիսագոր), 3.08.1932թ.; ԼՂԻՄ, 23.03.1935թ. (Սլեյնիշև, 1960); *Polygonatum Adans* - գ. Ղարաղլաղ, 05.04.2006թ.; *P. orientale* Desf. - syn. *P. polyantherum* Dietr. - ԼՂԻՄ, 23.03.1935թ. (Սլեյնիշև, 1960):

94. *Puccinia silvatica* (J. Schroet.) D.M. Hend. - *Carex digitata* L. - ԼՂԻՄ, 1936թ. (Սլեյնիշև, 1960թ.):

95. *Puccinia spilogena* Linder - *Asperula molluginoides* (M.B.) Boiss. - ԼՂԻՄ (Սլեյնիշև, 1962):

96*. *Puccinia stachydis* DC. - *Stachys aspera* Michx. - գ. Ակնաղբյուր, 5.08.2005թ.; 20.06.2007թ.:

Սպերմագոննիումները շատ նուրբ են, ցրված, դեղին գունավորությամբ, խոշոր պարաֆիզմերով:

Ուրեղինիումները տեղակայված են տերևների երկու մակերեսներին, հիմնականում ստորին, մեկական կամ խիտ ցրված դարչնագույն կետերով, կլորավուն են, կողքերից՝ սեղմված, շուտ պատշվում են, թերևակի փոշիանում, ստանում են շագանակագույն գունավորում: Ուրեղինիոսպորները գնդաձև են կամ էլիպսիդալ, 21-28 x 16-18 մկմ, թաղանթը մոտ 2 մկմ հաստությամբ, դարչնագույն, երբեմն մազմզուկներով, 2-3 ծակոտիներով:

Տեղիումները սովորաբար տերևների ստորին մակերեսներին են, տերևակոթունի և ցողունի վրա, տարածված, գնդաձև կամ երկարավուն, խիտ և սև գունավորությամբ: Տեղիոսպորները երկարավուն են, երկար էլիպսիդալ կամ էլիպսիդալ, 32-50 x 18-26 մկմ, գագաթային մասում՝ կլորացած, հիմքում՝ կամ կլորացած կամ սեղմված, ունեն միջնապատ, թաղանթը՝ 1,5-2,5 մկմ հաստությամբ, գագաթում՝ 7-12 մկմ հաստությամբ, դարչնագույն, հարթ, ծակոտին վերին բջջի գագաթային մասում է, ստորին մասում ծակոտին միջնապատին մոտ է, ոտիկը մինչև 140 մկմ երկարությամբ է, անգույն և ամուր:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Stachys aspera* տեսակի վրա Ասկերանի շրջանի Ակնաղբյուր գյուղում 2005թ. և 2007թ.:

Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է, հայտնաբերվել են ուրեղինիումները և տեղիումները:

97. *Puccinia stipina* Tranzschel ex Kleb. - *Stipa capillata* L. - ԼՂԻՄ; ք. Հաղորդ, 4.07.1932 թ. (Յլքինաց, 1960):

98. *Puccinia striiformis* Westend. - syn. *Puccinia glumarum* (J.C. Schmidt) Erikss. et Henn. - *Aegilops biuncialis* Vis - ք. Աղդամ, 1.05.1940թ.; *A. tauschii* Coss. - syn. *A. squarrosa* L. - ք. Կովսական (Զանգելան), 30.05.1937թ.; 5.06.1937թ. (Յլքինաց, 1960):

99*. *Puccina tanaceti* DC. - *Artemisia absinthium* L. - գ. Բալուջա, 15.07.2005թ.; գ. Կարմիր գյուղ, 23.08.2005թ.; գ. Հաղորդի, 4.11.2005թ.; Գանձասար, 14.11.2005թ.; *A. dracunculus* L. - ք. Ստեփանակերտ, 13.10.2009թ.; *A. sp.* - գ. Ակնաղբյուր, 25.06.2007թ.; *A. vulgaris* L. - գ. Ակնաղբյուր, 5.06.2007թ.:

Եցիումները տեղակայված են տերևների երկու մակերեսներին: Եցիոսպորները նման են ուրեղինիոսպորներին: Ուրեղինիումները սովորաբար տերևների ստորին մակերեսներին են, ցրված կամ խմբերով, բաց գորշագույն կամ մուգ ժանգագույն: Ուրեղինիոսպորները կլորավուն են, լայն էլիպսիդալ կամ հակադարձ ծվածեւ:

24-34 x 20-27 մկմ, թաղանթը 1-2 մկմ հաստությամբ, դարչնագույն, երբեմն մազմղուկներով, 3 ծակոտիներով:

Տելիումները տեղակայված են տերևների երկու մակերեսներին, սովորաբար ստորին, երբեմն ցողունների վրա, ցրված կամ խմբերով, կլորավուն, 0,3-0,5 մմ տրամագծով, վաղ պատռվում են, խիստ են, մուգ գորշագույն: Տելիոսպորները սովորաբար էլիպսուիդալ են, 35-38 x 22-25 մկմ, գագաթային մասում հաստացած են, երբեմն ձգված, հիմքում կլորացած կամ սեղմված, ունեն միջնապատեր, թաղանթը 1,5-2 մկմ հաստությամբ, գագաթում՝ 6-9 մկմ հաստությամբ, գորշագույն, դարչնագույն՝ ծածկված խիստ դասավորված գորտնուկներով, հիմքում՝ անհետացող, վերին բջջում ծակոտիներն ընկղմված են, ստորին բջջում՝ միջնապատի տակ, նույնպես գորտնուկավոր, ոտիկը մինչև 90 մկմ երկարությամբ, անգույն է և անուր:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Artemisia absinthium*, *A. dracunculus*, *A. vulgaris* և *A. sp.* տեսակների վրա Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի շրջաններում:

Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում տարածված տեսակ է, հայտնաբերվել են ուրեղինիումները և տելիումները:

100. *Puccinia thesii-decurrentis* (Henn.) Dietel - *Thesium arvense* Horvatovský - syn. *T. ramosum* Hayne - ԼՂԻՄ, 15.06.1929թ. (Սլեյնիշև, 1960):

101. *Puccinia thesii* (Desv.) Chaillet - *Thesium arvense* Horvatovský - syn. *T. ramosum* Hayne - ԼՂԻՄ (Սլեյնիշև, 1960):

102. *Puccinia triseti* Eriksson - *Trisetum flavencens* (L.) Beauvois. - syn. *T. pratense* Pers. - թ. Վարանդա (Ֆիզուլի), 17.07.1937թ. (Սլեյնիշև, 1960):

103. *Puccinia triticina* (Erikss.) Z. Urb. et J. Markova - *Aegilops triuncialis* L. - թ. Կովսական (Զանգելան), 1.06.1937թ. (Սլեյնիշև, 1960); *Ranunculus szowitsianus* Boiss. - գ. Ակնաղբյուր, 20.04.2008թ.:

104*. *Puccinia violae* (Schumach.) DC. - *Viola alba* Bess. - գ. Ջրաղացներ, 22.07.2005թ.; գ. Ակնաղբյուր, 23.07.2005թ., 25.04.2007թ.; *V. somchetica* C. Koch. - գ. Ակնաղբյուր, 15/23.07.2005թ.; գ. Սարգսաշեն, 18.07.2005թ.; գ. Կարմիր շուկա, 25.07.2005թ.; գ. Ավետարանց, 10.08.2005թ.; գ. Սարուշեն, 20.04.2006թ.:

Սպերմագոնիումները տեղակայված են տերևների երկու մակերեսներին, ցողունների և ընձյուղների վրա, փոքր խիտ խմբերով, 70-100 (130) մկմ տրամագծով, մեղրադեղնագույն:

Եղիումները նոյնպես տերևների երկու մակերեսներին են, ցողունների և ընձյուղների վրա, տարածև խմբերով, առաջացնում են վարակված օրգանների հիպերտրոֆիա: Պերիդիումը բաժականան է, կտրտված, եւս ծալված, գորշագույն դեղին ծայրով: Պերիդիումի բջիջները պարզ երկարավուն շարքեր են կազմում, արտարին թաղանթը 5-10 մկմ հաստությամբ, լայնակի զոլավոր, ներքին պատը՝ 3-4 մկմ հաստությամբ, գորտնուկավոր: Եղիուպորները բութ բազմանկյուն են, էլիպսոիդալ կամ կլորավուն, 16-26 x 14-20 մկմ, բաց դեղնավունից մինչև դեղնանարնջագույն, թաղանթը 1-1,5 մկմ հաստությամբ, թափանցիկ, խիտ գորտնուկավոր:

Ուրեղինիումները տերևների երկու մակերեսներին են, հիմնականում ստորին մասում, ցրված են կամ հաճախ դասավորված խիտ խմբերով, կլորավուն կամ օվալաձև են, 0,2-0,8 մմ երկարությամբ, գորշ դարչնագույն, շուտ պատռվում են: Ուրեղինիուպորները կլորավուն են կամ էլիպսոիդալ, 20-30 x 18-28 մկմ, թաղանթը 2-3 մկմ հաստությամբ, գորշագույն դեղին, մազմզուկներով, 2-3 ծակոտիներով:

Տելիումները նման են ուրեղինիումներին, բայց շականակագույն գունավորությամբ: Տելիուպորները սովորաբար լայն էլիպսոիդալ են, կլոր կամ երկարաձգված: Սպորները ծայրերում կլորավուն են, ունեն միջնապատ, թաղանթը՝ 1-3 մկմ հաստությամբ, թեթևակի հաստացած զագաթային մասում, մուգ դարչնագույն, սովորաբար լուսային մանրադիտակով թույլ նկատելի, գորտնուկավոր, վերջիններս երբեմն խոշոր են և ավելի նկատելի: Ծակոտկին վերին բջջում տեղակայված է զագաթային մասում, կամ թեթևակի թեքված ներքին, ստորին բջջի ծակոտին տեղակայված է միջնապատի տակ, ոտիկը կարծ է, անգույն և փխրուն:

Տարածվածությունը. *Վիոլա ալբա* և *V. somcheticia* տեսակների վրա Մարտունու և Ասկերանի շրջանների որոշ գյուղերում:

Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Դարաբաղում հաճախ հանդիպող տեսակ է: Դարաբաղում հայտնաբերվել են ուրեղինիումները և տելիումները:

**105. *Puccinia wolgensis* Navashin - *Stipa caspita* C. Koch - syn.
S. szovistiana Trin. - ԼՂԻՄ; ք. Հադրութ, 4.08.1932թ. (ՅԼՅԱՆԻՇԵՎ, 1960):**

**106*. *Puccinia xanthii* Schwein. - *Xanthium strumarium* L. - գ.
Սարգսաշեն, 11.05.2005թ.; գ. Ակնաղբյուր, 25.08.2005թ.; գ. Ավետարանց, 5.10.2005թ.; Կարմիր գյուղ, 12.10.2005թ.:**

Զարգանում են միայն տելիումներ, որոնք տեղակայված են տերևների ստորին մակերեսներին, դեղին կամ մուգ գորշավուն կետերի վրա: Ախտահարված տերևակորունների և ցողունների վրա առաջացնում են փրփածություն և ձևափոխություն, խոշոր են: Տելիոսպորները երկարաձգված են գավազանաձև, վերին մասում կլորացած կամ հաճախ շատ ուժեղ ձգված և բութ սրացած, հիմքում սեղմվում են, առաջացնում ոտիկ, միջնապատը թույլ նկատելի է, թաղանթը հարթ, վերին մասում՝ խիստ (մինչև 10 մմ) հաստացած, սպորները դեղնադարչնագույն են, չափերը 38-55 x 22-25 մմ: Ոտիկը ամուր է, գունատ գորշավուն, կարճ: Տելիոսպորների միջև կան գորշ պարաֆիզներ: Հանդիպում են նաև մեզոսպորներ: Հայաստանի միկրոբիոտայում համարվում է հազվագյուտ տեսակ, ԼՂՀ-ում այն ունի ավելի լայն տարածվածություն:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Xanthium strumarium* (հավելված, նկ. 3) տեսակի վրա Ասկերանի և Մարտունու շրջանների որոշ գյուղերում:

Սունկը միատեր է, ոչ լրիվ զարգացման ցիկլով:

**107. *Puccinia ziziphorae* Syd. - *Ziziphora rigida* (Boiss.) Stapf - syn.
Z. fasciculate C. Koch - ԼՂԻՄ, 6.07.1932թ. (ՅԼՅԱՆԻՇԵՎ, 1962):**

Ցեղ - *Uromyces*

108. *Uromyces anthyllidis* (Grev.) J. Schroet. - *Hedysarum formosum* F. et M. - ք. Կովսական (Ջանգելան), 29.05.1937թ.; *H. rarum* W. - ք. Կովսական, 29.05.1937թ. (ՅԼՅԱՆԻՇԵՎ, 1959):

109*. *Uromyces appendiculatus* (Pers.) Unger - *Phaseolus vulgaris* L. - գ. Գիշի, 10.08.2005թ.; գ. Խնապատ, 20.08.2005թ.; գ. Ազներ, 5.09.2005թ.; գ. Խրամոր, 5.09.2005թ.; ք. Սուեփանակերտ, 16.10.2005թ.; գ. Շոշ, 20.10.2005թ.; գ. Ավետարանց, 20.10.2005թ.; գ. Մոխչմիատ, 20.10.2005թ.; գ. Ակնաղբյուր, 28.10.2005թ.; գ. Հաղորտի, 3.11.2005թ.; գ. Սարուշեն, 6.11.2005թ.; գ. Խնածախ, 9.11.2005թ.; գ. Խանցք, 25.11.2005թ.; գ. Սարգսաշեն, 22.07.2005թ., 20.10.2006թ.:

Սպերմագոնիումները, էցիումները, ուրեղինիումները և տելիումները զարգանում են լոբու վրա: Սպերմագոնիումները տեղակայված են տերևների վերին մակերեսներին, նստած փոքր խմբերով, գնդած են, պարաֆիզներով, հերձանցքների շուրջը կուտակված:

Եցիումները խմբերով են, գնդած կամ երկարավուն, ուղղուցիկ, ցցուն կետերով, գլանած, բաժակած, սպիտակավուն ճեղքված ծայրերով: Հիմնականում ձևավորվում են շաքիլային տերևների վրա: Եցիուպորները բազմանկյուն են, անգույն, գորտնուկավոր թաղանթով:

Ուրեղինիումները տերևների երկու մակերեսներին են, շատ փոքր, կլորավուն, բաց գորշավուն, հավասարաչափ տարածված կամ շրջանած խմբավորված, փոշու նման ծածկով: Ուրեղինիուպորները կլոր են կամ լայն էլիպսոիդալ, բաց գորշավուն, թաղանթը՝ մազգուկներով: Տելիումները նման են ուրեղիումներին, բայց մուգ դարչնագույն, թաղանթը հարթ է կամ երբեմն գորտնուկավոր:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում նշված սնկով վարակված լոբու բույսեր գարնանը չեն հայտնաբերվել: Վաղ գարնանը ցանված բույսերը գրեթե չեն վարակվուն ժանգասնկով, նույնիսկ մինչև չորանալը: Չնայած Ակնաղբյուր գյուղում նկատվել են մի քանի վարակման շրջաններ վաղ ցանված լոբու բույսերի վրա, բայց վարակը համատարած բնույթ չի կրել: Անշան վերջին ամիսներին ցանած լոբու բույսերի վրա աշնան ամիսներին՝ հոկտեմբերին, նոյեմբերին լոբու ժանգասնկի վարակը շատ տարածվել է և կարելի է ասել համատարած բնույթ է ստացել: Վարակվել են ոչ միայն տերևները, այլ նաև ցողունը, երբեմն էլ լոբու պատիճները: Ժանգասնկի արագ տարածումը հանգեցրել է տերևների գունաթափման և արագ թափման: Ակնաղբյուր գյուղում նկատվել է լոբու ուշ ցանած ցանքատարածությունների գրեթե համատարած վարակ և բերքի մասնակի կորուստ:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Phaseolus vulgaris* տեսակի վրա Ասկերանի, Սարտունու շրջանների որոշ գյուղերում և Ստեփանակերտ թաղաքում:

Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով:

ԼՂՀ տարածքում հայտնաբերվել են միայն ուրեղինիումները և տելիումները:

110*. *Uromyces coronillae - variae* Vienn. - Bourg. - *Coronilla varia* L. - գ.Կարմիր շուկա, 28.07.2005թ.; գ. Հաղործի, 5.08.2005թ.:

Սպերմագոնիումները և էցիումները հայտնի չեն:

Ուրեղինիումները տեղակայված են տերևների երկու մակերեսներին՝ ցրված կամ փոքր խմբերով, դարչնագույն են, էպիֆերմիսի պատռվելուց հետո փոշիանում են: Ուրեղինիոսպորները գնդաձև են կամ օվալաձև, բայց դարչնագույն:

Տելիումները ուրեղոսպորների նման են, բայց մուգ գորշագույն: Տելիոսպորները գնդաձև են էլիպսոիդալ, թաղանթը՝ դեղին դարչնագույն, ոտիկը՝ կարճ, անգույն և փիխուն:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Coronilla varia* տեսակի վրա Մարտունու շրջանի Հաղորտի և Կարմիր շուկա գյուղերում:

Սունկը միատեր է, *Hemi-* զարգացման ձևով: Սնկի տարածվածությունը համատարած բնույթ չի կրում: Ղարաբաղում հայտնաբերվել են ուրեղինիումները և տելիումները:

111. *Uromyces dianthi* (Pers.) Niessl - syn. *Uromyces caryophyllinus* (Schrank) G. Winter - *Dianthus sp.* - ք. Ստեփանակերտ, 10.02.2006թ.; *D. crinitus* Sm. - ք. Կովսալյան (Զանգելյան), 28.07.1926թ.; *D. preobrashenskii* Klok. - ք. Ջերբայիլ, 25.07.1906թ.; *Gypsophila degans* M.R. - ք. Ջերբայիլ, 25.07.1906թ. (Յլյանիշև, 1959):

112. *Uromyces euphorbiae-corniculati* Jordi - syn. *Uromyces proeminens* (DC.) Lev. - *Lotus caucasicus* Kupr. - ԼՂԻՄ, 18.06.1929թ. (Յլյանիշև, 1959):

113. *Uromyces euphorbiae* Cooke et Peck - *Euphorbia chaetoceras* L. - ԼՂԻՄ, 08.1936թ. (Յլյանիշև, 1959); *E. helioscopia* L. - գ. Ավետարանց, 16.10.2005թ.:

114*. *Uromyces fallens* (Desm.) F. Kern. et Barth - *Trifolium pratense* L. - գ. Ակնաբյուր, 22.07.2005թ.; գ. Ավետարանց, 25.07.2005թ.; գ. Կարմիր գյուղ, 23.08.2005թ.; գ. Նինգի, 14.12.2005թ.; գ. Հաղորտի, 28.07.2007թ.:

Սպերմագոնիումները տերևների երկու մակերեսներին են, հաճախ էցիումների միջև, ցրված կամ խմբերով, կլորավուն, 100-125 մկմ տրամագծով, բայց դեղնավուն կամ ոսկեգույն:

Եցիումները տերևների ստորին մակերեսներին են, 240-260 մկմ լայնությամբ և 160-240 մկմ բարձրությամբ, գորշ դեղնավուն: Պերիդիումը բաժականման է, անկանոն պատռված և ետ ծալված ծայրով: Պերիդիումի բջիջներն անկանոն վեցանկյան տեսք ունեն, 24-32 x 24-26 մկմ, արտաքին թաղանթը 4-7 մկմ հաստությամբ, լայնակի զոլավոր, ներքին պատը 2-3 մկմ հաստությամբ, գորտնուկավոր: Եցիոսպորները գնդաձև են, էլիպսոիդալ կամ կլորավուն

բազմանկյան նման, 17-26 x 16-22 մկմ, թաղանթը մոտ 1 մկմ հաստություն ունի, անգույն է, գորտնուկավոր:

Ուրեղինիումները տերևների ստորին մակերեսներին են, ինչպես նաև ընձյուղների և ցողունների վրա, ցրված, միախառնվող, կլորավուն կամ էլիպսուիդալ, 0,5-1 մմ երկարությամբ, շրջապատված կտրտված էպիթերմիսով, փոշիացող, բաց գորշագույն: Ուրեղինիոսպորները գնդածն են կամ էլիպսուիդալ, 19-30 x 17-26 մկմ: Թաղանթը 2-2,5 մկմ հաստությամբ, բաց գորշագույն, հազվադեպ մազմզուկներով պատված, 3-5 ցրված ծակոտիններով:

Տելիումները նման են ուրեղինիումներին, բայց մուգ գորշագույն են, սովորաբար սակավ և ուշ զարգացող: Տելիոսպորները գնդածն են կամ էլիպսուիդալ, 17-30 x 17-22 մկմ, զագաթային մասում կլորացած են, հիճքում՝ սեղմված, թաղանթը 1,5-2 մկմ հաստությամբ, բաց գորշագույն, հարթ և մեկական կամ շարքներով դասավորված գորտնուկներով, ծակոտինն եղային կամ թեթև կողքի թեքված, ոտիկը կարծ է, թափանցիկ, փետուն:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Trifolium pratense* (հավելված, նկ. 12) տեսակի վրա Ասկերանի և Մարտունու շրջանների որոշ գյուղերում:

Տեսակը մակրոցիկլիկ է և միատեր, Դարաբաղում հաճախ հանդիպող տեսակ է:

Հայտնաբերվել են ուրեղինիումները և տելիումները:

115*. *Uromyces heimerianus* Magnus - *Vicia cracca* L. - q. Ղարաղլաղ, 5.08.2007թ.; *V. sp.* - q. Հաղործի, 1.08.2008թ.; q. Գիշի, 20.10.2008թ.:

Սպերմագոնիումները, էցիումները հայտնի չեն, ուրեղինիումները և տելիումները զարգանում են *Vicia sp.* տեսակի վրա:

Ուրեղինիումները տերևների երկու մակերեսներին են, կլորավուն, հազվադեպ ցրված, փոքրիկ, ժանգաղարչնագույն: Ուրեղինիումները կլոր են կամ լայն էլիպսուիդալ, դեղին, թաղանթը մազմզուկներով պատված, 3-5 ծակոտիններով, 23-30 x 20-26 մկմ:

Տելիումները ուրեղինիումների նման են, բայց մուգ դարչնագույն: Տելիոսպորները երկար ծվածն են, զագաթառմ երբեմն սեղմված, բթացած, որոշներն անկյունածն են, սպորների վերին մասում թաղանթը շատ փոքրիկ գորտնուկներով է, 26-33 x 20-23 մկմ: Ոտիկը հաստ է, շատ կարծ:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Vicia cracca* և *V. sp.* տեր-բույսերի վրա Շուշիի և Մարտունու շրջաններում:

Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում հազվադեպ հանդիպող:

116. *Uromyces hippomarathri* Linder - *Bilacunaria caspia* (DC.)
M. Pimen. & V. Tichomirov - syn. *Hippomarathrum crispum* Koch p. -
ԼՂԻՄ, 5.07.1829թ. (Յևյանիշև, 1959):

117. *Uromyces inaequalitus* Lasch ex Rabenh. - *Silene ruprechtii*
B. Schischk. - ԼՂԻՄ, 6.08.1929թ. (Յևյանիշև, 1959):

118*. *Uromyces onobrychidis* (Desm.) Lev. - *Onobrychis cornuta*
(L.) Desv. - գ. Զանյարաղ, 1.08.2005թ.; գ. Ակնաղբյուր,
10.08.2005թ.; գ. Խնածախ, 14.10.2005թ.; գ. Ավետարանց,
16.10.2005թ.; գ. Նիմզի, 15.10.2005թ.; 28.10.2005թ.; 15.09.2005թ.;
գ. Սարգսաշեն, 20.10.2005թ.:

Սպերմագոնիումները և էցիումները հայտնի չեն:

Ուրեղինիումները և տելիումները զարգանում են *Onobrychis* և *Hedysarum* ցեղերի ներկայացուցիչների վրա: Ուրեղինիումները հիմնականում տերևների ստորին մակերեսներին են, մուգ դարչնագույն, շատ փոքր, կլորավուն, բազմաքանակ կամ հազվադեպ անկանոն ցրված: Ուրեղինիուսպորները կլորավուն են կամ էլիպստիդալ, գորշագույն, թալանթը՝ գորտնուկավոր, 3 ծակոտիներով, 18-24 x 15-18 մկմ:

Տելիումները համապատասխանում են ուրեղինիումներին, բայց սև գունավորությամբ: Տելիումներն էլիպստիդալ են, գորշագույն, թալանթը նույր է, հազվ նկատելի գորտնուկներով, 20-24 x 16-20 մկմ: Ոտիկը գրեթե անգույն է, կարճ:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Onobrychis cornuta* տեսակի վրա Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի շրջանների որոշ գյուղերում:

Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում տարածված տեսակ է, հայտնաբերվել են ուրեղինիումները և տելիումները:

119. *Uromyces pisi* (DC.) G.H. Otth - *Lathyrus tuberosus* L. - գ. Ղարաղլաղ, 5.08.2005թ.; գ. Ակնաղբյուր, 25.10.2007թ.; *Pisum elatius* M.B. - Վարանդա (Ֆիզուլի), 16.06.1937թ. (Յևյանիշև, 1959):

120. *Uromyces polygoni aviculaiae* (Pers.) P. Karst. -
Polygonum aviculare L. - գ. Ակնաղբյուր, 16.07.2005թ.; գ. Բաղարա,
10.08.2006թ.; *P. patulum* M.B. - ք. Մարտակերտ, 24.05.1953թ.
(Յևյանիշև, 1959):

121. *Uromyces punctatus* J. Schroet. - *Astragalus borissovae* A.
Grossh. - գ. Ակնաղբյուր, 20.08.2005թ.; *A. cicer* L. - ԼՂԻՄ, 20.06.1929թ.;

A. finitimus Bge - Զեբրայիլ, 4.07.1932թ.; *A. karabaghensis* Bge - Վարանդա (Ֆիզովի), 7.06.1932թ. (Մայնաշև, 1959):

122*. *Uromyces rumicis* (Schumach.) G. Winter - *Rumex crispus* L. - գ. Ակնաղբյուր, 25.07.2008թ.; R. sp. - գ. Ակնաղբյուր, 23.07.2005թ.; գ. Հաղորտի, 5.08.2005թ.; գ. Հարավ, 28.07.2007թ.; գ. Վ. Հոռաքաղ, 26.07.2008թ.:

Ուրեղինիումները տերևների ստորին մակերեսներին են, ցրված, հազվադեպ խիտ շրջանաձև դասավորված դեղին բժերի վրա, 0,2-1 մմ տրամագծով, գորշագույն դարչնագույն: Ուրեղինիումները գնդաձև են կամ էլիպսոիդալ, 20-33 x 17-25 մկմ, թաղանթը 1,5-2 մկմ հաստությամբ, հազվադեպ մազմզուկներով, 2 կամ 3 ծակոտիններով, որոնք անկանոն դասավորված են վերին սպորների վրա և ծածկված են հարթ փականով:

Տեղիումները նման են ուրեղինիումներին, բայց մուգ գորշագույն գունավորությամբ: Տեղիուսպորները գրեթե գնդաձև են, օվալաձև, էլիպսոիդալ կամ տանձաձև, 17-32 x 17-24 մկմ, թաղանթը հավասարապես հաստացած է, գորշագույն, հարթ, գագաթային մասուն կամ էլ քիչ կողքի թերված ծակոտինով, անգույն կիսաշրջանաձև, ոտիկը կարճ է, թափանցիկ և փիլրուն:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Rumex crispus* և *R. sp.* տեսակների վրա Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի շրջանների որոշ գյուղերում:

Հայտնի են միայն ուրեղինիումները և տելիումները:

Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում տարածված տեսակ է, հայտնաբերվել են միայն տելիումները:

123. *Uromyces scillarum* J. Schroet. - *Muscari szovitsianum* Baker - ԼՂԻՄ, 18.06.1936թ. (Մայնաշև, 1959):

124. *Uromyces striatus* J. Schroet. - *Medicago tribuloides* Desr. - թ. Կովսական (Ձանգելան), 8.06.1937թ. (Մայնաշև, 1959); գ. Հաղորտի, 5.08.2005թ.; գ. Ավետարանց, 16.10.2005թ.; գ. Ակնաղբյուր, 1.08.2006թ.; *M. rigidula* (L.) Dsr. - թ. Կովսական, 27.05.1937թ.; *M. polychroa* A. Grossh. - ԼՂԻՄ, 12.08.1935թ. (Մայնաշև, 1959):

125. *Uromyces trifolii-repentis* (Cast.) Liro - *Trifolium repens* L. - գ. Ակնաղբյուր, 30.07.2005թ.; *T. tunes* Stev. - ԼՂԻՄ, 2.07.1937թ. (Մայնաշև, 1959):

126*. *Uromyces thapsi* (Opiz.) Bubak - *Verbascum thapsus* L. - գ. Հաղորտի, 1/5.08.2006թ.; Սամնա, 18.08.2005թ.; գ. Կոլխոզաշեն, 27.08.2006թ.:

Սպերմագոնիումները տեղակայված են տերևների երկու մակերեսներին, տարածված էցիումների միջև, գնդածն, դեղնամեղ-րագույն:

Էցիումները նույնպես տերևների երկու մակերեսներին են՝ հիմնականում ստորին, խմբերով են, օվալաձև կամ անկայուն ձևով՝ ընկղմված հյուսվածքների մեջ, պերիդիումն ունի ուղիղ բարձրացված ժայր: Էցիուսպորները գնդածն բազմանկյուն են, օվալաձև, երկարածզված, $18-26 \times 14-22$ մկմ չափերով, թաղանթը՝ $1-1,5$ մկմ հաստությամբ, մանր գորտնուկավոր, բաց դեղնավուն կամ անգույն:

Ուրեղինիոսպորները հայտնի չեն:

Տելիումները տերևների ստորին մակերեսներին են, հաճախ էցիումների հետ մեկտեղ, փոքր են, ցրված, սկզբում ծածկված էպիդերմիսով, ավելի ուշ փոշիացող և սև գունավորությամբ: Տելիուսպորները տարրածն են, հաճախ օվալաձև, էլիպտիկալ, հազվադեպ գնդածն, $18-20 \times 14-18$ մկմ չափերով, գագաթում կլորավուն կամ ձգված, կոնաձև բթացումներով, հազվադեպ կտրտված կամ երկատված, հիմքում սեղմված, թաղանթը $1,5-2$ մկմ հաստությամբ, ոտիկը մինչև 4 մկմ երկարությամբ, անգույն և ամուր:

Տարածվածությունը. Հայտնաբերվել են *Verbascum thapsus* տեսակի վրա Մարտունու շրջանի որոշ գյուղերում:

Նշված սունկը Դարաբաղում խիստ հազվադեպ հանդիպող տեսակ է: Վարակված օջախներ սպերմագոնիալ և էցիալ փուլերով հայտնաբերվել են 2005-06 թթ.:

Սունկը միատեր է՝ ոչ լրիվ զարգացման ցիկլով:

127*. *Uromyces viciae-fabae* (Pers.) J. Schroet. - *Lathyrus sp.* - գ.

Ալենաղբյուր, 20.08.2005թ.:

Սպերմագոնիումները տերևների երկու մակերեսներին են, կիսագնդածն կամ գավաթանման, ցրված կամ խմբերով, հաճախ էցիումների միջև, $50-68$ մկմ բարձրությամբ, $110-150$ մկմ լայնությամբ, բաց դեղնավուն գունավորությամբ:

Էցիումները նույնպես տերևների երկու մակերեսներին են, սովորաբեր ստորին, ցրված են, փոքր խմբերով շրջանածն դասավորված կամ երկարացված խմբերով, $1-1,8$ մմ տրամագծով, կլորավուն են, $0,3-0,8$ մմ տրամագծով, դեղնագույն: Պերիդիումը կարծ բաժակածն է, սպիտակավուն, ետ ծալված, կտրտված ժայրերով: Պերիդիումի բջջները երկար շեղանկյան տեսքի են, $24-32$ մկմ երկարությամբ, արտաքին թաղանթը $6-9$ մկմ հաս-

տությամբ, ներքին թաղանթը՝ 2-4 մկմ հաստությամբ, գորտնուկավոր:

Եցիոսպորները կլորավուն են, ծվածև կամ էլիպսուիդալ, 21-27 x 17-24 մկմ, թաղանթը 1-1,8 մկմ հաստությամբ, գորտնուկավոր:

Ուրեղինիումները տերևների երկու մակերեսներին են, ընձյուղների և ցողունների վրա, տերևների վրա փոքր են, կլորավուն կամ երկարաձգված, 0,3-1,2 մմ երկարությամբ, ցողունների վրա՝ մինչև 2 մմ երկարությամբ, ցրված, չունեն պարաֆիզներ: Ուրեղինիոսպորները գնդած են, օվալած կամ էլիպսուիդալ, 20-34 x 17-26 մկմ, թաղանթը 1-2 մկմ հաստությամբ, երբեմն մազմղուկներով, 3-5 ցրված ծակոտիններով, բաց դեղնավուն են կամ մեղրադեղնագույն:

Տելիումները նման են ուրեղինիումներին, միայն տարբերվում են գունավորությամբ, գորշագույնից մինչև սև գույնի: Տելիոսպորները գրեթե գնդած են, ծվածև կամ էլիպսուիդալ, 22-44 x 16-30 մկմ, գագաթային մասում՝ կլորացած մինչև 12 մկմ և ավելի հաստությամբ, մուգ գունավորության են, ոտիկը մինչև 105 մկմ երկարության է, բաց գորշագույն կամ դեղին, ամուր է:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Lathyrus* sp. տեսակի վրա Ակնաղբյուր գյուղում 2005թ.:

Սունկը միատեր է՝ լրիվ զարգացման ցիկլով, Ղարաբաղում հազվադեպ հանդիպող տեսակ է՝ հայտնաբերվել են ուրեղինիումները և տելիումները:

Անամորֆ ձևեր

Ցեղ - *Aecidium*

128*. *Aecidium euphorbiae* J.F. Gmel. - *Euphorbia* sp. - գ. Հաղործի, 28.08.2005թ.:

Սպերմագոնիումները և էցիումները զարգանում են *Euphorbiaceae* ընտանիքի ներկայացուցիչների վրա: Սպերմագոնիումները փոքր են, դարչնագույն, տեղակայված տերևների ստորին մակերեսներին էցիումների միջև: Էցիումները գտնվում են տերևների ստորին քայլացած մակերեսներին և ծածկում են այն ամբողջությամբ: Ախտահարված տերևները ձևախախտվում են, դառնում փոքր, օվալածև և ցողունին սեղմված: Վարակված բույսերը չեն ծաղկում: Էցիումները բաժակած են, նարնջագույն, սպիտակավուն, պերիդիումի ձգված ծայրով: Պերիդիումի բջիջները շեղանկյունած են, դրանց արտաքին պատը հաստացած է, փոքր կետիկներով, ներքին պատը նուրբ է, պատված մազմղուկներով:

Եցիոսպորները բազմանկյուն են կամ էլիպսոիդալ, դեղնանարն-ջագոյն, նույնպես գորտնուկավոր թաղանթով, $20-30 \times 20-25$ մկմ:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Euphorbia sp.* տեսակի վրա Մարտունու շրջանի Հաղործի գյուղում 2005թ.:

Սունկը Ղարաբաղում հազվագյուտ տեսակ է:

129*. *Aecidium primulinum Azbukina - Primula sp.* - գ. Վանք, 20.09.2005թ.:

Սորուսները փխրուն խմբերով են, զարգանում են դեղին կետրում, թիզ խտացած են: Պերիդիումը բաժականման է, ուղիղ ատամիկներով և սպիտակավոր ծայրերով: Պերիդիումի թշիջները երկարավուն են, ուղանկյան կամ երկարավուն վեցանկյան տեսքի, արտաքին թաղանթը կետագծերով է, ներքին թաղանթը՝ խիտ գորտնուկավոր: Սպորները գրեթե գնդաձև են, օվալաձև, հազվադեպ՝ երկարավուն կամ լայն էլիպսոիդալ, $13-17 \times 13-15$ մկմ չափերով, գրեթե անգույն, թաղանթը մոտ 1 մկմ հաստությամբ, անգույն, խիտ և մազմզուկներով պատված:

Տարածվածությունը. Հայտնաբերվել է *Primula sp.* տեսակի վրա միայն մեկ անգամ 2005թ. աշնանը ԼՂՀ Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտակա անտառից:

Սունկը Ղարաբաղում շատ հազվագյուտ տեսակ է:

Ցեղ Milesia

130. *Milesia feurichii* (Magnus) Faull - *Asplenium septentrionale* (L.) Hoffm. - ԼՂԻՄ, 28.06.1937թ. (Սլեյնիաց, 1959):

Այսպիսով՝ ԼՂՀ-ում հայտնաբերվել է 130 տեսակի ժամանակներ՝ ընդգրկված 6 ընտանիքների 10 ցեղերում, որոնցից 83 տեսակը պատկանում են *Puccinia*, 20-ը՝ *Uromyces*, 8-ը՝ *Phragmidium*, 6-ը՝ *Melampsora*, 6-ը՝ *Gymnosporangium*, երկուական՝ *Pucciniastrum*, *Aecidium*, և մեկական՝ *Tranzschelia*, *Coleosporium*, *Milesia* ցեղերին:

Հայտնաբերված ժամանակներից 44-ը նոր տեսակներ են: Դրանցից 24-ը պատկանում են *Puccinia*, 8-ը՝ *Uromyces*, 4-ը՝ *Phragmidium*, 3-ը՝ *Melampsora*, երկուական՝ *Gymnosporangium*, *Aecidium* և մեկը՝ *Tranzschelia* ցեղերին:

???

1. Հայտնաբերվել և նոյնականացվել են 217 տեսակի տեր-բույսերի վրա մակարությող 130 ժամանականկերի ներկայացուցիչներ ընդգրկված 6 ընտանիքների 10 ցեղերում: Դրանցից 83-ը պատկանում են *Puccinia*, 20-ը՝ *Uromyces*, 8-ը՝ *Phragmidium*, 6-ը՝ *Melampsora*, 6-ը՝ *Gymnosporangium*, երկուական՝ *Pucciniastrum*, *Aecidium* և մեկական՝ *Coleosporium*, *Milesia*, *Tranzschelia* ցեղերին: Հայտնաբերված տեսակներից 44-ը լՂՀ միկրոֆլորայի համար առաջին անգամ են նկարագրվում: Դրանցից 24-ը պատկանում են *Puccinia*, 8-ը՝ *Uromyces*, 4-ը՝ *Phragmidium*, 3-ը՝ *Melampsora*, երկուական՝ *Gymnosporangium*, *Aecidium* և մեկը՝ *Tranzschelia* ցեղերին:

2. Ամստահարված 217 տեր-բույսերի տեսակներն ընդգրկված են 37 ընտանիքներում, մասնավորապես Asteraceae (34 տեսակ), Rosaceae (32), Poaceae (29), Fabaceae (21), Polygonaceae (12), Lamiaceae (10), Apiaceae (9) և այլս: Տեր-բույսերից 136 տեսակներն ախտահարվել են *Puccinia*, 34-ը՝ *Uromyces*, 17-ը՝ *Phragmidium*, 12-ը՝ *Gymnosporangium*, 6-ը՝ *Melampsora*, 5-ը՝ *Coleosporium*, երկուական՝ *Pucciniastrum*, *Tranzschelia*, *Aecidium* և 1-ը՝ *Milesia* ցեղերին պատկանող սմելեռով:

3. Խնձավորելով ժանգասնկերն ըստ տեր-բույսերի բացահայտվել է, որ ուսումնասիրվող տարածքում հայտնաբերված 84 տեսակները (64,6 %) միատեր են, իսկ 46-ը (35,4 %) տարատեր:

4. Ուսումնասիրելով ժանգասնկերի կենսացիկի զարգացման առանձնահատկությունները, պարզվել է, որ 130 տեսակի սմելերից 80-ը զարգանում են Eu-, 10-ը՝ Brachy-, 16-ը՝ Hemis-, 9-ը՝ -Oopsis և 12-ը՝ Micro- կենսացիկերով:

5. Բացահայտվել է, որ ժանգասնկերով ախտահարվել են Վայրի բույսերի 193 և մշակովի կուլտուրաների 24 տեսակներ: Վայրի աճող բույսերից առավել ախտահարվել են խոտաքրուսերը (172 տեսակ), այնուհետև թիերը (19) և ծառերը (2), իսկ մշակովի կուլտուրաներից խոտաքրուսերը (9), թիերը (10) և ծառերը (5): Տնտեսական նշանակության 94 տեսակի վարակված տեր-բույսերից 57-ը դեղաբույսեր են, 21-ը՝ ուտելի, 6-ը՝ կերային, իսկ 10-ը՝ դեկորատիվ:

6. Պարզվել է, որ ժանգասնկերի տարածվածությունն առավել մեծ է Ասկերանի, այնուհետև Մարտունու, Շահումյանի, Մարտակերտի, Շուշիի, Քաշարայի և Հաղբուրք շրջաններում: Բացառությամբ Մարտունու շրջանի, տեսակային կազմով հարուստ է *Puccinia* ցեղը, մինչդեռ Ասկերանի և Շուշիի շրջաններում տեսակային կազմով երկրորդ տեղում է *Uromyces*, իսկ Մարտակերտում՝ *Phragmidium* ցեղերը: Սյուս ցեղերից հայտնաբերվել են քիչ թվով տեսակներ:

7. ԼՂՀ և ՀՀ ժանգասնկերի տեսակային կազմի համեմատական վերլուծությունից բացահայտվել է, որ ընդհանրության գործակիցը կազմել է 38,62%: Համեմատական վերլուծությունը ցույց է տվել որակական և քանակական տարրերություններ: ԼՂՀ տարածքում հայտնաբերված 130 տեսակի ժանգասնկերից 18-ը և 217 ախտահարված տեր-բույսերից 86-ը ՀՀ միկրոֆլորայում առ այսօր չեն նշվել:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արրահամյան Զ.Հ., Նանագյուղան Ս.Գ., Ամիրյան Ա.Ա. Ֆիտոպաթոլոգիա, Երևան. - 2004. - 58 էջ:
2. Ամիրջանյան Թ.Ի., Արզունամյան Վ.Ա. Լեռնային Ղարաբաղի աշխարհագրություն. Ստեփանակերտ. «Մաշտոց». - 1994. - 110 էջ:
3. Մնացականյան Բ.Պ., Արաքելյան Յու.Ա. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և հարակից տարածքների ջրագրական և ջրային հաշվեկշիռ, Երևան. - 2005. - 191 էջ:
4. Մարգարյան Գ.Գ. Լեռնային Ղարաբաղում հանդիպող ժանգասնկերի զարգացման առանձնահատկությունները // ԱրՊՀ Գիտական տեղեկագիր. - 1 (14). - Ստեփանակերտ. - 2007. - էջ 68 - 70:
5. Մարգարյան Գ.Գ. Անվիտ տեղեկություններ ԼՂՀ - ում տարածված ժանգասնկերի մասին // ԱրՊՀ գիտական ընթերցումների գեկուցումների հիմնադրույթներ. - Ստեփանակերտ. Չանգակ - 97. - 2009 ա. - էջ 84 - 85:
6. Մարգարյան Գ.Գ. ժանգասնկերով ախտահարված բույսերի տարածվածությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում // ԱրՊՀ Գիտական տեղեկագիր. - Ստեփանակերտ. - 2009 թ. - 2 (20). - էջ 42 - 46:
7. Մարգարյան Գ.Գ. ԼՂՀ-ում ժանգասնկերով ախտահարված տեր - բույսերի խմբավորումն ըստ տնտեսական նշանակության // Սիցազգային գիտաժողով, նվիրված ԼՂՀ և ՀՀ անկախության հռչակման 20-րդ տարեդարձին, Մերուս Մաշտոց Համալսարան. - Երևան. - 2011. - էջ 649 - 655:
8. Մելքոնյան Ս.Ս. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն // Երևան. «Լուս» պետական հրատարակչություն. - 1994. - 445 էջ:
